

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՀԱՅԿ ԱԼՈՒՄՅԱՆ



The statements and analysis contained herein are the work conducted in the frames of the American Bar Association's Rule of Law Initiative. The statements and analysis expressed are solely those of the authors, and have not been approved by the House of Delegates or the Board of Governors of the American Bar Association and do not represent the position or policy of the American Bar Association. Furthermore, nothing in this report is to be considered rendering legal advice for specific cases. This study is made possible by the generous support of the American people through the United States Agency for International Development (USAID). The contents are the responsibility of the American Bar Association's Rule of Law Initiative and do not necessarily reflect the views of USAID or the United States Government.

Սույն դիտարկումները և վերլուծությունները հանդիսանում են Ամերիկյան իրավաբանների ընկերակցության, Իրավունքի գերակայության նախաձեռնություն ծրագրի սահմաններում իրականացված աշխատանք: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Ամերիկյան իրավաբանների ընկերակցության պատվիրակների պալատի և կառավարիչների խորհրդի կողմից, ուստի և՛ չեն ներկայացնում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության դիրքորոշումներն ու տեսակետները: Ի լրումն, սույն զեկույցի որևէ մաս չպե՛տք է ընկալել որպես առանձին գործերի առնչությամբ տրամադրվող իրավական խորհրդատվություն: Սույն ուսումնասիրությունը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի առատաձեռն օժանդակության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության միջոցով: Նյութի բովանդակության համար պատասխանատու է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության, Իրավունքի գերակայության նախաձեռնություն ծրագիրը: Նյութի բովանդակությունը կարող է չհամընկնել ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

Բովանդակություն

Նախաբան	5
Սկիզբ.	6
Մաս 1. Կարճ ակնարկ փաստաբանի մասնագիտության, ՀՀ փաստաբանների պալատի կազմի, դրա մարմինների գործառույթների մասին, Որոշ տվյալներ փաստաբանի վարքագծի կանոնների մասին, կարգապահական վարույթի առանձնահատկությունները	6
Մաս 2. Փաստաբանական գործունեության ոլորտների, փաստաբանի հիմնական իրավունքների մասին.....	12
2. Անձի նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելիս նրա պաշտպանի մասնակցության առանձնահատկությունները.	14
Մաս 1. Ձերբալակում	14
Մաս 2. Որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու վերաբերյալ միջնորդության քննություն	16
Մաս 3. Դատավարական հարկադրանքի միջոցների բողոքարկում	20
3. Տուժողի ներկայացուցչությունը.	25
Մաս 1. Տուժողի, տուժողի իրավահաջորդի, քաղաքացիական հայցվորի ներկայացուցչի կարգավիճակի ստանձնումը, քաղաքացիական հայցի հարուցումը քրեական դատավարությունում.....	25
Մաս 2. Արագացված դատաքննության ընթացքում տուժող կողմի շահերի ներկայացման առանձնահատկությունները	28
Մաս 3. Մինչդատական վարույթում տուժողի իրավունքները խախտող որոշումների և գործողությունների բողոքարկումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կիրառության հետ կապված հարցեր	34
4. Ապացույցներ.....	38
Մաս 1. Ապացույցների նշանակությունը, Ապացույցների հավաքումը, Ապացույցների գնահատումը, Ապացուցումը	38
Մաս 2. Ապացույցների վերաբերելիությունը	41
Մաս 3. Ապացույցների թույլատրելիությունը	43
Մաս 4. Ապացույցների հավաստիությունը (արժանահավատությունը).....	48
5. Վարույթն առաջին աստիճանի դատարանում.	49
Մաս 1. Պաշտպանի գործողությունները՝ գործը դատարան ուղարկելուց հետո՝ մինչ դատական քննություն նշանակելու մասին որոշում կայացնելը.....	49

Մաս 2. Դատական նիստի նախապատրաստական մասում պաշտպանի գործողությունները.....	53
Մաս 3. Դատաքնություն.....	55
Մաս 4. Դատական վիճաբանություններ.....	63
6. Վարույթը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում.	65
Մաս 1. Վերաքննիչ բողոք կազմելու հետ կապված առանձնահատկությունները, Վարույթը վերաքննիչ դատարանում	65
Մաս 2. Վճռաբեկ բողոք կազմելու հետ կապված առանձնահատկությունները, Վարույթը վճռաբեկ դատարանում.....	71
7. Քրեական դատավարության ընթացքում խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանության մյուս մեխանիզմները.	78
Մաս 1. Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների մասին.....	78
Մաս 2. Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող դիմումների մասին	93

Նախաբան

Մույն ձեռնարկը մշակվել է փաստաբան Հայկ Ալումյանի կողմից Ամերիկյան Իրավաբանների Ընկերակցություն CEELI INC. Հայաստանյան ներկայացուցչության օժանդակությամբ: Այն նպատակ է հետապնդում իրավաբանություն ուսումնասիրող ուսանողներին ծանոթացնել փաստաբանի մասնագիտությանը, քրեական վարույթի ընթացքում նրա գործունեության առանձնահատկություններին և այն պրակտիկ հմտություններին, որոնց պետք է տիրապետի փաստաբանը իր վստահորդի նկատմամբ ստանձնած պարտականությունների կատարման նպատակով: Ձեռնարկը համապարփակ տեղեկատվություն է ներառում ինչպես փաստաբանի մասնագիտության, նրա տեղի և դերի, կարգապահական պատասխանատվության, այնպես էլ քրեական դատավարության տարբեր փուլերում փաստաբանի կողմից ձեռնարկվող անհրաժեշտ գործողությունների, պաշտպանական ռազմավարության և մարտավարության մշակման և այլ անհրաժեշտ փաստաբանական հմտությունների վերաբերյալ: Այն ներառում է նաև ուսուցանող խնդիրներ, վարժություններ, որոնք կամրապնդեն ստացված գիտելիքները, կօգնեն դրանց կիրառմանը պրակտիկայում: Գիրքը կարող է օգտակար լինել ինչպես իրավաբանություն ուսումնասիրող ուսանողների, այնպես էլ սկսնակ փաստաբանների և իրավաբանների համար:

Տիեզերքում գոյություն ունի կանոնակարգում՝ անփոփոխ մի օրենք, որը կառավարում է այն ամենն ինչ գոյություն ունի և ամեն մեկին, ով ապրում է: Դա կույր օրենք չէ, քանզի ոչ մի կույր օրենք չի կարող կառավարել կենդանի էակների վարքը:

Մահաթմա Գանդի

Սկիզբ.

Մաս 1. Կարճ ակնարկ փաստաբանի մասնագիտության, ՀՀ փաստաբանների պալատի կազմի, դրա մարմինների գործառույթների մասին,

Որոշ տվյալներ փաստաբանի վարքագծի կանոնների մասին, կարգապահական վարույթի առանձնահատկությունները

Փաստաբանի մասնագիտությունը վերջին տարիներին առավել բուռն զարգացող մասնագիտություններից մեկն է իրավաբանական ոլորտում: Գնալով ավելի ու ավելի շատ երիտասարդներ, իրավաբանի մասնագիտություն ընտրելիս, ի սկզբանե նպատակ են դնում դառնալու հենց փաստաբան, ի տարբերություն դեռևս 10-15 տարի առաջ գոյություն ունեցող այն ավանդույթի, երբ փաստաբան էին դառնում հիմնականում այն իրավաբանները, ում չէր հաջողվել ԲՈՒՀ-ն ավարտելուց հետո անցնել այլ աշխատանքի, կամ նրանք, ովքեր պետական մարմիններում (դատարան, դատախազություն, ոստիկանություն) աշխատանքից ազատվելուց, թոշակի անցնելուց հետո այլ զբաղմունք չէին գտնում: Փաստաբանության երկրորդական դերը, սկիզբ առնելով խորհրդային տարիներից, կարծես վերջնականապես արմատավորվել էր հասարակության մեջ, սակայն 1990-ականների վերջերից սկիզբ առած դատաիրավական բարեփոխումներն իրավաբանական որակյալ ծառայությունների մեծ պահանջարկ առաջացրեցին: Փաստաբանական ծառայությունների ոլորտի զարգացումը բերեց ինչպես ծառայությունների որակի բարձրացմանը, այնպես էլ ծառայությունների ոլորտի ընդլայնմանը: Այսօր արդեն փաստաբանական ծառայությունները ներառում են ոչ միայն դասական՝ իրավախորհրդատվությունը, քրեական, քաղաքացիական և վարչական դատավարությունների ընթացքում ծառայությունների մատուցումը, այլև անձանց շահերի ներկայացումը ՀՀ Սահմանադրական դատարանում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովում, Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեում, ներպետական ու միջազգային այլ ատյաններում: Որպես հետևանք, աճել է փաստաբանության նկատմամբ ինչպես հասարակության, այնպես էլ դատաիրավական համակարգի վստահությունը, դրա հետ մեկտեղ՝ մասնագիտությունը գրավիչ է դարձել այն երիտասարդների համար, ովքեր դեռևս գտնվում են իրենց ապագա մասնագիտությունն ընտրելու փուլում: Գնալով մեծանում է հոսքը ոստիկանությունից դեպի փաստաբանություն, ինչը նույնպես, հիմնականում, վերը նշված գործընթացների արդյունք է:

Ո՞վ է փաստաբանը, հասկացությունը սահմանված է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի՝ «Փաստաբան է այն անձը, որն ունի իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում և ստացել է համապատասխան արտոնագիր՝ փաստաբանական գործունեություն իրականացնելու համար:»:

Նույն օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է, որ արտոնագիրը տրվում է Փաստաբանների պալատի կողմից, իսկ այն ստանալու համար անձը պետք է անդամագրվի Փաստաբանների պալատի կազմում, ինչն իր հերթին տեղի է ունենում՝ որակավորման քննությունները հաջողությամբ հանձնելու և այդ մասին Պալատի որակավորման հանձնաժողովի կողմից տրված վկայագրի պատճենը Պալատ ներկայացնելու դեպքում: Որակավորման քննություններին մասնակցելու և վկայագիր ստանալու համար հավակնորդը պետք է հաջողությամբ ընդունվի և ավարտի Փաստաբանական դպրոցը:

Փաստաբանական դպրոցի գործառույթները սահմանված են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45²-րդ հոդվածով, ըստ որի՝ փաստաբանական դպրոցը կազմակերպում և անցկացնում է դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը, կազմակերպում է ունկնդիրների համար անցկացվող որակավորման քննությունները, կազմակերպում և անցկացնում է փաստաբանների մասնագիտական վերապատրաստումը, ինչպես նաև՝ իրականացնում է դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

Ինչպես հավանաբար նկատեցիք, իրենց գործունեության ընթացքում փաստաբաններն անցնում են մասնագիտական վերապատրաստում, ինչը՝ նույն օրենքի 19-րդ հոդվածի 4¹-րդ կետին համապատասխան, պարտադիր է: Այդ կետի, ինչպես նաև նույն հոդվածով փաստաբանի վրա դրված որևէ այլ պարտականության չկատարումը կարող է հանգեցնել կարգապահական տույժի: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ նշված օրենքի, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության: Տույժերի տեսակները թվարկված են նույն օրենքի 39⁹-րդ հոդվածի 1-ին մասում. դրանք են՝ նկատողությունը, խիստ նկատողությունը, լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը, տուգանքը, ինչպես նաև՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցումը:

Նույն օրենքի 39¹-րդ հոդվածում ասված է, որ կարգապահական վարույթ հարուցելու հիմք է փաստաբանի արարքի մեջ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը, իսկ առիթներն են՝ պետական, տեղական ինքնակառավարման և ոչ պետական մարմինների, ինչպես նաև այլ անձանց դիմումները (բողոքները), զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները, փաստաբանին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով Փաստաբանների պալատին դիմելու մասին դատարանի սանկցիան, փաստաբանի՝ սահմանված ժամկետում անդամավճար չվճարելու վերաբերյալ փաստաբանների պալատի հաշվապահի ներկայացրած տեղեկանքը, փաստաբանի՝ սահմանած ժամկետում վերապատրաստում չանցնելու վերաբերյալ

փաստաբանական դպրոցի տնօրենի ներկայացրած տեղեկանքը, հանրային պաշտպանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի միջնորդությունը: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314¹-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ պարբերությունը սահմանում է, որ դատարանի կողմից՝ փաստաբանին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով Փաստաբանական պալատ դիմելը պարտադիր հիմք է փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար¹, այսինքն՝ տվյալ դեպքում Պալատում չի քննարկվելու փաստաբանի արարքի մեջ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը: Կարգապահական վարույթը՝ առիթը ծագելուց հետո մեկ ամսվա ընթացքում հարուցում է Պալատի նախագահը՝ վարույթ հարուցելու հիմքի և առիթի առկայության դեպքում, ընդ որում, կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերվելուց հետո անցել է ավելի քան վեց ամիս, կամ՝ եթե խախտում կատարելու պահից անցել է ավելի քան մեկ տարի:

Փաստաբանի վարքագծի կանոնների խախտում կորոզ է դիտվել, մասնավորապես, փաստաբանի կողմից իր անկախությունը չպահպանելը՝ կողմնակի ազդեցությունների ենթարկվելը կամ անձնական հետաքրքրությունը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ վստահորդի գործի համար, փաստաբանի կողմից այնպիսի գործողություններ կատարելը, որոնցով կասկածի տակ դրվի նրա ազնվությունը, հեղինակությունն ու անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիությունը), փաստաբանական գաղտնիքը չպահպանելը², այլ փաստաբանների նկատմամբ, ինչպես նաև նրանց միավորումների և իրավական հաստատությունների կանոնների նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, վստահորդի շահերին հակասող գործողություններ կատարելը, շահերի հակասության դեպքում իրավաբանական օգնություն ցույց տալուց չհրաժարվելը³, որևէ գործ ստանձնելիս իրավունքի տվյալ ճյուղում ոչ բավարար ձեռնահասությունը, Փաստաբանների պալատին սահմանված չափի անդամավճարներ չվճարելը, առանց վստահորդի համաձայնության նրա գործը հրապարակայնորեն ներկայացնելը, փաստաբանական գործի՝ Կանոնակարգով սահմանված կանոններին համապատասխան չկազմելը, չվարելը կամ չպահպանելը, առանց վստահորդի համաձայնության նրա գործը վարելը, առանց պայմանագրի վճարովի իրավաբանական օգնություն ցույց տալը, ոչ օրինական ճանապարհով իր համար ցանկալի նպատակին հասնելուն ձգտող վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալը, վարույթն իրականացնող մարմնի հանձնարարությամբ անձին իրավաբանական օգնության տրամադրումը⁴, հանձնարարության

¹ Նույնը վերաբերվում է քաղաքացիական և վարչական դատավարություններին:

² Կանոնագրքում սահմանված է, որ գաղտնիության պարտականությունը ժամանակով սահմանափակված չէ (2.3.4 կետ)

³ Ընդ որում, շահերի հակասություն ոչ միայն երկու կամ մի քանի վստահորդների միջև, այլ նաև՝ վստահորդի ու պատվիրատուի միջև:

⁴ Պետք է հաշվի առնել, որ՝ եթե փաստաբանը չկարողանա ապացուցել, որ քրեական գործով պաշտպանության համար իրեն է դիմել վստահորդը կամ նրա հանձնարարությամբ այլ մասնավոր անձ, ապա Պալատի խորհուրդը կարող է հաստատված համարել այն փաստը, որ փաստաբանը քրեական գործով վարույթում է հայտնվել

կատարման արդյունքները երաշխավորելը՝ անկախ արդյունքի կանխատեսելիությունից, եթե այդ արդյունքը կախված է դատավորի վարույթն իրականացնող մարմնի որոշումից, տվյալ գործով մասնակցող պաշտոնատար անձի հետ ազգակցական կապի մեջ գտնվելու պայմաններում գործին մասնակցելու հանձնարարություն ընդունելը, փաստաբան չհանդիսացող անձի հետ իր հոնորարը կիսելը (բացառությամբ փաստաբանական գրասենյակի ծախսերի և փաստաբանական գործունեության հետ կապված այլ ոլորտի մասնագետների հրավիրելու դեպքերի), առանց վստահորդի հետ համաձայնեցնելու դիրքորոշում ընդունելը (բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի ինքնագրապարտության մեջ)⁵, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ հանցագործության դեպքին նրա առնչությունն ու մեղավորությունն ընդունելը, պաշտպանյալին՝ իրեն մեղավոր ճանաչելուն դրդելը, կանոնավոր կերպով վստահորդին գործի վերաբերյալ տեղեկություններ չտրամադրելը և գործի վերաբերյալ նրան հետաքրքրող հարցերին չպատասխանելը, իր հասցեն կամ հեռախոսահամարը փոխվելու դեպքում այդ մասին ողջամիտ ժամկետում վստահորդներին և Փաստաբանների պալատին չտեղեկացնելը, իր հոնորարի չափն ավելացնելու նպատակով վստահորդի համար արհեստական դատական վեճեր ստեղծելը, առանց վստահորդի հետ համաձայնեցնելու (նույնիսկ համապատասխան լիազորություններ ունենալու դեպքում) նրա անունից հաշտության համաձայնություն կնքելը (բացառությամբ այն դեպքերի, երբ վստահորդը բացակայում է Հայաստանից և հաշտության համաձայնությունը ամբողջությամբ արտացոլում է վստահորդի շահերը), գիտակցաբար կեղծ և ապակողմնորոշիչ տեղեկություններ դատարանին ներկայացնելը, այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունն ու փաստաբանի համբավն արատավորող գործողություններ թույլ տալը, այլ փաստաբանի հետ իրավաբանական օգնության վերաբերյալ պայմանագրի լուծմանը վստահորդին դրդելը, վստահորդի հետ շփումների ժամանակ այլ փաստաբանի վերաբերյալ բացասական արտահայտվելը, կապված վերջինիս անձնական կյանքի, նյութական վիճակի, մասնագիտական հմտությունների, հանձնարարության վարձատրության պայմանների հետ, հակառակորդ կողմի փաստաբանի համաձայնության բացակայության պայմաններում այդ կողմի հետ դատական գործի վերաբերյալ տեղեկություն փոխանակելը, օրենքով արգելված եղանակներով վարույթն իրականացնող մարմնի վրա ազդելը, դատավարության մասնակիցների և դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ ոչ կոռեկտ վերաբերմունքը, իր վստահորդի մարմնի վրա վնասվածքներ տեսնելու դեպքում դրա պատճառները չպարզելը կամ համապատասխան միջոցներ չձեռնարկելը: Հանրային պաշտպանը,

նախաքննության մարմնի պատվերով: Պալատի խորհուրդը կարող է հաշվի առնել նաև փաստաբանի կողմից իրականացված գործողությունների բնույթը՝ վստահորդի շահերը պատշաճ կարգով ներկայացված լինելու տեսանկյունից: Փաստաբանի կողմից նախաքննության մարմնի պաշտոնատար անձի հանձնարարությամբ (առաջարկությամբ) գործին ներգրավված լինելու և վստահորդին բավարար իրավաբանական օգնություն ցույց տված չլինելու արարքների համակցությունը հանդիսանում է ակնհայտ և կոպիտ կարգապահական խախտում: (Կանոնագրքի 3.1.9. կետ)

⁵ Համոզվելով, որ պաշտպանյալին մեղաազրված արարքը հիմնավորված չէ կամ գործով ձեռք բերված ապացույցները վկայում են ավելի թեթև հանցագործության մասին, իսկ պաշտպանյալն ընդունում է իրեն ներկայացված մեղադրանքը, փաստաբանը պարտավոր է քննարկել այդ հարցերը իր պաշտպանյալի հետ ու համաձայնեցնել, ըստ այդմ, նոր դիրքորոշում ընդունելու հարցը: Եթե նոր դիրքորոշման կապակցությամբ համաձայնություն ձեռք չի բերվում, ապա փաստաբանն իրավունք ունի զբաղեցնել իր պաշտպանյալից անկախ, ինքնուրույն դիրքորոշում: (Կանոնագրքի 3.5.4 կետ)

բացի վերը թվարկվածներից, կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել, մասնավորապես, առանց հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի թույլտվության իրավաբանական օգնություն ցույց տալը (բացառությամբ իր կամ իր ազգականի գործի), վստահորդից գումար կամ թանկարժեք (հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող արժեքով) նվեր ստանալը⁶:

Փաստաբանի օգնականի նկատմամբ տարածվում են փաստաբանին վերաբերող վարքագծի կանոններն այնքանով, որքանով այդ կանոնները կարող են վերաբերվել փաստաբանի օգնականին:

Պալատի կողմից հավատարմագրված՝ այլ պետության փաստաբանի նկատմամբ, ով Հայաստանի Հանրապետության տարածքում փաստաբանական գործունեություն է իրականացնում, տարածվում են ՀՀ փաստաբաններին վերաբերվող վարքագծի կանոններն այնքանով, որքանով այդ կանոնները կարող են վերաբերվել այլ պետության փաստաբանին: Այլ պետության փաստաբանին տրված հավատարմագրի գործողությունը դադարեցվում է, եթե այդ փաստաբանը խախտել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները: Այն դեպքում, երբ այլ երկրի փաստաբանի կողմից առաջին անգամ թույլ տրված ոչ էական խախտումը հնարավոր է վերացնել և այն էական վնաս չի պատճառել վստահորդին, Պալատի խորհուրդը կարող է սահմանափակվել այդ փաստաբանին նկատողություն հայտարարելով:

Կարգապահական գործն ըստ էության քննող և վերջնական որոշում կայացնող մարմինը Փաստաբանների պալատի խորհուրդն է, որի քննարկմանը կարգապահական վարույթի գործը նախապատրաստում են այդ նպատակով փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից վարկանիշային կարգով չորս տարի ժամկետով փակ գաղտնի քվեարկությամբ ընտրված փաստաբանները (կարգապահական վարույթ նախապատրաստողները):

Փաստաբանների պալատի խորհուրդը, բացի վերը նշված լիազորությունից, ունի նաև մի շարք այլ լիազորություններ, որոնք սահմանված են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով: Խորհուրդը բաղկացած է 12 անդամից՝ չհաշված Պալատի նախագահին, ով ի պաշտոնե նաև Պալատի խորհրդի նախագահն է: Խորհրդի այդ 12 անդամներն ընտրվում են վարկանիշային կարգով չորս տարի ժամկետով Պալատի ընդհանուր ժողովի կողմից:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով Պալատի խորհուրդը նշված է իբրև գործադիր, ինչպես նաև կարգապահական վարույթ իրականացնող մարմին, իսկ որպես գործադիր մարմնի բարձրագույն պաշտոնատար անձ նույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասում նշված է Փաստաբանների պալատի նախագահը:

Պալատի նախագահն ընտրվում է Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից, առնվազն տասը տարվա փաստաբանական ստաժ ունեցող Պալատի անդամների կազմից՝ փակ գաղտնի քվեարկությամբ, չորս տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ: Պալատի

⁶ Այդպիսի գումար կամ թանկարժեք նվեր ստանալու դեպքում հանրային պաշտպանը պարտավոր է մեկ օրվա ընթացքում գրավոր ծանուցում ներկայացնել հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին կամ Պալատի նախագահին ու ստացածը հանձնել Պալատին: (Կանոնագրքի 7.2.2. կետ)

նախագահի ընտրության հետ կապված առանձնահատկությունները և նրա լիազորություններն ամրագրված են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածում:

Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը Պալատի բարձրագույն մարմինն է, որը կազմված է Պալատի անդամ բոլոր փաստաբաններից: Ընդհանուր ժողովը հաստատում է Փաստաբանների պալատի կանոնադրությունը և փաստաբանի վարքագծի կանոնագիրքը (դրանցում փոփոխություններ, լրացումներ կատարում, հաստատում նորը), ընտրում և հետ է կանչում փաստաբանների պալատի նախագահին, խորհրդի անդամներին, կարգապահական գործ նախապատրաստող անձանց: Ընդհանուր ժողովը, բացի իր բացառիկ իրավասությանը վերաբերվող՝ վերը նշված հարցերից, իրավունք ունի լուծելու նաև Փաստաբանների պալատի գործունեությանն առնչվող ցանկացած այլ հարց:

Ընդհանուր ժողովն իր որոշումներն ընդունում է ընդհանուր ժողովի գումարմամբ կամ առանց ժողովի գումարման՝ հեռակա կարգով: Պալատի ընդհանուր ժողովը (գումարմամբ կամ հեռակա կարգով) հրավիրվում է առնվազն երկու տարին մեկ անգամ, ինչպես նաև՝ Պալատի նախագահի կամ Պալատի խորհրդի որոշմամբ: Պալատի անդամների ընդհանուր թվի մեկ քառորդի պահանջով Պալատի նախագահը պարտավոր է հրավիրել ընդհանուր ժողով:

Խնդիր 1. փաստաբանը պայմանագիր է կնքել Ա.Գևորգյանի հետ՝ վերջինիս եղբոր՝ Գ.Գևորգյանի պաշտպանությունն իրականացնելու համար: Պայմանագրի կնքման պահին Գ.Գևորգյանը գտնվում է կալանքի տակ, նա մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ (սպանություն) և ընդունում է իր մեղքը: Պաշտպանությունը ստանձնելուց որոշ ժամանակ անց պաշտպանի մոտ կասկածներ են առաջանում, որ Գ.Գևորգյանն իրականում այդ սպանությունը չի կատարել, այլ դա կատարվել է Ա.Գևորգյանի կողմից: Նա իր կասկածների մասին հայտնում է Գ.Գևորգյանին, ով հաստատում է, որ իրոք՝ ինքն այդ սպանությունը չի կատարել այլ խոստովանական ցուցմունք է տվել՝ իր եղբորը փրկելու համար, քանի որ եղբայրը գտնվում է ծանր առողջական վիճակում և չի կարողանա դիմանալ ազատազրկմանը, բացի այդ, եղբոր խնամքին են գտնվում նրա չորս երեխան և հաշմանդամ կինը: Գ.Գևորգյանը հայտնում է, որ ինքը հետագայում նույնպես չի ցանկանում փոխել իր դիրքորոշումը և պահանջում է պաշտպանից շարունակել իր պաշտպանությունն այդ դիրքորոշման շրջանակներում: Ինչպե՞ս պետք է վարվի պաշտպանը:

Խնդիր 2. Մ.Միմոնյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ (խարդախություն, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով): Մ.Միմոնյանը պնդում է, որ գումարը, որի համախառնության մեջ ինքը մեղադրվում է, ինքը վերադարձրած է եղել տուժողին, սակայն այդ մասին ստացական չի վերցրել, որից օգտվելով տուժողը մեղադրում է իրեն խարդախության մեջ: Առերեսումից դուրս գալու ժամանակ տուժողը պաշտպանի հետ զրույց է ունենում, որի ընթացքում ընդունում է, որ մեղադրյալն իրեն վերադարձրած է եղել գումարը, սակայն պահանջում է, որպեսզի վճարվեն նաև տոկոսներ, որպեսզի ինքը հրաժարվի մեղադրյալի դեմ տրված իր վկայություններից: Պաշտպանին հաջողվում է ձայնագրել այդ զրույցը:

Ճիշտ է վարվել արդյոք պաշտպանը և կարո՞ղ է նա արդյոք պահանջել՝ ճանաչել այդ ճայնագրությունը որպես ապացույց:

Մաս 2. Փաստաբանական գործունեության ոլորտների, փաստաբանի հիմնական իրավունքների մասին

Փաստաբանության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ Սահմանադրությունից, ՀՀ քաղաքացիական դատավարության, ՀՀ վարչական դատավարության, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերից, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքից և իրավական այլ ակտերից: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեություն իրականացնելու և փաստաբանների մասնագիտական միավորում կազմակերպելու հիմունքները և այդ գործունեության իրականացման կարգը, որը միասնական է և պարտադիր բոլոր փաստաբանների համար:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է: Ըստ այդ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի, փաստաբանը կարող է իրականացնել հետևյալ գործունեությունը՝

- 1) խորհրդատվություն, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը,
- 2) ներկայացուցչություն, ներառյալ՝ ներկայացուցչությունը դատարանում,
- 3) քրեական գործերով պաշտպանություն,
- 4) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով վկային իրավաբանական օգնություն ցույց տալը⁷:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար, կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը⁸, բացառությամբ մերձավոր ազգականի (թվարկված են այդպիսիք), կամ մերձավոր ազգականին կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանող իրավաբանական անձի շահերը դատարանում ներկայացնելու դեպքերի: Հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ քրեական գործերով պաշտպանություն կարող է իրականացնել միայն փաստաբանը:

Հոդվածի 5-րդ մասում նշված է, որ փաստաբանական գործունեություն չի համարվում փաստաբանի կողմից աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուին իրավաբանական օգնություն ցույց

⁷ Նկատի է ունեցվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 5-րդ մասի 10-րդ կետի դրույթն այն մասին, որ վկան իրավունք ունի քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայանալ փաստաբանի հետ:

⁸ Օրենքի այս դրույթի սահմանադրականությունը ներկայումս վիճարկվում է ՀՀ Սահմանադրական դատարանում:

տալը (բացառությամբ փաստաբանի մոտ աշխատող փաստաբանի կողմից իրականացվող գործունեության):

Շատ հետաքրքիր դրույթ է պարունակում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը. հոդվածի 1-ին մասից հետևում է, որ փաստաբանին վճարվող գումարը դա ոչ թե վարձատրություն է, այլ՝ փոխհատուցում նրա ծառայությունների դիմաց: Սա համահունչ է նույն օրենքի 5-րդ հոդվածի այն դրույթին, որ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է:

Փաստաբանի հիմնական իրավունքները սահմանված են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով: Դրանք են՝ դատավարական օրենսգրքերով սահմանված կարգով ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերի ներկայացուցչությունն ու պաշտպանությունը, վստահորդների շահերի ներկայացուցչությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ոչ պետական մարմիններում և կազմակերպություններում, օրենքով չարգելված եղանակով, այդ թվում՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ (տեսաձայնագրող, ձայնագրող, ֆոտո, բազմացնող կամ այլ սարքավորումների կիրառմամբ, եթե դա չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը) վստահորդի շահերից բխող ապացույցների կամ տեղեկությունների ձեռք բերումը, պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից՝ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալը (եթե դրանք օրենքով պաշտպանվող գաղտնիք չեն պարունակում կամ եթե այդ մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ), համաձայնության դեպքում այն անձանց գրավոր հարցման ենթարկելը, ովքեր ենթադրաբար կարող են տիրապետել գործին վերաբերվող տեղեկատվությանը, պայմանագրային հիմունքներով մասնագետների ներգրավումը՝ իրավաբանական օգնություն ցույց տալու հետ կապված մասնագիտական գիտելիքներ պահանջող հարցեր պարզաբանելու համար, պաշտպանյալի հետ անարգել, կոնֆիդենցիալ տեսակցություն ունենալը՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման, այդ թվում՝ տեսակցությանը արտոնագրված թարգմանիչ հրավիրելը: Ավելին, փաստաբանը փաստաբանական գործունեություն իրականացնելիս ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլ անձանց իրավունքներն ու ազատությունները, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանի կողմից կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալը ամրագրված է որպես պարտադիր պահանջ:

Վարժություն. բաժանվել երկու խմբի, վերլուծել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության հարցը: Խմբերից մեկը նախապատրաստում է փաստարկներ հոգուտ այդ նորմի հակասահմանադրականության, մյուսը՝ վիճարկում է այդ տեսակետը:

2. Անձի նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելիս նրա պաշտպանի մասնակցության առանձնահատկությունները

Մաս 1. Ձերբակալում

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասը տալիս է ձերբակալման հասկացությունը՝

«1. Ձերբակալումը անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնել է, հետաքննության կամ վարույթն իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար»:

Այս նորմից երևում է, որ ձերբակալման սկիզբ պետք է համարել ոչ թե ձերբակալման արձանագրություն կազմելու կամ անձին ձերբակալված անձանց պահման վայր տեղափոխելու պահը, այլ առաջին իսկ պահը, երբ այդ անձը արգելանքի է վերցվել՝ վարույթն իրականացնող մարմին բերվելու համար: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, այդ պահից սկսած անձը չի կարող ձերբակալվածի կարգավիճակում գտնվել ավելի, քան 72 ժամ, որից հետո կամ պետք է ազատ արձակվի, կամ՝ կալանավորվի դատարանի որոշման հիման վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ձերբակալումը կատարվում է հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի, կամ՝ քրեական հետապնդման մարմնի որոշման հիման վրա: Մենք կուսումնասիրենք առավել հաճախ պատահող՝ առաջին դեպքը⁹:

Օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիմքերն են՝ անձին հանցագործություն կատարելիս կամ անմիջապես այն կատարելուց հետո բռնելը, ակնատեսների կողմից տվյալ անձին՝ որպես հանցագործություն կատարող մատնանշելը, նրա կամ նրա հագուստների, նրա կողմից օգտագործվող իրերի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում կամ տրանսպորտային միջոցում հանցագործությանը նրա առնչությունը վկայող բացահայտ հետքերի հայտնաբերումը: Նույն մասի 4-րդ կետը թույլ է տալիս անձի ձերբակալումը նաև այն դեպքերում, երբ կան այլ հիմքեր անձին հանցագործության կատարման մեջ կասկածելու համար և նա թաքնվելու փորձ է կատարել կամ չունի բնակության մշտական վայր կամ բնակվում է այլ տեղանքում կամ նրա անձնավորությունը պարզված չէ:

Գործնականում մենք հաճախ ենք հանդիպում այնպիսի իրավիճակների, երբ անձին հեռախոսագանգով կամ բանավոր այլ եղանակով հրավիրել են ոստիկանություն և երկար ժամանակ պահել այնտեղ՝ առանց որևէ օրինական ձևակերպման: Նման «հրավերներն» ընդունելու դեպքում անձը

⁹ Երկրորդ դեպքը՝ վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա ձերբակալումը նախատեսված է Օրենսգրքի 130-րդ և 131-րդ հոդվածներով:

հայտնվում է առավել անպաշտպան վիճակում՝ նա չի կարողանում փաստաբան պահանջել, նրան թույլ չեն տալիս հեռախոսագանգ կատարել հարազատներին: Բռնությունները, անօրինական ազդեցությունները, որոնց մասին հաճախակի ենք տեղեկանում, հիմնականում կիրառվում են հենց այսպիսի իրավիճակներում, հենց այդ ժամանակ էլ անձին ստիպում են իր դեմ ցուցմունք տալ:

Ինչպես վարվել, եթե մեզ են դիմել այդպիսի անձի հարազատները, ասելով, որ նրան արդեն 10 (20, 30 ...) ժամ է, ինչ տարել են ոստիկանություն ու նրանից որևէ լուր չկա, իսկ հեռախոսն անջատված է: Նախ, պետք է փորձել պարզել, թե ու՞ր են այդ անձին տարել, կապ հաստատել նրան հրավիրած ոստիկանի կամ վերջինիս վերադասի հետ ու անել օրենքով չարգելված ամեն ինչ՝ բերման ենթարկված այդ անձին հնարավորինս շուտ տեսակցելու համար: Այդ նպատակով տվյալ անձի հարազատներից որևէ մեկին անմիջապես թելադրեք դիմում՝ հասցեագրված այն մարմնին, որտեղ գտնվում է բերման ենթարկվածը, այն մասին, որ նա դիմել է Ձեզ իր հարազատին իրավաբանական օգնություն ցույց տալու համար: Հաճախ պատահում է, որ հարազատներն ունեն այն ոստիկանի հեռախոսահամարը, ում զանգով այդ անձը գնացել է ոստիկանություն, սակայն Ձեր զանգերին այդ ոստիկանը չի պատասխանում: Նման իրավիճակներում խորհուրդ է տրվում SMS հաղորդագրություն ուղարկել ոստիկանի հեռախոսահամարին, դրանում ամրագրելով անձին ոստիկանություն տանելու օրն ու ժամը, այն հանգամանքը, որ հարազատները դիմել են Ձեզ՝ իրավաբանական օգնության համար: Այս ամենը հնարավորություն կտա հետագայում վիճարկելու անձին անազատության մեջ պահելու իրավաչափությունը, եթե այդ ընթացքում նրանից ապօրինաբար ցուցմունքներ են վերցրել, ապա՝ վիճարկելու այդ ցուցմունքների թույլատրելիությունը, եթե այդ ընթացքում անձը ենթարկվել է բռնությունների՝ հիմնավորել, որ բռնությունները կիրառվել են այդ մարմնի կողմից:

Իսկ եթե չկա առհասարակ որևէ տվյալ այն մասին, թե անձն ու՞ր է տարվել և ու՞մ կողմից, ապա անհրաժեշտ է անհապաղ պատվիրված նամակով այդ մասին բողոք ուղարկել ՀՀ գլխավոր դատախազին (հնարավոր է նաև՝ ՀՀ ոստիկանության պետին):

Համեմատենք հանցանքի կատարման մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիմքերը և հետևանքները «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի հետ, որն ունի հետևյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր որ ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

...

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

...»:

Ինչպես կարելի է համոզվել, Կոնվենցիայի տեքստում «հիմնավոր կասկած» հասկացությունն իմաստային առումով համահունչ է «հանցանքի կատարման մեջ անմիջականորեն ծագած կասկածանք»-ին: Երկու դեպքում էլ այդ կասկածն ինքն իրենով բավարար է՝ անձին կարճատև ազատությունից զրկելու համար՝ դատարան ներկայացնելու կամ ազատ արձակելու հարցը որոշելու նպատակով: Երկու դեպքում էլ որոշ ժամանակ անց հիմնավոր կասկածի առկայությունը բավարար չէ՝ անձին անազատության մեջ պահելու համար:

Խնդիր. ունկնդիրներին առաջարկվում է պատրաստել վերլուծություն, թե որքանով է համապատասխանում Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 130-րդ և 131-րդ հոդվածներով նախատեսված՝ վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա ձերբակալումը:

Մաս 2. Որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու վերաբերյալ միջնորդության քննություն

Արդեն ասվեց, որ անձին կալանավորելու համար նրա կողմից հանցանք կատարված լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածի (որը անձին կալանավորելու անհրաժեշտ պայման է և ոչ թե հիմք) առկայությունն արդեն բավարար չէ: Ինչպես այս կապակցությամբ նշել է ՀՀ վճռաբեկ դատարանը Վահրամ Գևորգյանի գործով 24.02.2011 թվականի իր որոշման (գործ թիվ ԵԿԳ/0678/06/10) մեջ՝

*«19. (...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պարտավոր է անդրադառնալ կալանավորման **պայմանների և հիմքերի** առկայությանը: Կալանավորման պայմանը փաստական տվյալներով հաստատված հանցամանքներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը: Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին: Ավելին, եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է: ...*

22. Ընդհանրացնելով սույն որոշման 19-21-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման արդյունքում դատարանը՝

ա) պետք է արձանագրի հիմնավոր կասկածի առկայությունը կամ բացակայությունը,

բ) պետք է պարզի կալանավորման մյուս պայմանների առկայությունը,

գ) այն դեպքում, երբ դատարանը կհանգի այն հետևության, որ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած նյութերը բավարար են արձանագրելու, որ առկա է անձի կողմից հանցագործություն

կատարած լինելու հիմնավոր կասկած, և միաժամանակ կալանավորման մյուս պայմանները¹⁰ նույնպես առկա են, ապա պետք է կայացնի հիմնավորված և պատճառաբանված որոշում այն մասին, թե արդյոք առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկը կամ մի քանիսը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերի առկայության վերաբերյալ դատարանի հետևությունը ևս պետք է հիմնավորված լինի վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված համապատասխան տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով: ...

23. Ընդհանրացնելով սույն որոշման 17-22-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ անձը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող քավարար ապացույցներ: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, որոնք պետք է պատշաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: *Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված:*»:

Այսպիսով, մենք արդեն կարող ենք ուրվագծել այն հանգամանքների շրջանակները, որոնք պետք է հիմնավորի քննիչը՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ իր միջնորդության մեջ: Կալանավորման պայմանների և հիմքերի հիմնավորման պարտականությունը դատարանում կրում է քննիչը: Այստեղից բխում են մեր գործողությունները դատարանում՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ հարցի քննության ժամանակ:

Նշենք մեր գործողություններն ըստ հերթականության. նախ՝ պահանջում և ստանում ենք քննիչի միջնորդությունը և դրան կից դատարան ներկայացված փաստաթղթերի պատճենները: Այնուհետև՝ ժամկետ ենք պահանջում՝ դրանք ուսումնասիրելու և առարկություններ նախապատրաստելու համար¹¹: Ստանալով քննիչի միջնորդության, դրան կից ներկայացված փաստաթղթերի պատճենները և ողջամիտ ժամկետ՝ առարկություններ պատրաստելու (այդ թվում՝ անհրաժեշտ փաստաթղթեր հավաքելու) համար, կազմում ենք գրավոր առարկություններ քննիչի որոշման դեմ և նախապատրաստում մեր պաշտպանյալին դատական նիստին: Որպես կանոն, դատարանները նման իրավիճակներում տրամադրում են երկու-երեք ժամ, երբեմն կարող է տրամադրվել մինչև հինգ ժամ, կախված նրանից, թե

¹⁰ Մյուս պայմանների թվում Վճռաբեկ դատարանը նշել է համապատասխան քրեաիրավական որակմամբ հարուցված քրեական գործի առկայությունը, գործի նյութերում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված տարիքը, որոշակի խումբ անձանց համար, օրինակ՝ պատգամավորներ, դատավորներ, անձեռնմխելիության պարտադիր հաղթահարումը:

¹¹ Դեռևս մեկ-երկու տարի առաջ շատ էին դեպքերը, երբ՝ հղում կատարելով նախաքննության գաղտնիության սկզբունքի վրա, պաշտպաններին չէին տրամադրվում քննիչի կողմից դատարան ներկայացված նյութերը: Ավելի հաճախ մերժվում էին նյութերին ծանոթանալու և առարկություններ նախապատրաստելու համար ժամանակ տրամադրելու մասին պաշտպանների միջնորդությունները: Բարեբախտաբար, դատավորների բազմաթիվ վերապատրաստումների արդյունքում այժմ նման մերժումները հազվադեպ են դարձել:

որքան է ծանրաբեռնված դատավորը և նույնիսկ՝ կախված նրանից, թե ով է դատավորը: Բոլոր դեպքերում, մի թողեք Ձեր պաշտպանյալի օգտին վկայող փաստաթղթերի (քնութագրեր, ընտանեկան և անձնական դրության մասին փաստաթղթեր, երաշխավորական մամակներ, երբեմն՝ Ձեր պաշտպանյալի մեղավորությունը կասկածի տակ դնող նյութեր և այլ) հավաքումը վերջին ժամերին, ձգտեք նախապես հավաքել դրանք, չե՞ որ սովորաբար մենք նախապես կարող ենք կանխորոշել, որ քննիչը մնան միջնորդություն է ներկայացնելու դատարան:

Առարկությունները պատրաստելիս, նախ և առաջ, պարզում ենք՝ ի՞նչ նյութերի միջոցով է քննիչը ապացուցում մեր պաշտպանյալի կողմից հանցագործություն կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությունը: Կարևոր է հաշվի առնել, որ այս փուլում մեր պաշտպանյալի մեղքը չի կարող լիարժեք ապացուցված լինել, իսկ հիմնավոր կասկածի առկայության համար կարող են բավարար լինել, օրինակ, հանցագործության կատարմանը նրա մասնակցության վերաբերյալ ականատես վկաների կամ տուժողի ցուցմունքները (նույնիսկ՝ մեկ ցուցմունք), փորձագետի եզրակացությունը, նրա մոտից առգրավված որևէ իրեղեն ապացույց կամ այլ:

Եթե այդպիսի նյութեր ներկայացված են, ապա պարզում ենք՝ արդյո՞ք քննիչի կողմից բավարար կերպով հիմնավորվել են կալանավորման հիմքերը (դրանցից մեկն ու մեկը), այն է՝ որ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, կարող է՝ (1) թաքնվել քննությունից, կամ (2) կատարել քրեական օրենքով արգելված նոր արարք, կամ (3) անօրինական ազդեցություն գործադրել քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա կամ այլ կերպ խոչընդոտել գործի քննությանը: Հաճախ քննիչների միջնորդությունների մեջ միաժամանակ նշված են բոլոր երեք հիմքերը:

Առարկություններ նախապատրաստելիս հիշեք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումը, որը քննիչին պարտադրում է ոչ թե անվիճելիորեն ապացուցել վերը նշված հիմքերը, այլ ընդամենը՝ ապացուցել, որ գործի նյութերը **բավարար հիմք են տալիս ենթադրելու**, որ այդպիսիք առկա են: Դատական նիստին բավականին արդյունավետ է, երբ քննիչի կողմից իր միջնորդությունը ներկայացնելուց հետո պաշտպանը մոտավորապես հետևյալ բովանդակությամբ հարց է տալիս. «Ձեր միջնորդության մեջ նշված է, որ մնալով ազատության մեջ, իմ պաշտպանյալը կարող է կատարել քրեական օրենքով արգելված նոր արարք: Խնդրում եմ հայտնել, թե միջնորդությանը կից Ձեր կողմից դատարան ներկայացված նյութերից որո՞նք են մնան ենթադրության հիմք հանդիսանում»:

Ուշադրություն. լինում են դատավորներ, որոնք համարում են, որ օրենքը չի նախատեսում, որպեսզի կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ հարցի քննության ընթացքում կողմերը միմյանց հարցեր տան: Իրոք, մնան դեպքերում օրենքն ուղղակի չի նախատեսում (թեև՝ չի էլ արգելում) կողմերին հարցեր տալ միմյանց: Եթե դատարանն այդպիսի պատճառաբանությամբ զրկել է Ձեզ քննիչին հարցեր տալու հնարավորությունից, ապա Դ-ուք կարող եք առարկել դատարանի այդպիսի գործողության դեմ, մատնանշելով, որ պարտավոր եք **օրենքով չարգելված բոլոր միջոցներով** իրավաբանական օգնություն ցույց տալ Ձեր պաշտպանյալին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68 հոդվածի 1-ին մաս): Իսկ կարող եք վարվել նաև այլ կերպ՝ կարող եք միջնորդել, որպեսզի

դատարանը ինքը այդ հարցը տա քննիչին (Չե՞ որ միջնորդություններ հարուցելու Ձեր իրավունքը ամրագրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով):

Ինչպես երևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137 հոդվածի 4-րդ մասի բովանդակությունից, կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը: Գործնականում, դատարանները, պաշտպանության կողմից համապատասխան միջնորդության բացակայության դեպքում, հազվադեպ են իրենց նախաձեռնությամբ անդրադառնում մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հարցին: Այսպիսով, որպես կանոն, Դուք ունենում եք ընտրություն՝ գրավի կիրառման մասին միջնորդություն հարուցել կալանավորման հարցի քննության ժամանակ, կամ՝ հետագայում, առանձին կարգով, երբ դատարանն արդեն բավարարել է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին քննիչի միջնորդությունը:

Իսկ ի՞նչ պետք է կարողանա հիմնավորել քննիչը՝ կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման միջնորդությամբ դատարան դիմելիս: Ինչպես նշել է ՀՀ վճռաբեկ դատարանը Ասլան Ավետիսյանի գործով 31.10.2008 թվականին կայացված իր որոշման մեջ (գործ թիվ ԱՎԴ/0022/06/08)՝

«26. Կալանքի ժամկետի երկարացման վերաբերյալ օրենսդրական և նախադեպային կանոնակարգման համադրման և մեկնաբանման հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) շարունակվում են առկա լինել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերն ու պայմանները կամ ի հայտ են եկել անձին կալանքի տակ պահելու նոր հիմքեր.

բ) գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն՝ ապահովելու գործի քննության ընթացքը.

...»:

Այս նախադեպի ձևակերպումները հուշում են, որ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություն ներկայացնելիս քննիչը, բացի այն հանգամանքներից, որոնք պետք է ապացուցեր դատարանի կողմից անձին կալանավորելիս, պետք է հավելյալ հիմնավորի նաև, որ նախորդ ժամանակաշրջանում անհրաժեշտ ջանասիրությամբ քննել է գործը: Այս միտքը նաև հուշում է մեզ, որ առարկություններ նախապատրաստելիս պետք է, ի թիվս այլի, փորձենք կասկածի տակ դնել նաև նշված հանգամանքը: Սակայն կասկածի տակ դնել ոչ թե պնդելով՝ «քննիչը չի դրսևորել անհրաժեշտ ջանասիրություն», որի դեպքում ապացուցման պարտականությունը կրնկնի Ձեզ վրա, այլ՝ «քննիչը չի ներկայացրել նյութեր, որոնք կվկայեին նրա բավարար ջանասիրության մասին»:

Հիմքերի առկայության դեպքում օգտագործեք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 140 հոդվածով նախատեսված հնարավորությունները: Այսպես, նշված հոդվածը նախատեսում է, որ

անչափահասները, ինչպես նաև անաշխատունակ անձինք, որոնք ծնողին կամ կերակրողին արգելանքի վերցնելու, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի այլ գործողությունների հետևանքով մնացել են առանց հսկողության, խնամքի և գոյատևման միջոցների, ունեն խնամքի իրավունք, որը նշված մարմինը պարտավոր է նրանց ապահովել պետական բյուջեի միջոցների հաշվին: Եթե Ձեր պաշտպանյալին կալանքի վերցնելու արդյունքում նրա անչափահաս երեխաները և (կամ) նրա խնամքի տակ գտնվող ամուսինը, ծնողները մնացել են առանց գոյատևման միջոցների, Դուք կարող եք վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել այդպիսի միջնորդություն:

Խնդիր 1. ունկնդիրներին առաջարկվում է առարկություններ նախապատրաստել անձի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու վերաբերյալ քննիչի միջնորդության դեմ: Միջնորդությունը պատճառաբանված է միայն այն բանով, որ X-ը մեղադրվում է երկու ծանր հանցագործության կատարման մեջ, որոնցից յուրաքանչյուրի համար օրենքով սահմանված է ազատազրկում չորսից մինչև ութ տարի ժամկետով: Քննիչը գտնում է, որ հնարավոր պատժի ծանրությունը զգալիորեն մեծացնում է հավանականությունը, որ մնալով ազատության մեջ, մեղադրյալը կարող է թաքնվել քննությունից կամ փորձ կատարել ազդելու գործով անցնող վկաների վրա, որոնք նրա ազգականներն են: Միաժամանակ քննիչը ներկայացրել է այնպիսի նյութեր (երկու առերես հարցաքննության արձանագրություններ), որոնք հիմնավոր կասկած են առաջացնում՝ մեղադրյալի կողմից նրան վերագրվող հանցագործությունը կատարած լինելու վերաբերյալ:

Խնդիր 2. ունկնդիրներին առաջարկվում է գրել միջնորդություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 140 հոդվածով նախատեսված միջոցների կիրառման մասին, նկատի ունենալով, որ կալանավորված մեղադրյալն ունի երկու մանկահասակ՝ 6 ամսական և 3 տարեկան երեխա, իսկ նրա կինը գտնվում է չվճարվող արձակուրդի մեջ (որոնց վերաբերյալ առկա են ապացույցներ):

Մաս 3. Դատավարական հարկադրանքի միջոցների բողոքարկում

Ձերբակալման բողոքարկումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ուղղակի նախատեսված չէ: Սակայն հարկադրանքի այս միջոցի բողոքարկման իրավունքը բխում է Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետից, որի համապատասխան՝

«Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:»:

Գործնականում ձերբակալման դեմ բերված բողոքների քննությունը դատարանները ձգձգում են, այդ հարցին անդրադառնալով անձի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը քննելիս: Ներկայումս մենք չունենք որևէ իրավական լծակ՝

պարտադրելու, որպեսզի ձերբակալման դեմ մեր բողոքը քննվի անհապաղ: Այնուհանդերձ, եթե դատարանը ճանաչեց ձերբակալումն անօրինական, դրանից ուղղակիորեն չի բխում, որ անձի նկատմամբ չի կարող որպես խափանման միջոց ընտրվել կալանավորումը: Ձերբակալումն անօրինական ճանաչվելու դեպքում անձը պարզապես իրավունք ձեռք կրերի՝ ստանալու համարժեք փոխհատուցում անօրինական ձերբակալված լինելու ողջ ժամանակահատվածի համար:

Ինչ վերաբերվում է կալանավորման (կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու) վերաբերյալ դատարանի որոշումների բողոքարկմանը, ապա այդպիսի բողոքների հիմքում դրվում են այն նույն փաստարկները, ինչ և քննիչի համապատասխան միջնորդությունների դեմ առարկելիս: Պարզապես, այս դեպքում քննիչի միջնորդության փոխարեն մեր կողմից ենթակա է վերլուծության դատարանի որոշումը՝ արդյո՞ք դրանում հիմնավորված են կալանավորման պայմանները (հատկապես՝ հիմնավոր կասկածի առկայությունը) և հիմքերից մեկը կամ մի քանիսը: Վերաքննիչ բողոքները կազմելու առանձնահատկությունները տես սույն ձեռնարկի համապատասխան գլխում, այն վերապահումով, որ կալանավորման հետ կապված առաջին ատյանի դատարանի որոշումների բողոքարկման ժամկետը հինգ օր է:

Ոչ այնքան տարածված դեպքերից է, երբ Ձեր պաշտպանությանն է դիմում հետախուզման մեջ գտնվող անձ, ում նկատմամբ դատարանն, իր բացակայությամբ, որոշում է կայացրել՝ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու մասին: Որպես կանոն, այդ որոշումները կայացված են լինում ամիսներ կամ տարիներ առաջ, և դրանց բողոքարկման ժամկետը վաղուց արդեն լրացած է լինում: Նման դեպքերում անհրաժեշտ է ստանձնել տվյալ անձի պաշտպանությունը¹², այնուհետև ստանալ նրան կալանավորելու վերաբերյալ դատարանի որոշումը, որից հետո՝ դիմել որոշումը կայացրած դատարան՝ դրա բողոքարկման ժամկետը վերականգնելու միջնորդությամբ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդված): Որպես կանոն, նման միջնորդությունները բավարարվում են, որից հետո կալանավորման վերաբերյալ որոշումը բողոքարկում ենք ՀՀ քրեական վերաքննիչ դատարան:

Ուշադրություն. Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ասված է, որ նույն հոդվածի 1-ին կետի "գ" ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Նշված նորմից հետևում է, որ հետախուզման մեջ գտնվող անձինք, ում նկատմամբ, իրենց բացակայությամբ, դատարանը որոշում է

¹² Պաշտպանությունը ստանձնելու համար անհրաժեշտ է մեր բացակայող վստահորդի համաձայնությունը: Երբ նման համաձայնությունը մեզ է ուղարկվում հասարակ գրավոր ձևով, քննիչները հաճախ հրաժարվում են այն հիմք ընդունել, նշելով, որ իրենք չունեն որևէ հավաստիք, որ դիմումը ստորագրված է մեղադրյալի կողմից: Արդյունքում առաջանում է քաշքշուկ, որից խուսափելու համար ցանկալի է, որպեսզի այդ դիմումի տակ դրված ստորագրության իսկությունը հաստատված լինի նոտարի կողմից:

կայացրել՝ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու մասին, հայտնաբերվելուց ու ձերբակալվելուց (կամ՝ կամովին ներկայանալուց) հետո անհապաղ պետք է տարվի դատարան՝ նրա կալանավորման հարցի քննության համար, կամ՝ պետք է ազատ արձակվի: Այլ կերպ ասած, մեղադրյալի բացակայության ժամանակ դատարանի կողմից կայացված որոշումը բավարար չէ նրան կալանքի տակ պահելու համար:

Այս դիրքորոշումը արտահայտված է նաև Վճռաբեկ դատարանի կողմից **թիվ ԼԳ/0197 գործով 26.12.2008 թվականին** կայացված որոշման մեջ: Մասնավորապես, նշված որոշման 34-րդ կետում ասված է, որ հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո նա պետք է անհապաղ (72 ժամվա ընթացքում) տարվի դատավորի մոտ: Վճռաբեկ դատարանը գտել է, որ մեղադրյալի՝ հետախուզման մեջ գտնվելու հանգամանքը չէր կարող խոչընդոտ հանդիսանալ ի հայտ գալուց հետո անհապաղ դատավորի մոտ տանելու համար:

Նույն որոշման համաձայն, հիմք ընդունելով ՀՀ իրավական համակարգում Եվրոպական Կոնվենցիայի բարձրագույն իրավաբանական ուժը, ինչպես նաև՝ ազատությունից զրկված անձանց անհապաղ դատարանին ներկայացնելու՝ Կոնվենցիայով հստակ ամրագրված և Եվրոպական Դատարանի նախադեպային պրակտիկայում բազմիցս վերահաստատված պահանջի ներպետական երաշխավորման պահանջը, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ ներպետական օրենսդրության մակարդակում ազատության իրավունքի ապահովման անհրաժեշտ երաշխիք պետք է լինի հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո, արդեն նրա ներկայությամբ, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկումը նախաքննության կատարման վայրի դատարանում: **Դա հնարավորություն կտա նվազեցնել կամայական կալանավորման դեպքերը, ինչպես նաև կապահովի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության համար միջազգային պարտավորություն հանդիսացող պահանջների կատարումը:**

Թեև առաջին ատյանի դատարանում դատական քննությանը սույն ձեռնարկում առանձին բաժին է նվիրված, սակայն հայտնի է, որ այդ փուլում նույնպես առաջանում են ամբաստանյալի կալանավորման հետ կապված խնդիրներ, ուստի հեղինակը նպատակահարմար համարեց դրանց անդրադառնալ սույն գլխում: Նախ և առաջ, կանգ առնենք այն փուլի վրա, որը հաճախակի է դուրս մնում պաշտպանների ուշադրությունից: Խոսքը վերաբերում է դատական քննություն նախապատրաստելու փուլին (քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ գլուխ): Որպես կանոն (եզակի բացառություններով), պաշտպաններն այս փուլում նախաձեռնություն չեն ցուցաբերում, սպասելով այն պահին, երբ դատարանից կստանան ծանուցագիր՝ առաջին դատական նիստի վայրի և ժամանակի մասին: Մինչդեռ, եթե խոսում ենք խափանման միջոցների մասին, հիշենք, որ այս փուլում դատարանը, ի թիվս այլ հարցերի, քննության է առնում նաև մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու և դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը՝ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում: Եթե հիմքեր ունեք համարելու, որ Ձեր պաշտպանյալի նկատմամբ խափանման միջոցը ճիշտ չի ընտրված, ապա դատախազի կողմից գործը դատարան ուղարկելուց հետո

Գուք կարող եք անմիջապես դիմել դատարան՝ տվյալ խափանման միջոցը վերացնելու կամ փոփոխելու պահանջով: Նման դեպքում դատարանը, գործը դատական քննության նախապատրաստելու փուլում, պարտավոր կլինի քննության առնել Ձեր միջնորդությունը և, այն հիմնավորված համարելով, վերացնել կամ փոփոխել մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցը: Հակառակ դեպքում դատարանը իր որոշումը կկայացնի՝ առանց Ձեր տեսակետը հաշվի առնելու, ինչը գործնականում արտահայտվում է նրանով, որ դատական քննություն նշանակելու մասին որոշման մեջ դատարանը պարզապես նշում է, որ խափանման միջոցն ընտրված է ճիշտ և այն վերացնելու (փոփոխելու) հիմքեր չկան:

Ուշադրություն. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն իր վճիռներում (տես, օրինակ՝ **Ջեսիուսն ընդդեմ Լիտվայի** գործով 31.07.2000 թվականի վճիռը) արտահայտել է այն դիրքորոշումը, որ ցանկացած նորմ, որը հիմք է տալիս իշխանությանը անորոշ ժամանակով անձին պահել կալանքի տակ, հակասում է իրավական որոշակիության սկզբունքին: Այս տեսանկյունից, Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետին հակասող կարող է ճանաչվել դատական քննություն նշանակելու մասին դատարանի ցանկացած որոշում, որում անձի նկատմամբ կիրառված կալանքը թողնվում է անփոփոխ՝ առանց այդ կալանքի ժամկետի նշման:

Բացի այդ, գործի դատական քննության ընթացքում, հատկապես այն դեպքերում, երբ դատավարությունը ձգձգվում է, դատարանը պարտավոր է ժամանակ առ ժամանակ անդրադառնալ խափանման միջոցի հարցին: Խափանման միջոցի վերացման կամ փոփոխման հարցը կարող է նախաձեռնվել նաև Ձեր կողմից՝ դատավարության ցանկացած փուլում:

Ինչպես նշել է Եվրոպական դատարանը **Աստենովն ու մյուսներն ընդդեմ Բուլղարիայի** գործով կայացված իր վճռում, «... 5-րդ հոդվածի 4-րդ կետը պահանջում է, որպեսզի նախնական կալանքի վերցված անձը հնարավորություն ունենա ողջամիտ ժամկետներում դիմել դատարան՝ իրեն կալանքի վերցնելու օրինականությունը վիճարկելու համար: Հաշվի առնելով, որ Կոնվենցիայի տեսանկյունից նման կալանավորումը կարող է իրականացվել միայն խիստ սահմանափակ ժամկետով, պարբերական ստուգումները պետք է անջատված լինեն իրարից բացառապես կարճ ժամանակահատվածներով»:
(կետ 162)

Այնուամենայնիվ, գործի դատական քննության ընթացքում, հատկապես երբ քննությունը ձգձգվում է ոչ պաշտպանական կողմի մեղքով, ցանկալի է ժամանակ առ ժամանակ ցուցաբերել նախաձեռնություն, չսպասելով, մինչև դատարանն ինքը որոշի կրկին անդրադառնալ խափանման միջոցի հարցին:

Չպետք է ստեղծվի տպավորություն, որ խափանման միջոցներից բողոքարկման է ենթակա միայն կալանավորումը: Խափանման մյուս միջոցները ևս դատավարական հարկադրանքի միջոցներ են ու որոշակիորեն սահմանափակում են մեր վստահորդների իրավունքներն ու ազատությունները:

Հավանաբար, հանդիպել եք դեպքերի, երբ դատարանը մերժել է որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը: Ընդ որում, լինում են դեպքեր, երբ

քննիչի միջնորդությունը մերժելիս դատարանը հատկապես նշում է, որ հիմքեր չկան ենթադրելու, որ մնալով ազատության մեջ, մեղադրյալը կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից: Բոլորիս քաջ հայտնի է, թե ինչ է տեղի ունենում դատարանի նման որոշումից հետո՝ քննիչն անմիջապես մեղադրյալի նկատմամբ կիրառում է մեկ այլ խափանման միջոց՝ ստորագրություն չհեռանալու մասին, ընդ որում, այդպիսի խափանման միջոց կիրառելու մասին որոշումը, որպես կանոն, կամ որևէ պատճառաբանություն չի պարունակում, կամ էլ՝ պատճառաբանվում է նրանով, որ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից: Մեր պաշտպանյալները (հաճախ նաև՝ մենք ինքներս) այնքան ուրախ ենք լինում այն բանից, որ դատարանը մերժել է կալանավորման մասին, միջնորդությունը, որ ուրախությամբ համաձայնում են ցանկացած մեկ այլ խափանման միջոցի և միտք անգամ չեն ունենում բողոքարկելու այն: Մինչդեռ, եթե նկատեցիք բերված օրինակից, որպես խափանման միջոց չհեռանալու մասին ստորագրությունն ընտրելը ուղղակի հակասում է դատարանի որոշմանը:

Մի լրացուցիչ նկատառում՝ անազատության մեջ պահվող պաշտպանյալի պահման պայմանների հետ կապված իրավաբանական օգնություն ցույց տալու վերաբերյալ: Ինչպես գիտենք, ձերբակալված և կալանավորված անձանց պահելու կարգը, պայմանները, այդ ընթացքում նրանց իրավունքներն ու ազատությունները մանրամասնորեն ամրագրված են «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում: Սակայն միշտ չէ, որ ձերբակալվածների պահման վայրում (ՁՊՎ) կամ քրեակատարողական հիմնարկներում պահպանվում են այդ օրենքի պահանջները: Այսպիսով, անազատության մեջ հայտնված անձի պաշտպանի պարտականությունների շրջանակը չի սահմանափակվում անձի ձերբակալությունը կամ կալանավորումը վիճարկելով: Պաշտպանը պարտավոր է նաև ապահովել (և այս հանգամանքը սխալ չէր լինի ամրագրել վստահորդի հետ կնքվող պայմանագրում), որպեսզի անազատության մեջ պահելու վայրում չխախտվեն իր պաշտպանյալի՝ օրենքով և միջազգային պայմանագրերով նախատեսված իրավունքներն ու ազատությունները:

Խնդիր 1. ունկնդիրներին առաջարկվում է բողոքարկել անձի նկատմամբ որպես խափանման միջոց կալանքը կիրառելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը, որը դատարանի կողմից պատճառաբանվել է նրանով, որ X-ը մեղադրվում է երկու ծանր հանցագործության կատարման մեջ, որոնցից յուրաքանչյուրի համար օրենքով սահմանված է ազատազրկում չորսից մինչև ութ տարի ժամկետով: Դատարանը՝ հղում կատարելով Սվիպստան ընդդեմ Լատվիայի գործով Եվրոպական դատարանի կողմից կայացված վճռի վրա¹³ գտել է, որ մեղադրյալին մեղսագրվող հանցագործության ծանրությունը բավարար հիմք է՝ նրան կալանավորելու համար: Միաժամանակ դատարանն իր

¹³ «Սվիպստան ընդդեմ Լատվիայի» գործով 2006թ. մարտի 9-ի որոշման մեջ Եվրոպական դատարանն ընդունել է, որ ի սկզբանե դիմողին մեղսագրվող հանցագործության ծանրությունը կարող էր բավարար լինել նրան ազատությունից զրկելը հիմնավորելու համար (տես Svipsta v. Latvia, 9 մարտի 2006թ., կետ 111):

որոշման մեջ վկայակոչել է այնպիսի նյութեր (երկու առերես հարցաքննության արձանագրություններ), որոնք հիմնավոր կասկած են առաջացնում՝ մեղադրյալի կողմից նրան վերագրվող հանցագործությունը կատարած լինելու վերաբերյալ:

Խնդիր 2. *ունկնդիրներին առաջարկվում է կազմել համապատասխան դիմում՝ որպեսզի կալանքի տակ գտնվող իրենց պաշտպանյալին (ով մասնագիտությամբ լրագրող է ու թերթերից մեկի խմբագիր) բույլատրվի խցում ունենալու համակարգիչ: Առաջադրանքի մեջ է մտնում՝ պարզել այն մարմինը, ուր պետք է ներկայացվի համապատասխան միջնորդությունը, գտնել ոլորտը կանոնակարգող իրավունքը և պատշաճ հիմնավորել միջնորդությունը:*

3. Տուժողի ներկայացուցչությունը

Մաս 1. Տուժողի, տուժողի իրավահաջորդի, քաղաքացիական հայցվորի ներկայացուցչի կարգավիճակի ստանձնումը, քաղաքացիական հայցի հարուցումը քրեական դատավարությունում

Ինչպես արդեն քննարկվեց սույն ձեռնարկի առաջին բաժնում՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը՝ որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը, բացառությամբ մերձավոր ազգականի (թվարկված են այդպիսիք), կամ մերձավոր ազգականին կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանող իրավաբանական անձի շահերը դատարանում ներկայացնելու դեպքերի: Այս դրույթն, ի թիվս այլի, տարածվում է նաև քրեական դատավարությունում տուժողի, տուժողի իրավահաջորդի, քաղաքացիական հայցվորի ներկայացուցչության վրա:

Որպես նշված սուբյեկտների ներկայացուցիչ ներգրավվելու համար փաստաբանը վարույթն իրականացնող մարմնին պետք է դիմում ներկայացնի, որին կցի վստահորդի գրավոր դիմումն այն մասին, որ վերջինս ցանկանում է, որպեսզի իր ներկայացուցչությունն իրականացվի տվյալ փաստաբանի կողմից, ինչպես նաև փաստաբանական գործունեության իր արտոնագրի պատճենը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ասված է՝

«1. Տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչներ են հանդիսանում այն անձինք, որոնք դատավարության նշված մասնակիցների կողմից լիազորված են քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնելու նրանց օրինական շահերը:

2. Քրեական դատավարությունում որպես տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչներ կարող են մասնակցել փաստաբաններ և դատավարության համապատասխան մասնակցի կողմից տրված լիազորագիր ունեցող այլ անձինք: Քրեական գործով վարույթում որպես քաղաքացիական հայցվոր կամ քաղաքացիական պատասխանող մասնակցող

իրավաբանական անձի ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան իրավաբանական անձի դեկլարը՝ վկայական ներկայացնելու դեպքում:»:

Ինչպես կարելի է կռահել այս նորմից՝ լիազորագիր ներկայացնելու պարտականություն դրվում է միայն փաստաբան չհանդիսացող ներկայացուցչի վրա (այն մասին, թե բացի փաստաբանից ո՞վ կարող է լինել ներկայացուցիչ՝ տես վերևում): Թեև նորմի շարադրանքը որոշ տարակարծությունների տեղիք է տալիս, սակայն սույն ձեռնարկի հեղինակը չգիտի այնպիսի դեպք, երբ գործնականում փաստաբանի մասնակցությունը որպես վերը նշված սուբյեկտներից որևէ մեկի ներկայացուցիչ վարույթն իրականացնող մարմինը պայմանավորեր փաստաբանի կողմից լիազորագիր ներկայացնելով:

Սակայն, նախքան քրեական գործով վարույթում որպես տուժողի, տուժողի իրավահաջորդի, քաղաքացիական հայցվորի ներկայացուցիչ ներգրավվելը հաճախ անհրաժեշտ է լինում, որպեսզի, նախ և առաջ, մեր վստահորդի ձեռք բերի տուժողի (տուժողի իրավահաջորդի, քաղաքացիական հայցվորի) կարգավիճակ: Որպես կանոն, անձի՝ տուժող կամ տուժողի իրավահաջորդ ճանաչվելու հիմքերի առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինն իր նախաձեռնությամբ համապատասխան որոշում է կայացնում և այդ հարցում խոչընդոտներ չեն առաջանում: Սակայն լինում են դեպքեր, երբ տուժող (տուժողի իրավահաջորդ) ճանաչվելու հանգամանքը վեճի առարկա է դառնում տվյալ անձի և վարույթն իրականացնող մարմնի միջև: Նման դեպքում անձը (նրա փաստաբանը, նրան իրավաբանական օգնություն ցույց տվող այլ անձը), դիմում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգին: Մասնավորապես, նշված հոդվածի երկրորդ մասում ասված է, որ տուժող, քաղաքացիական հայցվոր, քաղաքացիական պատասխանող, նրանց օրինական ներկայացուցիչ կամ ներկայացուցիչ ճանաչելու մասին պահանջը պետք է անհապաղ քննության առնվի քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ այն ստանալու պահից 3 օրվա ընթացքում: Պահանջի վերաբերյալ ընդունվող որոշման մասին անմիջապես ծանուցվում է դիմողը՝ նրան ուղարկելով համապատասխան որոշման պատճենը: Իսկ նույն հոդվածի երրորդ մասում ասված է, որ դիմողն իրավունք ունի իրեն դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշման պատճենը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում համապատասխան մերժումը բողոքարկել դատարան կամ, եթե քրեական վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշման պատճենը չի ստացվել՝ բողոք տալու պահից մեկ ամսվա ընթացքում դիմել դատարան՝ իրեն դատավարության մասնակից ճանաչելու մասին պահանջով:

Այս նորմում կան մի շարք դրույթներ, որոնց վրա ցանկալի է հատուկ ուշադրություն դարձնել. նախ, այն պարունակում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով¹⁴ սահմանված ժամկետներից տարբերվող ժամկետներ: Բացի այդ, ի տարբերություն 290-րդ հոդվածի 5-րդ մասի, այս դեպքում դատարանը ոչ թե որոշում է կայացնում՝ «անձի իրավունքների և ազատությունների

¹⁴ Նշված հոդվածը սահմանում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների (անգործության)՝ դատարան բողոքարկելու կարգը, ժամկետները և դրա հետ կապված դատավարական այլ ընթացակարգերը:

խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին», այլ՝ ինքն է վերացնում այդ խախտումը, ճանաչելով անձին դատավարության մասնակից:

Տուժող ճանաչվելու միջնորդության բավարարման համար անհրաժեշտ է, որպեսզի տվյալ անձը հիմնավորի, որ այն հանցագործությամբ, որի վերաբերյալ քրեական գործ է քննվում, իրեն անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մաս):

Քաղաքացիական հայցվոր ճանաչվելու համար անհրաժեշտ է, որպեսզի առկա լինեն հիմքեր, որ այն հանցագործությամբ, որի վերաբերյալ քրեական գործ է քննվում, տվյալ անձին պատճառված լինի քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա վնաս և այդ անձը քրեական գործով վարույթի ընթացքում՝ մինչև առաջին ատյանի դատարանի կողմից դատավճիռ կայացնելու համար խորհրդակցական սենյակ հեռանալը, ներկայացրած լինի քաղաքացիական հայց (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մաս, 158-րդ հոդվածի 2-րդ մաս):

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայց հարուցելու հետ կապված կան որոշակի առանձնահատկություններ. նախ՝ քաղաքացիական հայցը քրեական դատավարությունում հարուցվում է միայն մեղադրյալի, կասկածյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար: Այստեղ հեղինակը կարևոր է համարում անդրադառնալ «կամ» շաղկապին՝ դա նշանակում է, որ՝ մեղադրյալի դեմ հայց հարուցելու դեպքում նույն պահանջը համապարտության կարգով չի կարող ներկայացվել ընդդեմ այն անձի, ով օրենքով գույքային պատասխանատվություն է կրում մեղադրյալի գործողությունների համար, օրինակ, ավտովթարի արդյունքում պատճառված նյութական վնասի հատուցումը մեղավորից՝ երթուղային ավտոբուսի ավտովարորդից պահանջելը կարող է գրկել քաղաքացիական հայցվորին այդ նույն պահանջը համապարտության կարգով այդ երթուղային ավտոբուսի սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի դեմ ուղղելու հնարավորությունից, մինչդեռ քաղաքացիական դատավարությունում, հավանաբար, մենք այդ հայցը կուղղեինք նրանց երկուսի դեմ, դրանով բարձրացնելով հատուցում ստանալու հավանականությունը: Ճիշտ է՝ մինչև օրս հեղինակին հայտնի չեն դեպքեր, երբ դատարանները հենց այդ պատճառաբանությամբ մերժեն քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցը, սակայն նորմի բովանդակությունը հուշում է, որ քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչը, ցանկության դեպքում, կկարողանա վիճարկել դատավճիռը քաղաքացիական հայցի մասով, եթե դրանով հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման համապարտություն սահմանվի: Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի մյուս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ կարելի է պահանջել միայն հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում, այսինքն՝ պահանջը պետք է լինի միայն գույքային (որպես կանոն՝ բռնագանձել որոշակի գումար): Որևէ պահանջ, կապված, օրինակ, գործարքներն անվավեր ճանաչելու հետ, նույնիսկ եթե այդ գործարքները կնքվել են հանցավոր ճանապարհով և քրեական գործը հարուցված է հենց այդ դեպքի առթիվ, քրեական դատավարությունում քննարկվել չեն կարող: Մյուս

առանձնահատկությունը պետական տուրքի և քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության բացակայությունն է:

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի քննության ժամանակ քաղաքացիական դատավարական օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է, եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն քրեական դատավարության օրենսգրքով: Ինչ վերաբերվում է նյութական իրավունքին, ապա՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցով որոշումն ընդունվում է քաղաքացիական օրենսդրության նորմերին համապատասխան:

Խնդիր. ամբաստանյալը մեղադրվում է տուժողի սպանության մեջ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով: Առաջարկվում է տուժողի իրավահաջորդի անունից կազմել քրեական դատավարությունում քաղաքացիական հայցադիմում, որով պահանջել ինչպես նյութական, այնպես էլ՝ բարոյական վնասի դրամական փոխհատուցում, հիմնվելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի դրույթների վրա:

Մաս 2. Արագացված դատաքննության ընթացքում տուժող կողմի շահերի ներկայացման առանձնահատկությունները

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ՝ եթե մեղադրողը մեղադրական եզրակացության մեջ չի առարկում արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը (մինչև դատաքննությունը սկսվելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում):

Ի՞նչ առանձնահատկություններ ունի դատական քննության արագացված կարգը. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ արագացված կարգով դատական քննություն անցկացնելիս քրեական գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չի կատարվում՝ ուսումնասիրվում են ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Նույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված է, որ դատարանը, արագացված դատաքննության արդյունքում, մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի

երկու երրորդը, իսկ եթե խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա առավել մեղմ պատժով:

Իսկ եթե տվյալ գործով հարուցված է նաև քաղաքացիական հայց, և ամբաստանյալը կամ քաղաքացիական պատասխանողը ընդունում է այն, ապա դատարանը դատավճռով բավարարում է նաև քաղաքացիական հայցը, եթե այն չի հակասում օրենքին: Այդ դեպքում դատարանը պետք է լրացուցիչ պարզի, թե արդյո՞ք հայցի ընդունումը կամավոր է, և արդյո՞ք այն վերաբերվում է այլ անձանց իրավունքներին: Դատարանը, գտնելով, որ հայցի ընդունումը հակասում է օրենքին կամ կամավոր չէ կամ վերաբերվում է այլ անձանց իրավունքներին, հայցը թողնում է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը: Իսկ այն դեպքում, երբ ամբաստանյալը կամ քաղաքացիական պատասխանողը քաղաքացիական հայցը չի ընդունում, ապա դատարանը քաղաքացիական հայցը թողնում է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը (օրենսգրքի 375¹-րդ հոդվածի 6-րդ մաս):

Նույն օրենսգրքի 375¹-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն, դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժում է¹⁵, եթե պարզում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ: Այդ դեպքում դատարանն իր նախաձեռնությամբ՝ նույն օրենսգրքի 309¹-րդ հոդվածի հինգերորդ մասով սահմանված կարգով և ժամկետով¹⁶ հետաձգում է դատական միտքը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին վերահաստատելու մեղադրական եզրակացությունը: Ամբաստանյալի կամ մեղադրյալի անմեղսունակության առնչությամբ հիմնավոր կասկածների առկայության դեպքում դատարանը մերժում է արագացված կարգ կիրառելու միջնորդությունը՝ անցնելով ընդհանուր կարգով գործի քննությանը:

Ինչպես երևում է վերը մեջբերված նորմերից, դատական քննության արագացված կարգ կիրառվելու դեպքում դատարանը հաստատված է համարում ամբաստանյալին մեղսագրվող արարքի փաստական կողմը՝ առանց այդ փաստերը հաստատող կամ հերքող ապացույցներ հետազոտելու, ինչպես նաև՝ հիմք է ընդունում այդ արարքին մինչդատական վարույթի ընթացքում տրված իրավաբանական որակումը: Քննարկման է ենթակա միայն պատժի խստության հարցը, որի համար հետազոտվում են միայն այն ապացույցները, որոնք վերաբերվում են ամբաստանյալի անձին (բնութագրող տվյալները), պատասխանատվությունն ու պատժի մեղմացնող և ծանրացնող հանգամանքներին: Օրենքը նման

¹⁵ Մերժման մյուս հիմքերը բերված են նույն մասի 1-ին պարբերությունում: Արագացված դատաքննություն չի կիրառվի, եթե ամբաստանյալը չի գիտակցում իր կողմից ներկայացված՝ արագացված դատաքննություն կիրառելու վերաբերյալ միջնորդության բնույթն ու հետևանքները կամ դատարանը համոզմունք չունի, որ ամբաստանյալի կողմից միջնորդությունը ներկայացված չէ կամավոր, կամ՝ միջնորդությունը ներկայացնելուց առաջ ամբաստանյալը չի խորհրդակցել իր պաշտպանի հետ (եթե այդպիսին կա):

¹⁶ Քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի հինգերորդ մասի դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր 02.04.2010 թվականի ՍԳ-Ո-872 որոշմամբ:

պայմաններում շատ քիչ հնարավորություններ է տվել տուժողին՝ վիճարկելու ամբաստանյալի արարքը՝ ինչպես դրա փաստական կողմը, այնպես էլ՝ քրեաիրավական որակումը: Մինչդեռ հաճախ տուժողը, դժգոհ լինելով մինչդատական վարույթում գործի քննության որակից, գտնելով, որ մեղադրյալի գործողություններից ոչ բոլորն են բացահայտվել կամ ճիշտ իրավաբանական որակում ստացել (օրինակ՝ տուժողի իրավահաջորդը գտնում է, որ սպանությունը կատարված է եղել՝ այլ հանցանք թաքցնելու նպատակով, որի ապացուցման համար ցանկացել է մի շարք վկաներ ներկայացնել, սակայն նախաքննության ընթացքում մերժում է ստացել), նախաքննության ընթացքում համապատասխան միջնորդություններ ու բողոքներ ներկայացնելուց և մերժումներ ստանալուց հետո իր խախտված իրավունքների պաշտպանության հեռանկարները կապում է դատական քննության հետ: Նման պայմաններում ոչ տուժողը և ոչ էլ դատարանը (եթե անգամ վերջինս կիսում է տուժողի կարծիքը) օրենքով չունեն իրավիճակի վրա ազդելու որևէ իրական հնարավորություն: Օրենքի կարգավորումները դնում են տուժողին ծանր կացության մեջ այն դեպքերում, երբ նրա դիրքորոշումը չի համընկնում մինչդատական վարույթն իրականացրած մարմնի և դատախազության դիրքորոշման հետ. նման դեպքերում, ըստ էության, տուժողի համար «արդարադատություն» իրականացնող մարմինը դառնում է դատախազությանը:

Հեղինակի կարծիքով, նշված բացերը մեծամասամբ լրացվել են Տիգրան Քամալյանի գործով (գործ թիվ ԵՇԳ/0097/01/09) ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 26.03.2010 թվականին կայացված որոշմամբ: Նշված որոշումն ուշագրավ է նաև նրանով, որ պարունակում է տուժողի իրավունքների վերլուծություններ ոչ միայն ՀՀ Սահմանադրության, այլ նաև՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական դատարանի, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, ինչպես նաև՝ միջազգային-իրավական այլ կարգավորումների տեսանկյուններից: Բերենք այդ որոշման՝ մեր տեսանկյունից առավել ուշագրավ հատվածները.

«14. ... դատական քննության արագացված կարգ կիրառելու դեպքում լիարժեքորեն երաշխավորված են ամբաստանյալի՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պաշտպանության իրավունքի իրականացման բոլոր հնարավորությունները: Օրենսդիրն արագացված կարգի կիրառման դեպքում սահմանում է ամբաստանյալի արդարացի դատաքննության իրավունքի կենսագործման համար անհրաժեշտ իրավունքների բավական լայն շրջանակ, ինչպես նաև ամբաստանյալի համար նախատեսում է բարենպաստ իրավական հետևանքներ՝ մեղմ պատիժ նշանակելու, հայցի դեմ առարկելու դեպքում այն առանց քննության թողնելու, դատական ծախսերից ազատվելու և այլ ձևով:

15. Միևնույն ժամանակ, սույն որոշման 13-րդ կետում շարադրված իրավանորմների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը որևէ կանոն կամ ընթացակարգ չի սահմանում, որն ամրագրեր տուժող կողմի (այդ թվում՝ տուժողի, տուժողի ներկայացուցչի և օրինական ներկայացուցչի, տուժողի իրավահաջորդի) ներգրավվածությունը արագացված կարգի կիրառման հարցում: Այլ կերպ՝ տուժող կողմի դիրքորոշումը հաշվի առնելու պահանջը ամրագրված չէ ո՛չ մեղադրողի համար՝ արագացված դատական քննության դեմ առարկելու կամ չառարկելու հարցը

լուծելիս, և ո՛չ էլ դատարանի համար՝ արագացված դատական քննության անցնելու մասին որոշում կայացնելիս:

16. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն»:

17. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը հռչակում և ամրագրում է արդարացի դատական քննության իրավունքը: Համաձայն այդ հոդվածի 1-ին մասի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ (...) իր գործի հրապարակային քննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Տուժողի իրավահաջորդ է ճանաչվում նրա մերձավոր ազգականներից մեկը, որը ցանկություն է հայտնել քրեական գործով վարույթում իրականացնել մահացած (...) տուժողի իրավունքները և պարտականությունները»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Տուժողի իրավահաջորդը քրեական գործով վարույթին մասնակցում է տուժողի փոխարեն և ունի վերջինիս իրավունքները և պարտականությունները, (...)»:

18. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար» սահմանադրական ձևակերպումը որոշակիորեն վերաբերելի է նաև քրեական գործով տուժողին (նաև տուժողի իրավահաջորդին), քանի որ տուժողն այն անձն է, որի իրավունքները հանցագործությամբ խախտվում են: Ընդ որում, տուժողի իրավաչափ շահերի շրջանակում է իրեն հասցված վնասի վերականգնումը, իրեն վնաս պատճառած արարքի հանգամանքների լրիվ բացահայտումը ու դրա ճիշտ քրեաիրավական որակումը, իր նկատմամբ հանցանք կատարած անձի դատապարտումը և արդարացի պատժի նշանակումը: Այդ շահերի ապահովման երաշխիքներից է տուժողի իրավունքը, որպեսզի իր գործով դատական քննությունն ընթանա «արդարության բոլոր պահանջների պահպանմամբ»:

19. Տուժողի համար իր գործի «արդարության բոլոր պահանջների պահպանմամբ» քննությունը, *inter alia*, ենթադրում է, որ

ա. Դատախազը (մեղադրողը) արագացված դատական քննության դեմ առարկելու կամ չառարկելու հարցը լուծելիս, պետք է հաշվի առնի տուժողի դիրքորոշումը՝ որպես մեղադրանքի կողմից սուբյեկտի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 21-րդ կետ):

բ. Դատարանը չի կարող անցնել դատական քննության արագացված կարգի՝ առանց այդ հարցի կապակցությամբ տուժողի դիրքորոշումը պարզելու:

գ. Դատարանը կարող է դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին մեղադրյալի միջնորդությունը մերժել, եթե դրա դեմ առարկում է տուժողը: Այդ դեպքում դատարանը կայացնում է առանձին որոշում, որում պատճառաբանում է արագացված դատական քննության արդյունքում տուժողի օրինական շահերի վտանգման հանգամանքը:

20. Դատախազի (մեղադրողի) և դատարանի համար, սույն որոշման նախորդ կետի հիման վրա, համապատասխանաբար, դատական քննության արագացված կարգի դեմ առարկելու և ամբաստանյալի համապատասխան միջնորդությունը մերժելու հարցը լուծելիս տուժողի դիրքորոշումը պետք է վճռական նշանակություն ունենա մասնավորապես այն դեպքերում, երբ տուժողը՝

ա. ողջամտորեն հիմնավորում է, որ իրեն հասցված վնասն ամբողջությամբ հատուցված չէ,

բ. փաստարկված առարկում է գործի փաստական հանգամանքների դեմ:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը կիրառել է դատական քննության արագացված կարգ, իսկ տուժողի իրավահաջորդ Ա. Արշակյանը դատաքննությանը չի մասնակցել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), որի արդյունքում հնարավորություն չի ունեցել կարծիք արտահայտել ինչպես մեղադրանքի, այնպես էլ պատժի վերաբերյալ:

III. Տուժողի շահերի պաշտպանության վերաբերյալ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումը.

22. Սույն որոշման 19-րդ կետում Վճռաբեկ դատարանի արտահայտված իրավական դիրքորոշումը հիմնվում է ոչ միայն ՀՀ Սահմանադրության, այլ նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա:

23. Այսպես՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ... կյանքի ... նկատմամբ հարգանքի իրավունք»: Համաձայն *Յանկովիչի ընդդեմ Խորվաթիայի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի 45-րդ կետի՝ «... անձնական կյանքի գաղափարը ներառում է նաև անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը: 8-րդ հոդվածի ներքո Պետությունները կրում են անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունն այլ անձանց ոտնձգություններից պաշտպանելու պարտականություն: Այդ նպատակով նրանք պետք է հաստատեն ու գործնականում կիրառեն մասնավոր անձանց ոտնձգություններից պաշտպանություն տրամադրող համարժեք իրավական կառուցակարգ»:

Այսպիսով, ՄԻԵԴ-ը սահմանել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պետության համար առաջացնում է ոչ միայն նեգատիվ պարտականություններ (ձեռնպահ մնալու համապատասխան ազատություններին միջամտելուց), այլ նաև պոզիտիվ պարտականություններ (inter alia, սահմանելու տուժողների իրավունքների քրեադատավարական պաշտպանության համարժեք կառուցակարգեր):

Խորվաթիայի քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում էր տուժողի իրավունքների պաշտպանության մի շարք կառուցակարգեր, այդ թվում՝ սուբսիդիար մեղադրողի գործառույթ իրականացնելու իրավունքը (տե՛ս *Յանկովիչի* վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 25-րդ կետ): Այնուհանդերձ, *Յանկովիչի* գործով ՄԻԵԴ-ը գտել է, որ պետությունը չի կատարել իր այդ պոզիտիվ պարտականությունը, քանի որ inter alia, տուժողին իրական հնարավորություն չի տրվել իրականացնելու իր դեմ ոտնձգություն թույլ տված անձի քրեական հետապնդում (տե՛ս *Յանկովիչի* վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 57-րդ կետ): Դրա հիման վրա արձանագրվել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում (տե՛ս *Յանկովիչի* վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 58-րդ կետ):

24. *Յանկովիչի ընդդեմ Խորվաթիայի* գործով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումը սույն գործի փաստերի վրա տարածելով (տե՛ս սույն որոշման 21-րդ կետը)՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված արագացված դատական քննության կանոնակարգման պայմաններում, երբ դատական քննության արագացված կարգի անցնելու մասին

որոշում կայացնելիս տուժողը հնարավորություն չունի արտահայտել իր դիրքորոշումը (տե՛ս սույն որոշման 14-15-րդ կետերը), տուժողին հնարավորություն չի տրվում իրականացնել իր շահերի արդյունավետ պաշտպանություն:

25. Հիմք ընդունելով սույն որոշման 14-24-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական քննությանը տուժողի իրավահաջորդի մասնակցությունը, ինչպես նաև արագացված դատաքննության անցնելիս նրա դիրքորոշումը հաշվի առնելն անհրաժեշտ էին արդարացի դատաքննության, ինչպես նաև անձի անձնական կյանքի հարգման հիմնարար իրավունքների ապահովման համար:

IV. Տուժողի շահերի պաշտպանության վերաբերյալ ուղղորդող նշանակություն ունեցող միջազգային-իրավական կարգադրագրերը.

25. Սույն գործով իրավական դիրքորոշում ձևավորելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առել նաև Մարդու իրավունքների միջազգային իրավունքում նկատվող իրավական զարգացման միտումները:

26. Այսպես՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 1985 թվականին ընդունված «Տուժողի դերը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» N R (85) 11 հանձնարարականի նախաբանում հատուկ ընդգծվել է, որ այն ընդունվել է՝ ելնելով այն հանգամանքից, որ քրեական արդարադատության նպատակները ավանդաբար ձևակերպվել են պետության և իրավախախտի միջև հարաբերությունների տիրույթում, ինչի արդյունքում այդ համակարգի գործառույթը հաճախ բարդացնում է տուժողի մոտ ծագած խնդիրները, այլ ոչ թե նպաստում դրանց լուծմանը: Մինչդեռ քրեական արդարադատության հիմնական գործառույթը պետք է լինի տուժողի պահանջները բավարարելը և շահերը պաշտպանելը:

Ելնելով վերոշարադրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է ամրացնել տուժողի վստահությունը քրեական արդարադատության համակարգի նկատմամբ՝ Նախարարների կոմիտեն Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին հանձնարարել է վերանայել իրենց օրենսդրությունը և դատական պրակտիկան՝ քրեական արդարադատության համակարգում տուժողի դերը բարձրացնելու մի շարք ուղղություններով:

27. Քրեական արդարադատության համակարգում տուժողի պահանջմունքները բավարարելու և շահերը պաշտպանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պետությունների պարտավորությունը սահմանված է նաև ՄԱԿ-ի հռչակագրում, որի 4-րդ կետի համաձայն՝ հանցագործությունից տուժողները ներպետական օրենսդրությանը համապատասխան պետք է ունենան արդարադատության մատչելիության և իրենց պատճառված վնասի արագ փոխհատուցման իրավունք: Հռչակագրի 6-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ է օժանդակել այն բանին, որ դատական և վարչական ընթացակարգերը, ըստ էության համապատասխանեն հանցագործության զոհերի պահանջներին, այդ թվում՝

ա) դատական քննության ընթացքում տուժողների դերի, դատավարության իրականացման կարգի, ժամկետների և արդյունքների մասին տուժողներին տեղեկատվություն տրամադրելու միջոցով,

- բ) վարույթի ցանկացած փուլում գործի էության վերաբերյալ տուժողներին կարծիք արտահայտելու հնարավորություն ապահովելու և այդ կարծիքները քննարկելու եղանակով, հատկապես երբ տվյալ հարցը վերաբերում է տուժողին,
- գ) ամբողջ դատավարության ընթացքում տուժողին անհրաժեշտ օգնություն տրամադրելու եղանակով, (...),
- ե) գործերի քննության անհարկի ձգձգումները կանխելու և փոխհատուցման մասին կայացված որոշումները կատարելու միջոցով: ...»:

Մաս 3. Մինչդատական վարույթում տուժողի իրավունքները խախտող որոշումների և գործողությունների բողոքարկումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կիրառության հետ կապված հարցեր

Հաճախ մեզ դիմում են անձինք, ովքեր համարում են, որ տուժել են հանցագործությունից: Այս դեպքում, ծանոթանալով վստահորդի խնդրին և համոզվելով, որ նա (կամ այն անձը, ում խախտված իրավունքների պաշտպանության համար նա դիմել է) հանցագործության գոհ է դարձել, մենք նախապատրաստում ենք հանցագործության մասին հաղորդում: Ցանկալի կլինեք, որպեսզի այդ հաղորդումը ստորագրված լինեք հենց հանցագործությունից տուժած անձի (նրա իրավահաջորդի, օրինական ներկայացուցչի) կողմից:

Հաղորդումը կազմելիս, նախ և առաջ, ուշադրություն դարձրեք այն հարցին, թե ո՞ր մարմնին պետք է հասցեագրված լինի այդ հաղորդումը: Այս առումով հաշվի առեք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի դրույթները: Եթե չեք կարողանում կողմնորոշվել, թե որ մարմնի ենթակայությանն է պատկանում տվյալ գործը, ապա պարզապես կարող եք հաղորդումը հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազին:

Հաղորդման մեջ ցանկալի է ամենայն մանրամասներով (ներառյալ՝ տեղը, ժամանակը, ենթադրյալ հանցագործության կատարման եղանակը) նկարագրել այն դեպքը, որի արդյունքում տուժել է վստահորդը, անձին կամ անձանց, ովքեր կատարել են հանցավոր գործողությունները, եթե դրանք հայտնի են վստահորդին, այն հետևանքները, որոնք այդ դեպքի արդյունքում կրել է վստահորդը (մարմնական վնասվածքները, նյութական կամ բարոյական վնասը): Շատ կարևոր է, հնարավորության դեպքում, մատնանշել նաև այն անձանց, ովքեր կարող են հաստատել հաղորդման մեջ նշված փաստերը կամ դրա առանձին դրվագները:

Պարտադիր չէ, սակայն ցանկալի է, որպեսզի նշվի քրեական օրենսգրքի հատուկ մասի այն հոդվածը, որով նախատեսված հանցագործության հատկանիշներ են, Ձեր կարծիքով, առկա: Այդպիսի մատնանշումը չի սահմանափակում վարույթն իրականացնող մարմնին՝ մեկ այլ հոդվածի հատկանիշներ հայտնաբերելու դեպքում քրեական գործ հարուցել այդ, այլ ոչ թե Ձեր մատնանշած հոդվածով: Հաղորդումը պետք է եզրափակվի քրեական գործ հարուցելու պահանջով (խնդրանքով):

Հաղորդումը կարող է ներկայացվել անմիջապես հասցեատիրոջը (օրինակ՝ ոստիկանության տարածքային բաժին, ՀՀ դատախազություն կամ այլ), կամ առաքվել հասցեատիրոջը փոստով: Երկու դեպքում էլ պարտադիր է, որպեսզի Ձեզ մոտ մնա հավաստիք առ այն, որ այդ օրը տվյալ հաղորդումը ներկայացված կամ առաքված է եղել տվյալ մարմնին (անմիջականորեն հանձնելու դեպքում՝ գրասենյակի կնիքը, փոստային առաքման դեպքում՝ անդորրագիրը):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ հանցագործության մասին հաղորդումները պետք է քննարկվեն ու լուծվեն ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետում կարող են կատարվել միայն նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դատավարական գործողությունները: Արդյունքում պետք է կայացվի նույն օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված երեք որոշումներից մեկն ու մեկը՝ քրեական գործ հարուցելու, քրեական գործ հարուցելը մերժելու կամ հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին որոշում:

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել այդ որոշումը կայացնող պաշտոնատար անձի վերադաս դատախազին՝ որոշումը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Դատախազը, գտնելով բողոքը հիմնավորված, վերացնում է բողոքարկվող որոշումը, հարուցում է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար այն ուղարկում է քննիչին¹⁷ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր):

Եթե դատախազի կողմից մեր բողոքը մերժվում է, ապա քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը բողոքարկվում է դատարան՝ դատախազի որոշումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում: Եթե դատախազի կողմից բողոքի վերաբերյալ որոշում չի կայացվել (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսել է նաև այդպիսի տարբերակ), ապա՝ բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասում ասված է, որ քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը: Այս նորմի ձևակերպումից հետևում է այն պահանջը, որը պետք է պարունակի բողոքը՝ «վերացնել քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ xxx քննիչի կողմից YYY թվականին կայացված որոշումը»:

Ուշադրություն. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի ձևակերպումը որոշակի հակասություն ունի նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի ձևակերպման հետ, որտեղ ասված է, որ բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատարանը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության

¹⁷ Ընդգծված հատվածից կարելի է եզրակացնել, որ դատախազին ներկայացված բողոքի եզրափակիչ մասը պետք է պարունակի խնդրանք՝ «... վերացնել քրեական գործ հարուցելը մերժելու մասին xxx քննիչի xxx թվականի որոշումը, հարուցել քրեական գործ և նախաքննություն կատարելու համար այն ուղարկել համապատասխան քննչական մարմնի [քննիչի]»:

մասին, այսինքն՝ դատարանն ոչ թե անմիջականորեն է վերականգնում անձի խախտված իրավունքները, այլ՝ այդ պարտականությունը դնում է վարույթն իրականացնող մարմնի վրա: Բողոքի եզրափակիչ մասում այս խնդրից խուսափելու համար խորհուրդ կտայինք պահանջը ձևակերպել, օրինակ, հետևյալ կերպ. «խնդրում եմ վերացնել քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ xxx քննիչի կողմից YYY թվականին կայացված որոշումը և (կամ) որոշում կայացնել դիմողի՝ սույն բողոքում մատնանշված իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին»:

Համանման ընթացակարգ է նախատեսված՝ քրեական գործով վարույթը կարճելու վերաբերյալ որոշումները բողոքարկելու համար: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածը նախատեսում է, որ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը՝ դրա պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել այդ որոշումը կայացրած պաշտոնատար անձի վերադաս դատախազին: Բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը՝ դրա պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան:

Հավանաբար, ընթերցողը նկատեց, որ այս նորմով սահմանված՝ դատախազի որոշումը դատարան բողոքարկելու ժամկետը տարբերվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետից. առաջին դեպքում օրենքը սահմանել է 7 օր, երկրորդ դեպքում՝ մեկ ամիս: Միևնույն իրավահարաբերությունները կարգավորող տարբեր նորմերի միջև առկա այս անհամապատասխանությունը լուծվել է ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից 21.12.2010 թվականին կայացված թիվ ՍԳ-Ո-930 որոշմամբ, որով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը՝ դրա պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան» դրույթը՝ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման հետ անհամապատասխանության պայմաններում և դատական պրակտիկայում դրան տրված բովանդակության շրջանակներում ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին հակասող և անվավեր:

Ինչպես երևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասից, այդ հոդվածով նախատեսված դատական պաշտպանության մեխանիզմները կրում են սուբսիդիար բնույթ՝ դրանք կարող են գործի դրվել միայն այն դեպքում, երբ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումները և գործողությունները բողոքարկվել են վերադաս դատախազին և դիմողի բողոքը մերժված է եղել, կամ՝ մեկամսյա ժամկետում բողոքի վերաբերյալ որոշում չի կայացվել: Օրենսդրի մոտեցումը միանգամայն պարզ է՝ խոսքը վերաբերվում է մինչդատական վարույթում

կատարված գործողություններին և ընդունված որոշումներին, որոնց անմիջական բողոքարկումը դատարան կարող է զգալի չափով իմաստագրվել դատախազի դերը դատավարական այդ փուլում:

Դրա հետ մեկտեղ, գոյություն ունեւ որոշակի բաց, կապված վերը նշված մարմինների անգործության¹⁸ վիճարկման հետ: Այդ բացը լրացվել է ՀՀ Սահմանադրական դատարանի 07.12.2009 թվականի ՄԴՈ-844 որոշմամբ, համաձայն որի՝ 290-րդ հոդվածի 1-ին մասի «... և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր: Այլ կերպ՝ անգործությունը, ի տարբերություն գործողությունների և որոշումների, կարող է բողոքարկվել անմիջականորեն դատարան:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով բողոքը ներկայացվում է վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան: Պետք է նշել, որ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով բողոքի քննության ընթացակարգը օրենքում սահմանված չէ, կան միայն առանձին պահանջներ: Այսպես.

Բողոքի (և ոչ թե գործի) քննության մասին տեղյակ են պահվում դիմողն ու վարույթն իրականացնող մարմինը, որոնց չներկայանալը չի խոչընդոտում բողոքը քննելուն: Սակայն դատավորը կարող է պարտադիր համարել նշված անձանց ներկայությունը: Վարույթն իրականացնող մարմինը և դիմողը բացատրություններ տալու իրավունք ունեն:

Մեզ համար կարևոր է հաշվի առնել հոդվածի 4-րդ մասի 3-րդ նախադասությունը, համաձայն որի՝ «Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր»: Այս դրույթը, հատկապես կարևոր է, հաշվի առնելով, որ քրեական գործ հարուցելը մերժելու կամ քրեական գործով վարույթը կարծելու վերաբերյալ որոշումները ստանալուց հետո, բողոքը նախապատրաստելիս, մեզ անհրաժեշտ են լինում հետաքննության մարմնի (քննիչի) կողմից հավաքված (ձեռք բերված) նյութերը, սակայն հաճախ այդ մարմինները հրաժարվում են դրանք տրամադրել մեզ: Պատճառաբանությունները զանազան են լինում. եթե խոսքը գնում է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման հիմքում դրված նյութերին, ապա այդ որոշումը կայացրած պաշտոնյան պատճառաբանում է, որ իր հավաքած նյութերը տրամադրելու պարտականություն օրենքը չի սահմանել, եթե խոսքը գնում է մեղադրյալներից մեկի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկմանը, ապա քննիչը չի տրամադրում գործի նյութերը, պատճառաբանելով, որ նախաքննությունը դեռ շարունակվում է, իսկ եթե խոսքը վերաբերվում է քրեական գործով վարույթը կարճելուն, ապա նյութերը չտրամադրելը քննիչը պատճառաբանում է նրանով, որ դիմողը (որը փաստացի տուժել է դեպքի արդյունքում, սակայն տուժող չի ճանաչվել) քրեական գործով դատավարական որևէ կարգավիճակ չի ունեցել: Նման պայմաններում, նախքան

¹⁸ Օրինակ՝ անձը հանցագործության վերաբերյալ հաղորդում է ներկայացրել, սակայն հաղորդման հասցեատիրոջ կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված երեք որոշումներից որևէ մեկը չի կայացվել:

որոշումը դատախազին բողոքարկելն, անպայման գրավոր պահանջեք նյութերը, դատախազին, իսկ այնուհետև դատարան հասցեագրված բողոքներում, բացի հիմնական պահանջից, նույնպես նշեք, որ նյութերը Ձեզ դեռ չեն տրամադրվել և վերապահում արեք, որ նյութերը տրամադրվելուց հետո Դուք կարող է լրացումներ կատարեք Ձեր ներկայացրած բողոքում: Այն բանից հետո, երբ վարույթն իրականացնող մարմինը նյութերը կներկայացնի դատարան, Դուք՝ ստանալով այդ նյութերի պատճենները և համոզվելով, որ առկա են բողոքը հիմնավորող նյութեր, որոնց մասին Դուք չեք իմացել, կկարողանաք առանց խոչընդոտների լրացնել Ձեր բողոքի հիմքերը:

Խնդիր. Դիմողը հանցագործության մասին հաղորդում է հասցեագրել ոստիկանության տարածքային բաժին, հայտնելով, որ իր [նախկին] ընկերքից մեկ տարի ժամկետով պարտքով գումար էր վերցրել, սակայն պայմանավորված ժամկետում չէր կարողացել վերադարձնել, որի արդյունքում ընկերն իրեն առաջարկել էր այդ փոխառության ժամկետը երկարաձգել ևս մեկ տարով, սակայն պայմանով, որ ինքը (փոխառում), բացի հիմնական գումարը վերադարձնելուց, վճարի 3 տոկոս ամսական: Ինքը համաձայնել է, մեկ տարի վճարել տոկոսը և վերադարձրել փոխառության գումարը, սակայն այժմ համարում է, որ իր ընկերը վաշխառություն է կատարել: Ոստիկանությունը դիմողի հաղորդման վերաբերյալ որոշում չի կայացրել, նրան գրությամբ հայտնել են, որ իր «դիմումում» հանցագործության դեպք մատնանշող փաստեր հիշատակված չեն:

Առաջարկվում է որոշել, թե արդյո՞ք հիմքեր կան դիմողի անունից բողոք ներկայացնելու համար, եթե այո՝ ո՞ր մարմնին պետք է ներկայացվի բողոքը, ի՞նչ ժամկետում, ի՞նչ բովանդակությամբ: Առաջարկվում է կազմել այդպիսի բողոք:

4. Ապացույցներ.

Մաս 1. Ապացույցների նշանակությունը, Ապացույցների հավաքումը, Ապացույցների գնահատումը, Ապացուցումը

Քրեական գործով վարույթի ողջ նպատակն, ըստ էության, մեկն է՝ ապացույցների հավաքումը, հետազոտումը և միայն վերջում՝ դրանց գնահատումը: Իրոք, հետաքննությունը, նախաքննությունը ամբողջությամբ ծառայում են միայն մեկ նպատակի՝ ապացույցների ձեռքբերմանը, դատաքննությունը՝ այդ ապացույցների հետազոտմանը, որոշ դեպքերում նաև՝ նոր ապացույցների ձեռքբերմանը, դատական վիճաբանությունների փուլը՝ հետազոտված ապացույցների վերլուծությանը, որից հետո դատարանը, հեռանալով խորհրդակցական սենյակ, գնահատում է այդ ապացույցները: Ամբողջ դատավարությունն, այսպիսով, դա ապացույցների հետ աշխատանք է: Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված մյուս բոլոր գործողությունները կոչված են ապահովել այդ աշխատանքը, կանոնակարգել այն, ստեղծել պայմաններ այդ ապացույցների հավաքման և գնահատման համար: Ասվածից հետևում է, որ կողմերի հավասարության չափանիշը քրեական դատավարությունում նախ և

առաջ ապացույցներ ձեռք բերելու և ներկայացնելու հարցում նրանց իրավունքների հավասարությունն է: Եթե խնդիրը դիտարկենք այս տեսանկյունից, ապա ստիպված կլինենք փաստել, որ քրեական դատավարությունում կողմերը ակնհայտորեն անհավասար պայմաններում են, քանի որ ապացույցներ ձեռք բերելու և ներկայացնելու հարցում մեղադրանքի կողմն ունի անհամեմատ ավելի մեծ լիազորություններ, քան պաշտպանական կողմը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածով նախատեսված 9 տեսակի ապացույցներից պաշտպանական կողմը կարող է ձեռք բերել և ներկայացնել միայն 2 տեսակը՝ իրեղեն ապացույցները և այլ փաստաթղթերը, ընդ որում, դրանք ապացույց են ճանաչվում միայն վարույթն իրականացնող մարմնի (նախաքննության ժամանակ՝ քննիչի) որոշմամբ: Այսպիսով, նախաքննության ժամանակ պաշտպանական կողմը ստիպված է միջնորդել քննիչին, որպեսզի նա ձեռք բերի իր իսկ կողմից առաջադրված մեղադրանքը հերքող ապացույցներ, օրինակ, հարցաքննել պաշտպանական կողմի այս կամ այն վկային, նշանակել փորձաքննություն կամ կատարել այս կամ այն քննչական գործողությունը: Բերեն մեկ օրինակ պրակտիկայից. եթե մեր պաշտպանյալը հայտարարի, որ իր խոստովանական ցուցմունքները տվել է քննիչի կողմից կիրառված ծեծի ազդեցության տակ, ապա այդ հանգամանքը հիմնավորելու համար մենք պետք է միջնորդենք, որպեսզի այդ նույն քննիչը նշանակի դատաբժշկական փորձաքննություն, պարզելու համար, կան արդյոք մեղադրյալի մարմնի վրա ծեծի հետքեր: Դժվար չէ կռահել, այդ միջնորդությունը բավարարելու հավանականությունը:

Այսպիսով, ապացույցներ ձեռք բերելու տեսանկյունից մենք էապես զիջում են մեղադրանքի կողմին և այդ անհավասարությունը ամրագրված է օրենսդրորեն: Սակայն, արդյո՞ք կարելի է ասել, որ դատավարության ընթացքում մենք հնարավորություն չունենք հավասարը հավասարի մրցելու մեղադրանքի կողմի հետ, արդյո՞ք մենք չունենք այնպիսի լծակներ, որոնք հավասարակշռեն մեղադրանքի կողմի վերը նշված առավելությունը:

Մեր խորին համոզմամբ՝ պաշտպանական կողմը, չունենալով ապացույց ձեռք բերելու որևէ լուրջ հնարավորություն, այնուամենայնիվ ունի լծակներ, որոնք՝ ճիշտ օգտագործվելու դեպքում հնարավորություն են տալիս լիարժեք մրցելու մեղադրանքի կողմի հետ: Նախ և առաջ, խոսքը գնում է անմեղության կանխավարկածի հիմնարար սկզբունքի մասին, որը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 21 հոդվածում: Ամենամաքողական տեսքով այդ սկզբունքը բերված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18 հոդվածում: Ընթերցողի ուշադրությունը հրավիրենք այդ սկզբունքի հետևյալ տարրերի վրա.

«Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով».

«Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման եւ կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը».

«Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի»:

Այսպիսով, թեև մեղադրանքի կողմն ունի ապացույցներ ձեռք բերելու անսահմանափակ հնարավորություններ, սակայն, դրա հետ մեկտեղ, նա է կրում ապացուցման պարտականությունը, ընդ որում, ցանկացած փաստ, որը ապացուցելիս մնացել են չփարատված կասկածներ, պետք է մեկնաբանվի մեղադրյալի համար առավել բարենպաստ ձևով:

Համեմատության համար եկեք մի պահ ենթադրենք, որ ապացույցներ ձեռք բերելու բոլոր լիազորությունները օրենքով փոխանցված լինեին պաշտպանության կողմին, սակայն դրա հետ մեկտեղ պաշտպանական կողմի վրա դրվեր իր անմեղությունն ապացուցելու պարտականությունը: Ակնհայտ է, որ ոչ մի պաշտպան չէր ուզի՝ ունենալով ապացույցներ հավաքելու ամենալայն լիազորությունները, իր վրա վերցնել նաև ապացուցման բեռը: Ասվածից ավելի քան պարզ է դառնում, որ ապացույցներ հավաքելու՝ մեղադրանքի կողմի լիազորությունները հավասարակշռվում են վերջինիս վրա դրված՝ ապացուցման պարտականությամբ:

Եթե հարցին նայել այս տեսանկյունից, ապա կարելի է գալ այն եզրակացության, որ օբյեկտիվորեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված «խաղի կանոններով» պաշտպանվելն ավելի հեշտ է, քան մեղադրելը (մի կողմ թողնենք ավանդույթ դարձած՝ դատարանների մեղադրական մոտեցումը): Խնդիրը կայանում է նրանում, որպեսզի կարողանալ ճիշտ աշխատել մեղադրանքի կողմի հավաքած ապացույցների հետ:

Որպեսզի մշակենք մեղադրանքի ապացույցների հետ աշխատելու ունիվերսալ մեթոդներ, պետք է նախ՝ լավ պատկերացնենք քրեական դատավարությունում ապացուցման ենթակա հանգամանքները: Դրանք սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում.

«Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝

- 1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն).**
- 2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին.**
- 3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները.**
- 4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրվող արարքը կատարելու մեջ.**
- 5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքներ.**
- 6) այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:»:**

Նաև՝ կարևոր է հաշվի առնել, այն հարցերը, որոնք պետք է լուծի դատարանը՝ դատավճիռ կայացնելիս: Դրանք սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածով:

Վերջապես, պետք է հստակ պատկերացնել, թե որ դեպքում դատարանը կարող է կայացնել մեղադրական դատավճիռ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասում ասված է՝

«Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինի ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չփարատվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում¹⁹ նշված հարցերին տալիս է հաստատող պատասխաններ:»:

«Հավաստի ապացույցների» չափանիշն իր մեջ պարունակում է քրեական գործի նյութերի գնահատման երեք չափանիշ՝ 1)վերաբերելիության, 2)թույլատրելիության (այն նյութերը, որոնք վերաբերելի կամ թույլատրելի չեն՝ քրեական դատավարությունում առհասարակ որպես ապացույց չեն կարող օգտագործվել) և 3)հավաստիության (արժանահավատության) չափանիշները: Այս չափանիշները պատկերավոր դարձնելու համար, երևակայենք երեք մաղ, որոնցից առաջինն ամենախոշորն է, երկրորդը՝ առաջինից ավելի մանր, երրորդը՝ ամենամանրը: Առաջին մաղը վերաբերելիությունն է, որպեսզի որևէ նյութ օգտագործվի տվյալ քրեական գործում, այն, նախ և առաջ, պետք է անցնի առաջին մաղով՝ լինի վերաբերելի:

Խնդիր. թվարկել այն հանգամանքները, որոնք պետք է ապացուցի մեղադրողը, որպեսզի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով մեր պաշտպանյալի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնի:

Մաս 2. Ապացույցների վերաբերելիությունը

Ապացույցների վերաբերելիության չափանիշն, ըստ էության, տրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասում՝

¹⁹ Նշված կետերը հետևյալն են՝

- 1) ապացուցված է արդյոք արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է ամբաստանյալը.
- 2) այդ արարքը համապատասխանում է արդյոք քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերի հատկանիշներին.
- 3) ապացուցված է արդյոք ամբաստանյալի կողմից այդ արարքը կատարելը.
- 4) ապացուցված է արդյոք ամբաստանյալի մեղավորությունը տվյալ հանցանքը կատարելու մեջ և, եթե այո, ապա քրեական օրենսգրքի որ հոդվածով, մասով, կետով է նախատեսված այն:

«Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը եւ մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաեւ գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:»:

Այս ձևակերպումից երևում է, որ որևէ նյութ, որը չի ծառայում վերը նշված նպատակներից որևէ մեկին, տվյալ գործով չի կարող համարվել ապացույց (ինչը չի բացառում որևէ այլ գործով նշված նյութը հաջողությամբ որպես ապացույց օգտագործելը), քանի որ այն չի ծառայում տվյալ գործով նշանակություն ունեցող որևէ հանգամանքի բացահայտմանը, այլ կերպ ասած՝ չի վերաբերում տվյալ գործին, վերաբերելի չէ:

Որպես անվերաբերելի ապացույցի օրինակ, բերենք հետևյալ դեպքը.

Հայ-ադրբեջանական սահմանում մարտական հերթապահության ժամանակ, առաջին գծի խրամատում հրազենային կրակոցով սպանվում է շարքային Սերգո Հ-ն: Մարտական դիրքի զինծառայողներից մեկը՝ Գուրգեն Տ-ն ցուցմունք է տալիս, որ սպանությունը կատարել է Միշա Հ-ն, նկարագրում է կրակոցի պահին Միշայի և Սերգոյի փոխադարձ դիրքը: Ելնելով այդ նկարագրությունից քննիչը պարզում է, թե որտեղ պետք է փնտրել արձակված գնդակը: Պարզվում է, որ նկարագրված պարագաներում այն պետք է մխրճված լինի խրամատի եզրով լցված պաշտպանիչ հողային թմբի մեջ: Լցնելով այդ թմբի հողը խրամատի մեջ, քննիչը՝ խրամատի գետնին թափված հողի մեջ հայտնաբերում է մի ժանգոտ գնդակ: Գնդակն ուղարկվում է դատակենսաբանական, այնուհետև՝ դատաձգաբանական փորձաքննության, որոնց արդյունքում դրա վրա արյան հետքեր չեն հայտնաբերվում, չեն հայտնաբերվում նաև հրազենի հետ համեմատության համար պիտանի հետքեր: Այնուամենայնիվ քննիչը այդ գնդակը կցում է գործին, որոշմամբ ճանաչելով այն իրեղեն ապացույց:

Ավելին, երբ Գուրգեն Տ-ն հրաժարվում է իր վերը նշված ցուցմունքից, ապացուցվում է, որ այդ ցուցմունքը կորզվել է խոշտանգումների արդյունքում և ցուցմունքը ճանաչվում է որպես ապացույց օգտագործման համար անթույլատրելի, նույնիսկ այդ բանից հետո գնդակը շարունակվում էր օգտագործվել որպես ապացույց: Մեղադրական եզրակացությունը զգալի չափով հիմնված էր հենց այս ապացույցի վրա, և միայն մի քանի դատական ատյաններով գործն անցնելուց հետո հնարավոր եղավ «ազատվել» այս գնդակից:

Այնինչ գործի փաստերից պարզ երևում էր, որ որևէ կերպ (եթե չհաշվենք խոշտանգումներով ձեռք բերված, ուստիս՝ անթույլատրելի ցուցմունքը) չէր հիմնավորված այդ գնդակի կապը հանցագործության դեպքի հետ: Այդ գնդակը որպես ապացույց անվերաբերելի էր:

Մեղադրանքի կողմի սպացույցները վերաբերելիության տեսանկյունից վերլուծելուց հետո, այն սպացույցները, որոնք անցան այդ «մաղով», պետք է վերլուծվեն թույլատրելիության տեսանկյունից:

Խնդիր. պատրաստել պաշտպանական ճառի այն հատվածը, որում վիճարկվում է վերը նկարագրված գործով սպացույցի՝ գնդակի վերաբերելիությունը: Եթե ունկնդիրները մի քանիսն են՝ բաժանվել երկու խմբի, որոնցից առաջինը վիճարկի գնդակի՝ որպես սպացույց վերաբերելիությունը, իսկ երկրորդը՝ մեղադրողի տեսանկյունից փորձի հիմնավորել այդ սպացույցի վերաբերելի լինելը:

Մաս 3. Սպացույցների թույլատրելիությունը

Սպացույցների թույլատրելիության չափանիշները տրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105 հոդվածի 1-ին մասում՝

«Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել եւ որպես սպացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝

1) բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաեւ այլ անօրինական գործողություններով.

2) կասկածյալի եւ մեղադրյալի պաշտպանության իրավունքի, դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների՝ սույն օրենսգրքով նախատեսված լրացուցիչ երաշխիքների էական խախտմամբ.

2.1) վկայի՝ սույն օրենսգրքի 86-րդ հոդվածի հինգերորդ մասով նախատեսված իրավունքների խախտմամբ.

3) տվյալ քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի կողմից.

4) բացարկման ենթակա անձի մասնակցությամբ, եթե նա իմացել է կամ պետք է իմանար քրեական գործով վարույթին իր մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության մասին.

5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ.

6) այն անձից, որն ունակ չէ ճանաչել փաստաթուղթը կամ այլ առարկան, հաստատել դրա իսկությունը, հայտնել դրա առաջացման եւ ստացման հանգամանքների մասին.

7) անհայտ կամ դատական նիստում չբացահայտվող աղբյուրից.

8) ժամանակակից գիտական պատկերացումներին հակասող մեթոդների կիրառման արդյունքում:»:

Սպացույցների թույլատրելիության չափանիշն ավելի ընդհանրական ձևով ամրագրված է ՀՀ Սահմանադրության 22 հոդվածի 2-րդ մասում՝

«Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված սպացույցների օգտագործումը:»:

Այսպիսով, ապացույցների թույլատրելիության չափանիշը՝ օրենքով սահմանված կարգի պահպանմամբ դրանք ձեռք բերված լինելն է: Օրենքի խախտմամբ ձեռք բերված նյութը որպես ապացույց օգտագործվել չի կարող:

Հավանաբար, ընթերցողներից շատերը նկատել են ապացույցների թույլատրելիության հարցում որոշակի հակասություններ ՀՀ Սահմանադրության 22 հոդվածի 2-րդ մասի և քրեական դատավարության օրենսգրքի 105 հոդվածի 1-ին մասի միջև: Եթե Սահմանադրությունը նախատեսում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման բացարձակ արգելք, ապա քրեական դատավարության 105 հոդվածը նախատեսում է, որ օրենքի խախտմամբ ձեռք բերված նյութերը չեն կարող դրվել մեղադրանքի հիմքում: Ավելին, նույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝

«Մեղադրանքի կողմի թույլ տված քրեադատավարական օրենքի պահանջների խախտման հետեւանքով ապացուցողական նշանակությունը կորցնելու ենթակա նյութը պաշտպանության կողմի միջնորդությամբ կարող է թույլատրվել որպես ապացույց: Այդպիսի ապացույցը թույլատրվում է միայն համապատասխան կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ:»:

Ասեմք, քննիչը ճանաչում է կատարել, որի ընթացքում տուժողը հայտարարել է, որ իրեն ճանաչման ներկայացված անձանցից ոչ մեկին ինքը չի ճանաչում: Սակայն հետագայում պարզվում է, որ քննիչը այս ճանաչումն իրականացրել է մեկ ընթերակայի մասնակցությամբ, իսկ արձանագրության մեջ նշված երկրորդ ընթերական իրականում ճանաչմանը չի մասնակցել: Ի՞նչ անել տվյալ դեպքում. Սահմանադրությունը, կարծես, արգելում է այս ապացույցի օգտագործումը, մինչդեռ քրեական դատավարության օրենսգրքը թույլ է տալիս օգտագործել այն պաշտպանության նպատակներով:

Եթե հիմք ընդունենք Սահմանադրությամբ ամրագրված բացարձակ արգելքը, ապա չի բացառված, օրինակ, երբ քննիչը՝ պաշտպանական կողմի ապացույցները ձեռք բերելիս, դիտավորյալ թույլ տա ընթացակարգի խախտումներ, որոնք պաշտպանության կողմին գրկեն այդ ապացույցն օգտագործելու հնարավորությունից:

Այսպիսով, մենք պետք է պատասխանենք այն հարցին, թե կա՞ն արդյոք հակասություններ ՀՀ Սահմանադրության 22 հոդվածի 2-րդ մասի և քրեական դատավարության օրենսգրքի 105 հոդվածի 1-ին և 3-րդ մասերի միջև, եթե կան, ապա ինչպե՞ս վարվել, երբ պաշտպանական ապացույցը (երբեմն՝ միակ և անվիճելի ապացույցը) «փչանում է» քննիչի կողմից թույլ տրված խախտման արդյունքում:

Նման դեպքերում պաշտպանության կողմի պատճառաբանությունը կարող է լինել այսպիսինը՝ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցի անթույլատրելիությունը դա, ըստ էության, քրեադատավարական սանկցիա է թույլ տրված խախտման համար: Եթե մեղադրանքի կողմը ապացույց ձեռք բերելիս խախտել է օրենքը, ապա պաշտպանության կողմի միջնորդությամբ այն պետք է ճանաչվի անթույլատրելի: Սակայն մեղադրանքի կողմից թույլ տրված խախտման համար քրեադատավարական սանկցիա չի կարող կիրառվել պաշտպանության կողմի նկատմամբ՝ չի կարող անթույլատրելի ճանաչվել պաշտպանության կողմի ապացույցը:

Կարելի է բերել նաև այն պատճառաբանությունը, որ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանող հոդվածներից մեկն է, ուստի՝ այդ նորմը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել՝ որպես մեղադրանքի կողմի համար լրացուցիչ իրավունք սահմանող նորմ: Ինչից բխում է, որ՝ եթե նշված նորմը խոսում է ապացույցների անթույլատրելիության մասին, դրանում խոսքը բոլոր դեպքերում գնում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները ի վնաս մարդու և քաղաքացու օգտագործելու անթույլատրելիության մասին:

Բացի այդ, Սահմանադրության 2-րդ գլուխը սահմանում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների նվազագույն շեմը, չբացառելով, որ օրենքներով այդ իրավունքներն ու ազատություններն ընդլայնվեն: Եթե հարցին նայել այս տեսանկյունից, ապա կստացվի, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածը, որը Սահմանադրության 22-րդ հոդվածի համեմատ լրացուցիչ երաշխիք է սահմանում, բոլոր դեպքերում չի կարող համարվել այդ հոդվածին հակասով:

Ապացույցների անթույլատրելիության վերաբերյալ միջնորդությունների մասին.

Ինչպես երևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 106 հոդվածի 1-ին մասից, փաստական տվյալների՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը հաստատում է վարույթն իրականացնող մարմինը՝ սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ:

Իհարկե, մենք չենք կարող սպասել, մինչև վարույթն իրականացնող մարմինն ինքը, իր նախաձեռնությամբ ճանաչի նյութի՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը: Մենք պետք է այս հարցում ևս պրոակտիվ լինենք և ինքներս ներկայացնենք նման միջնորդություններ, բերելով համապատասխան հիմնավորումներ:

Ո՞ր փուլում է պետք հարուցել այդպիսի միջնորդություններ. Ամմիջապես, հենց մեզ հայտնի դարձան այն խախտումները, որոնք կարող են հանգեցնել տվյալ ապացույցի անթույլատրելիության: Գործնականում, եթե մեր միջնորդությունն առաջին անգամից չի բավարարվում, մենք միևնույն ապացույցի անթույլատրելիության մասին միջնորդություններն անում ենք բազմիցս, դատավարության տարբեր փուլերում: Օրինակ, միևնույն ապացույցի անթույլատրելիության միջնորդությունը (եթե այն շարունակ մերժվում է), կարող է ներկայացվել նախաքննության ավարտման փուլում, դատաքննության նախապատրաստական փուլում, դատաքննության ժամանակ՝ տվյալ ապացույցը հետազոտելուց առաջ, ճառում, վերաքննիչ բողոքում, վճռաբեկ բողոքում: Վարույթն իրականացնող մարմինը ցանկացած փուլում, համարելով միջնորդությունը հիմնավորված, կարող է այն բավարարել:

Ուշադրություն. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105 հոդվածի 1-ին մասում թվարկված են ապացույցներ ձեռք բերելու ընթացքի այն խախտումները, որոնց առկայության դեպքում ստացված նյութը չի կարող դրվել մեղադրանքի հիմքում և օգտագործվել որպես ապացույց: Այդ խախտումները պայմանականորեն կարելի է բաժանել երկու դասի՝ խախտումներ, որոնք բոլոր դեպքերում հանգեցնում

են ասպացույցի անթույլատրելիության, և խախտումներ, որոնք կհանգեցնեն ասպացույցի անթույլատրելիության, եթե դրանք էական են: Երկրորդ դասին են պատկանում հողվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերում նշված խախտումները: «Էական խախտում» հասկացության սահմանումը տրված է նույն հողվածի 2-րդ մասում, որի շարադրանքից հետևում է, որ, որպեսզի որևէ խախտում ճանաչվի էական, պետք է հիմնավորվի ոչ միայն բուն խախտման փաստը, այլ և այն հանգամանքը, որ այդ խախտումը ազդել է կամ կարող էր ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա: Այսպիսով, եթե Դուք ասպացույցի անթույլատրելիության վերաբերյալ միջնորդություն եք հարուցել, հիմնվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105 հողվածի 1-ին մասի 2-րդ կամ 5-րդ կետերի վրա, ապա հաշվի առեք, որ Չեզ վրա է դրվելու պարտականություն՝ ասպացուցելու ոչ միայն խախտման փաստը, այլ նաև այն, որ այդ խախտումը ազդել է կամ կարող էր ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

Տեսության մեջ տարածված է այն կարծիքը, որ ասպացույցի թույլատրելիության միակ չափանիշը՝ օրենքով ձեռք բերված լինելու չափանիշն է: Սակայն քրեական դատավարության օրենսգիրքը թույլ է տալի վիճարկելու ասպացույցի թույլատրելիությունը նաև մի քանի այլ հիմքով: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հողվածը սահմանում է այն հանգամանքները, որոնք կարող են հաստատվել միայն որոշակի ասպացույցներով.

«Քրեական գործով վարություն ստորեւ նշված հանգամանքները կարող են հաստատվել միայն հետեւյալ ասպացույցները նախապես ստանալով եւ հետազոտելով՝

- 1) մահվան պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը՝ դատաբժշկական փորձագետի եզրակացությունը.
- 2) հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության հետեւանքով մեղադրյալի ունակ չլինելը դեպքի պահին գիտակցելու իր գործողությունների (անգործության) բնույթը և նշանակությունը, դրանց վնասակարությունը կամ ղեկավարելու դրանք՝ դատահոգեբուժական կամ դատահոգեբանական փորձագետի եզրակացությունը.
- 3) վկայի կամ տուժողի ունակ չլինելը ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները՝ դատահոգեբուժական փորձագետի եզրակացությունը.
- 4) գործի համար նշանակություն ունենալու դեպքում՝ տուժողի, կասկածյալի, մեղադրյալի որոշակի տարիքի հասնելը՝ տարիքի մասին փաստաթուղթը, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատաբժշկական եւ դատահոգեբանական բնագավառների փորձագետների եզրակացությունները.
- 5) կասկածյալի եւ մեղադրյալի մոտ նախկին դատվածության առկայությունը եւ նրան որոշակի պատիժ նշանակելը՝ համապատասխան տեղեկանքը, իսկ հնարավորության դեպքում՝ նաեւ դատարանի դատավճռի պատճենը:»:

Նորմից բխում է, որ՝ եթե հողվածում թվարկված հանգամանքներից մեկն ու մեկը հիմնավորելու համար մեղադրանքի կողմը դիմել է այլ ասպացույցի, քան նշված է, այդ ասպացույցը պետք է անթույլատրելի ճանաչվի: Օրինակ, եթե վկայի ունակությունը՝ ճիշտ ընկալելու ու վերարտադրելու քրեական գործով

բացահայտման ենթակա հանգամանքները որոշվել է դատահոգեբանական փորձաքննության միջոցով, ապա այդպիսի փորձաքննության եզրակացությունը որպես ապացույց անթույլատրելի կճանաչվի: Եվս մեկ նորմ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է՝ **«Ճանաչում չի կատարվում, իսկ կատարվածը չի կարող ճանաչվել հիմնավորված, եթե ճանաչողը նշել է այնպիսի հատկանիշներ, որոնք իրենց անորոշության պատճառով բավարար չեն ճանաչվողի անձի նույնացման համար»:**

Պետք է նկատել, որ բավականին դժվար է ճշգրիտ որոշել՝ այս նորմով ապացույցի՝ թույլատրելիության, թե՛ հավաստիության չափանիշ է սահմանվում:

Ուշադրություն. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է ապացույցի անթույլատրելիության ևս մեկ հիմք, որը հաճախ վրիպում է մեր՝ պաշտպաններից ուշադրությունից՝

«Քննչական գործողության արձանագրության ոչ լրիվությունը չի կարող մեղադրանքի նպատակներով լրացվել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, ինչպես նաև ընթերակայի եւ այլ անձանց ցուցմունքներով»:

Նորմից նաև որոշակիորեն հետևում է, որ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, ինչպես նաև ընթերակայի եւ այլ անձանց ցուցմունքներով քննչական գործողության արձանագրությունը կարող է լրացվել՝ պաշտպանական նպատակներով:

Անվերաբերելի կամ անթույլատրելի նյութերը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ և 105-րդ հոդվածների համապատասխան, առհասարակ ապացույց չեն համարվում: Միայն այն ապացույցները, որոնք անցել են վերաբերելիության և թույլատրելիության «մաղերով», կարող են օգտագործվել քրեական գործում որպես ապացույց և ծառայել վարույթն իրականացնող մարմնին՝ որևէ փաստ հաստատելու կամ հերքելու համար: Միայն վերաբերելի և թույլատրելի ապացույցները կարող են գնահատվել հավաստիության տեսանկյունից: Քրեական դատավարությունում չպետք է և չի կարող գնահատվել որևէ ապացույցի հավաստիության հարցը, քանի դեռ վերջնականապես պարզված չէ դրա վերաբերելիությունը կամ թույլատրելիությունը՝ որքան էլ այդ ապացույցը հավաստի թվա կամ լինի:

Խնդիր 1. կազմել միջնորդություն՝ փորձաքննության եզրակացության՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը հաստատելու վերաբերյալ, կապված վերը նկարագրված այն դեպքի հետ, երբ անձի ունակությունը՝ ճիշտ ընկալելու ու վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները որոշվել է դատահոգեբանական փորձաքննության միջոցով:

Խնդիր 2. կազմել միջնորդություն՝ ճանաչման արձանագրության՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը հաստատելու վերաբերյալ, եթե ճանաչումը կատարելիս ճանաչման ներկայացված մեղադրյալը եղել է ձեռնաշղթայով, իսկ մյուս երեք անձինք՝ առանց ձեռնաշղթայի:

Խնդիր 3. կազմել միջնորդություն՝ ճանաչման արձանագրության՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը հաստատելու վերաբերյալ, եթե նախքան ճանաչում կատարելը քննիչը ճանաչողին չի հարցաքննել ճանաչվողի արտաքին տեսքի ու նշանների մասին:

Խնդիր 4. կազմել միջնորդություն՝ խուզարկության արձանագրության՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը հաստատելու վերաբերյալ, եթե պարզվել է, որ խուզարկության ընթացքում որպես ընթերակա մասնակցած անձը նույն քննիչի վարությամբ գտնված հինգ այլ գործերով վերջին մեկ տարում, ընդհանուր առմամբ, տասնմեկ անգամ մասնակցել է որպես ընթերակա:

Մաս 4. Ապացույցների հավաստիությունը (արժանահավատությունը)

Ապացույցի հավաստիությունը որոշվում է քրեական գործի մյուս ապացույցների հետ համադրելու միջոցով: Հավաստիության պարզ բանաձևը հետևյալն է՝ ապացույցը հավաստի է, եթե այն հաստատվում է քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցներով և ապացույցը հավաստի չէ, եթե այն հերքվում է քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցներով: Սակայն, նկատի ունենալով, որ սովորաբար չեն լինում ապացույցներ, որոնք հաստատվեն քրեական գործի մյուս բոլոր ապացույցներով, հավասարապես չեն լինում ապացույցներ, որոնք հերքվեն քրեական գործի մյուս բոլոր ապացույցներով, ապա, որպես կանոն, ապացույցի հավաստիության հարցը հենց այն հարցն է, որ վերջնականապես ենթակա է գնահատման դատարանի կողմից՝ ելնելով ներքին համոզմունքից: Եթե ապացույցի թույլատրելիությունը կամ հավաստիությունը որոշվում է բանաձևի ճշգրտությամբ (վերաբերվում է գործին կամ չի վերաբերվում, ձեռք է բերվել օրենքի խախտմամբ կամ առանց խախտման), ապա հավաստիության գնահատումը բոլոր դեպքերում սուբյեկտիվ է և հայեցողական: Արդյո՞ք այս դեպքում պաշտպանն ունի դատարանի ներքին համոզմունքի վրա ազդելու հնարավորություն: Իհարկե՝ այո, ունի: Դրա համար պետք է գրագետ ձևով վիճարկել մեղադրանքի կողմից ներկայացված յուրաքանչյուր [վերաբերելիության և թույլատրելիության «մաղն» անցած] ապացույցի հավաստիությունը:

Ինչպես ասվեց, հավաստիությունը որոշվում է այլ ապացույցների հետ համադրելու միջոցով: Խմբավորելով մեղադրանքի ապացույցների հավաստիության վիճարկման հիմնական մեթոդները, նշենք դրանք՝

- ապացույցի համադրումը այլ ապացույցների հետ (նպատակը՝ ցույց տալ, որ մեղադրանքի ապացույցը հակասում է այլ՝ ավելի արժանահավատ ապացույցների, օրինակ՝ տուժողի ցուցմունքը հակասում է անկողմնակալ փորձագետի եզրակացությանը),
- ապացույցի մի մասի հակադրումը նույն ապացույցի մյուս մասին (նպատակը՝ ցույց տալ, որ ապացույցը ունի ներքին հակասություն, ուստի՝ հավատ չի ներշնչում),

- ապացույցի համադրումը նույն աղբյուրից ձեռք բերված այլ ապացույցի հետ(նպատակը՝ ցույց տալ աղբյուրի անարժանահավաստությունը, օրինակ՝ նույն վկայի կողմից դատավարական տարբեր փուլերում տրված ցուցմունքների իրարամերժությունը),
- ապացույցի համադրումը հանրաճանաչ հանգամանքի հետ (նպատակը՝ ցույց տալ, որ մեղադրանքի ապացույցը հակասում է որևէ հանրաճանաչ հանգամանքի):

Այս ցանկը սպառնիչ չէ, ցանկացած փաստաբան այն կարող է լրացնել: Օրինակ՝ մենք վիճարկում ենք տուժողի ցուցմունքի հավաստիությունը, բերելով այն փաստարկը, որ նա շահագրգռված է տվյալ գործի ելքով, օրինակ՝ խոշոր գումարային ակնկալիքներ ունի: Մեկ այլ օրինակ՝ մենք վիճարկում ենք վկայի ցուցմունքների հավաստիությունը, բերելով այն պատճառաբանությունը, որ դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության համապատասխան, այս վկան ունակ չէ ճիշտ ընկալելու (կամ՝ վերարտադրելու) իր ցուցմունքում նշված հանգամանքները: Օրինակները կարելի է շարունակել:

Հավաստիության հարցը, որպես կանոն, կազմում է դատական վիճաբանությունների ընթացքում մեր ճառի, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների հիմնական մասը այն գործերով, որտեղ մեղադրյալը ժխտում է իրեն վերագրվող որոշակի գործողությունների կատարումը (հայտնում է, որ ինքը չի սպանել տուժողին, չի կատարել գողությունը և այլն):

Խնդիր 1. ամբաստանյալին մեղսագրվում է խարեությանը և վստահությունը չարաշահելով տուժողին պատկանող 1.500.000 դրամին տիրանալը: Տուժողը պնդում է, որ ամբաստանյալն այդ գումարն իրենից վերցրել է՝ դատավորին կաշառք տալու կեղծ պատրվակով, իսկ ամբաստանյալը (ով փաստաբան է), ընդունում է այդ գումարը ստանալու փաստը, սակայն պնդում է, որ դա ստացել է իր ծառայությունների դիմաց՝ նախաքննության ընթացքում տուժողի որդու պաշտպանությունն իրականացնելու համար: Բացի այս ցուցմունքներից միակ ապացույցը եղել է այս անձանց խոսակցության գաղտնալսման կրիչը, սակայն այն պաշտպանական կողմի միջնորդության հիման վրա ճանաչվել է անթույլատրելի: Ունկնդիրներին առաջարկվում է պատրաստել մեղադրական և պաշտպանական ճառերի այն հատվածները, որոնցում վերլուծվում է այս ապացույցների հավաստիությունը:

5. Վարույթն առաջին ատյանի դատարանում.

Մաս 1. Պաշտպանի գործողությունները՝ գործը դատարան ուղարկելուց հետո՝ մինչ դատական քննություն նշանակելու մասին որոշում կայացնելը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ գլուխը վերաբերվում է դատարանի կողմից քրեական գործը դատական քննության նախապատրաստելուն: Որպես կանոն, այս փուլում պաշտպանները պասիվ են, համարելով, որ այն չի ենթադրում պաշտպանի մասնակցություն: Մինչդեռ որոշ դեպքերում հենց այս փուլում հնարավոր և արդյունավետ են լինում մի շարք գործողություններ: Այսպես, ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետագոտում է գործում եղած նյութերը և քրեական գործն իր վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում է հետեւյալ որոշումներից մեկը՝ (1)դատական քննություն նշանակելու մասին, (2)քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, (3)քրեական գործի վարույթը կասեցնելու մասին, (4)գործը մեղադրողին վերադարձնելու մասին, (5)գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին, (7)ինքնաբացարկի մասին:

Ղատական քննություն նշանակելու մասին որոշման հետ կապված միջնորդությունների վերաբերյալ.

Ինչպես գիտենք, գործերի ճնշող մեծամասնությամբ դատարանը դատական քննություն նշանակելու մասին որոշում է կայացնում: Այդ որոշման մեջ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, ի թիվս այլի, պետք է բովանդակվեն՝ խափանման միջոցները և պատճառված վնասի ապահովման միջոցները վերացնելու, փոփոխելու կամ ընտրելու մասին որոշում, դատավարության մասնակիցների հարուցած միջնորդությունների, բացարկների և այլ հայտարարությունների մասին որոշումներ, դատական նիստին կանչման ենթակա անձանց ցանկը, օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դռնփակ դատական քննություն անցկացնելու մասին որոշում, դատավարության մասնակիցների նկատմամբ պաշտպանության միջոց կիրառելու մասին որոշում:

Եթե պաշտպանն այս փուլում ակտիվություն չի դրսևորում, համապատասխան միջնորդություններ չի ներկայացնում դատարան, ապա, որպես կանոն, առանց որևէ հիմնավորման ընտրված խափանման միջոցը թողնվում է անփոփոխ, գույքի վրա դրված կալանքները պահպանվում են, իսկ դատական նիստի են հրավիրվում միայն մեղադրական եզրակացության հավելվածում (այսպես կոչվող՝ «դատակոչի ցուցակում») նշված մեղադրանքի վկաները:

Եթե մենք ցանկանում ենք, որպեսզի ի սկզբանե դատարան հրավիրվեն նաև մեր վկաները, դատարանը վերացնի մեր պաշտպանյալի նկատմամբ կիրառված կալանքը, կիրառի նրա նկատմամբ գրավ, հանի գույքի վրա դրված կալանքը, պաշտպանության միջոց կիրառի, ապա պետք չէ սպասել դատական քննության. այդ նպատակով հարուցված միջնորդություններն առավել արդյունավետ են հենց այս փուլում: Ինչը՝ միջնորդությունները մերժվելու դեպքում, չի գրկում մեզ այդ նույն միջնորդությունները ներկայացնել նաև դատական քննության ընթացքում:

Քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ միջնորդությունների մասին.

Միսալ կլինեք մտածել, որ քրեական գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանը իրավունք ունի, վերլուծելով մեղադրանքի և պաշտպանության ապացույցները, գտնել, որ մեղադրանքը հիմնավորված չէ ու այդ հիմքով կարճել գործի վարույթն ու դադարեցնել քրեական հետապնդումը: Այս նորմը նախատեսված է այն դեպքերի համար, երբ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերն ակնհայտ են առանց գործի

ապացույցները դատաքննության ընթացքում հետազոտելու, օրինակ՝ ընդունվել է համաներման ակտ, մեղսագրվող արարքը կատարելու պահին մեղադրյալը չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին, մեղադրյալը մահացել է և այլն:

Կարող է լինել նաև հետևյալ դեպքը (իրականում տեղի է ունեցել տարիներ առաջ՝ աղմկահարույց գործերից մեկով). ամիսներ շարունակ քրեական գործը քննվել, մեղադրական եզրակացությունը հաստատվել ու գործն ուղարկվել է դատարան, որից հետո միայն պարզվել է, որ բացակայում է քրեական գործ հարուցելու մասին որոշումը: Այս դեպքում՝ քրեական գործը դատական քննության նախապատրաստելու փուլում տեղին կլինեք մեղադրյալների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնել դատարան, հիմնվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի վրա՝

«4. Քրեական հետապնդում կարող է իրականացվել միայն հարուցված քրեական գործով»:

Գործը մեղադրողին վերադարձնելու միջնորդության մասին.

Ինչպես երևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասից, քրեական գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշումը կայացվում է, եթե մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում օրենսգրքի պահանջներին, կամ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը կամ չի բխում գործում առկա ապացույցներից: Նման հիմքերի առկայության դեպքում պաշտպանը կարող է, չսպասելով դատավարությանը և դատավճռին, համապատասխան միջնորդությունը ներկայացնել հենց քրեական գործը դատական քննության նախապատրաստելու փուլում: Օրինակ, երբ մեղադրական եզրակացության նկարագրական-պատճառաբանական մասում նկարագրվում է երկու հարևանների միջև երկարատև հակակրանքի հետևանքով կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանություն, որի ընթացքում մեղադրյալը հայիոյել ու հարվածել է տուժողին, սակայն եզրափակիչ մասում այդ գործողությունները որակված են որպես խուլիգանություն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով:

Խափանման միջոցը փոփոխելու վերաբերյալ միջնորդությունների մասին.

Պետք է հաշվի առնել, որ այս փուլում դատարանը, ի թիվս այլի, քննարկում է նաև մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կամ դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը՝ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում: «Խափանման միջոցներ» գլխում մենք արդեն իսկ մի քանի տեսանկյունից անդրադարձել ենք այս հարցին: Քրեական գործը դատական քննության նախապատրաստելու փուլը կալանքի տակ գտնվող մեր պաշտպանյալների խափանման միջոցը փոխելու ևս մեկ հնարավորություն է ընձեռում, մինչդեռ, եթե այս փուլում մենք ակտիվ չլինենք, դատարանը պարզապես մեր պաշտպանյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը կթողնի անփոփոխ:

Գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին.

Գործի տարածքային ընդդատությունը որոշվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ և 48-րդ հոդվածներով սահմանված կանոններին համապատասխան: Քիչ չեն դեպքերը, երբ դատախազը գործն ուղարկում է այն դատարան, որին ընդդատյա չէ: Համենայն դեպս, հեղինակի պրակտիկայում այդպիսի յոթ դեպք է եղել: Պարզելով, որ գործն ուղարկված է այն դատարան, որին ընդդատյա չէ, պաշտպանը (տուժողի ներկայացուցիչը) կարող է հենց այս սկզբնական փուլում միջնորդել՝ ուղարկելու գործն ըստ ընդդատության: Միայն թե, նախքան այդպիսի միջնորդություն հարուցելը ցանկալի կլինի վերլուծել՝ ի՞նչ կտա Ձեզ գործն ըստ ընդդատության ուղարկելը: Եթե այդպիսի միջնորդությունը պետք է արվի բացառապես ապացուցելու համար մեր բանիմացությունը, ապա գերադասելի է ձեռնպահ մնալ միջնորդությունից:

Գեպքերից մեկում պաշտպանը միջնորդել էր գործն ուղարկել ըստ ընդդատության՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մեղադրյալին վերագրվող գործողությունները տեղի են ունեցել այլ տարածքում: Դատարանը միջնորդությունը բավարարել ու գործն ուղարկել էր ըստ ընդդատության՝ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարան, իր որոշման մեջ հաստատելով ենթադրյալ հանցագործության կատարման վայրի վերաբերյալ պաշտպանի պատճառաբանությունը: Մեղադրանքի կողմը դատարանի այդ որոշումը չէր բողոքարկել: Հետագայում՝ գործը պատշաճ դատարանի կողմից քննվելու ժամանակ պաշտպանական կողմը ներկայացրել էր հետևյալ պատճառաբանությունը. դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ հաստատված է, որ ենթադրյալ հանցագործության կատարման վայր է հանդիսանում Արագածոտնի մարզը, մինչդեռ քրեական գործի նախաքննությունն իրականացվել է Երևանի վարչական շրջաններից մեկի ոստիկանության քննիչի կողմից: Հիմնվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի վրա, պաշտպանը կասկածի տակ դրեց ողջ նախաքննության արդյունքներն ու այդ քննիչի կողմից ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը:

Խնդիր. Քաղաքացի Կ.Ա.-ը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով (դիտավորությանը առողջությանը ծանր վնաս պատճառելը): Նախաքննության ընթացքում նա իրեն մեղավոր չի ճանաչել, պնդելով, որ պաշտպանվել է տուժողից, որը՝ երեք ընկերների հետ միասին հարձակվել էր իր (ամբաստանյալի) վրա: Վերջիններս ժխտել են Կ.Ա.-ի այդ ցուցմունքները և հայտնել, որ նախահարձակ է եղել Կ.Ա.-ն, տուժողը պաշտպանվել է, իսկ նրա երեք ընկերները փորձել են դադարեցնել կռիվը: Նախաքննության ընթացքում ամբաստանյալը հայտնել է, որ դեպքի վայրի մոտակայքում գտնվող խանութի վաճառողուհիները տեսել են դեպքը ու միջնորդել է՝ որպես վկա հարցաքննվել վերջիններիս, նշել է նրանց տվյալները (անուն, ազգանուն, հասցե) սակայն այդ միջնորդությունը մերժվել է:

Գործն ուղարկվել է դատարան, մեղադրական եզրակացության հավելվածում, որպես դատական նիստին կանչվելու ենթակա անձինք, նշված են ամբաստանյալը, տուժողը և վերջինիս երեք ընկերները: Ի՞նչ միջնորդություն կարելի է ներկայացնել նախքան դատարանի կողմից դատական քննություն նշանակելու մասին որոշում կայացնելը: Կազմել այդպիսի միջնորդություն:

Մաս 2. Դատական նիստի նախապատրաստական մասում պաշտպանի գործողությունները

Դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ միջնորդությունների մասին.

Դատավորի ինքնաբացարկի հիմքերը բերված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90 հոդվածի 1-ին մասի 1-ից 4-րդ կետերում: Ինչպես արդեն նշվել էր վերևում, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերը ապացուցման տեսանկյունից համեմատաբար հեշտ են և, որպես կանոն, նման հիմքերի առկայության դեպքում, դատավորը ինքնաբացարկ է հայտնում, չհասցնելով գործը ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությանը:

Այլ են դեպքերը, երբ ինքնաբացարկի հիմքը դատավորի կանխակալ վերաբերմունքն է կողմերից մեկի, պաշտպանի կամ դատավարության այլ մասնակիցների նկատմամբ: Մովորաբար դատավորը ուղղակի չի արտահայտում իր կողմնակալ վերաբերմունքը, հետևապես այդպիսի հիմքով ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդությունները ներկայացվում են այն դեպքերում, երբ այդպիսի կանխակալ վերաբերմունքը անուղղակիորեն հետևում է դատավարության ընթացքում, օրինակ, դատավորը մերժում է պաշտպանական կողմի միջնորդությունները, միաժամանակ բավարարելով մյուս կողմի նույնանման միջնորդությունները: Սակայն կրկնում ենք, որ դատավորի կողմից պաշտպանի միջնորդությունների (նույնիսկ ամենահիմնավոր) մերժման փաստն ինքն իրենով ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու հիմք չէ: Դատավորի կողմնակալության վերաբերյալ հետևություններ անելիս կարևոր է ուշադրություն դարձնել, թե նրա գործողությունների արդյունքում կողմերից մեկն արդյո՞ք ակնհայտորեն ավելի բարենպաստ պայմաններում է հայտնվել:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90 հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, ապա նման հիմքերը դատական նիստի նախապատրաստական մասում հազվադեպ են ի հայտ գալիս: Ավելի հաճախ դրանք ի հայտ են գալիս դատավարության ընթացքում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90 հոդվածի 1-ին մասից դուրս են մնացել այն դեպքերը, երբ դատավորը տվյալ գործը քննելու համար պատշաճ դատավոր չի:

Բացարկի հիմքերը քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ ՀՀ դատավորների վարքագծի կանոնների Կանոն 15-ի 1-ին մասում, մասնավորապես, ասված է՝ *«Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել բոլոր այն դեպքերում, երբ նա չի կարող գործով անաչառ որոշում կայացնել, կամ անկողմնակալ դիտորդին կարող է թվալ, որ նա ի վիճակի չէ տվյալ գործով արդարացի որոշում կայացնել»:*

Այս մոտեցումը համահունչ է Եվրոպական դատարանի վճիռներից մեզ հայտնի բանաձևին. *«դատավորներից մեկի անաչառության վերաբերյալ իրավաչափ կասկածների հարցի լուծման ժամանակ շահագրգիռ անձի կամ անձանց կարծիքը հաշվի առնվում է, սակայն որոշիչ դեր չի խաղում»:*

Որոշիչ է հանդիսանում այն, թե կարող են արդյոք վերջիններիս կասկածները օբյեկտիվորեն հիմնավորված համարվել» (տես, ի թիվս այլի, *Gautrien et al. v France*, կետ 58):

Խնդիր. Պարզվել է, որ նախագահող դատավորի որդին աշխատում է դատախազությունում, իսկ մեղադրական եզրակացությունը հաստատել է ՀՀ գլխավոր դատախազը: Բացի այդ, դատավորին հաճախ են տեսել դատախազության կողմից կազմակերպված պաշտոնական միջոցառումներին, ուր նա հրավիրված է եղել ամուսնու հետ միասին: Արդյո՞ք վերը նշված հանգամանքները դատավորի ինքնաբացարկի հիմք են հանդիսանում, եթե այո՝ ապա պաշտպանի անունից կազմել ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդություն և դատավարության մյուս մասնակիցների հնարավոր առարկություններն այդ միջնորդության դեմ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 331-րդ հոդվածի կարգով հարուցվող միջնորդությունների մասին.

Միսալ է մտածել, որ դատավարության ամբողջ ծանրությունն ընկնում է դատաքննության (կան փաստաբաններ, որ համարում են, որ՝ դատական վիճաբանությունների) փուլի վրա: Պրոակտիվ պաշտպանությունը ենթադրում է, որ նախաձեռնությունը պետք է վերցնել դեռևս դատական նիստի նախապատրաստական փուլում և բաց չթողնել մինչև դատական վիճաբանությունների ավարտը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 331-րդ հոդվածին համապատասխան, դատական նիստի նախապատրաստական փուլում **նախագահողը հարցնում է մեղադրանքի կողմին և պաշտպանության կողմին, թե արդյոք նրանք ունեն միջնորդություններ նոր ապացույցներ պահանջելու և գործին կցելու մասին:** Միջնորդություն հարուցող անձը պարտավոր է ցույց տալ, թե հատկապես ինչ հանգամանքներ պարզելու համար են անհրաժեշտ լրացուցիչ ապացույցները: Հետևապես, այս փուլում կարող են ներկայացվել նաև դատական քննություն նշանակելու մասին որոշման մեջ (քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդված) «դատական նիստին կանչման ենթակա անձանց ցուցակ»-ում չընդգրկված անձանց որպես վկա հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ միջնորդություններ:

Ինչպես երևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 331 հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունից, դատական նիստի նախապատրաստական փուլում կողմերի միջնորդությամբ քննության կարող է առնվել նաև **ապացույցների թույլատրելիության հարցը:** Բաց մի թողեք այս հնարավորությունը. թեև այդ նույն միջնորդությունը կարող էք ներկայացնել նաև հետագայում՝ դատաքննության ընթացքում՝ տվյալ ապացույցը հետազոտելիս, դատաքննությունը լրացնելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելիս, ինչպես նաև՝ դատական վիճաբանությունների փուլում, սակայն առաջին անգամ այդ միջնորդությունը պետք է հնչի հենց այս փուլում: Եթե այն մերժվի, ապա դա հնարավորություն կտա Չեզ ծանոթանալու մերժման պատճառաբանություններին և հաջորդ անգամ նույն միջնորդությունը ներկայացնելիս շտկելու թույլ տրված բացթողումները:

Խնդիր. Մեղադրանքի հիմքում դրված կարևոր ապացույցներից մեկը վկա Ս.Ռ.-ի ցուցմունքն է, որում վերջինս մատնացույց է արել ամբաստանյալին, որպես սպանության կատարողի: Ամբաստանյալը մշտապես ժխտել է իր մասնակցությունը սպանությանը, նշելով, որ վկա Ս.Ռ.-ն թշնամական հարաբերությունների մեջ է գտնվում իր հետ, պահանջել է առերեսում կատարել իր ու այդ վկայի միջև, սակայն նախաքննական մարմինը այդպես էլ առերեսում չի իրականացրել: Տվյալ վկան դատարանի որոշմամբ ընդգրկված է դատական նիստին կանչման ենթակա անձանց ցանկում, սակայն, նախքան առաջին դատական նիստը սկսվելը մահացել է: Ի՞նչ միջնորդություն կանեիք այս փուլում (կամ՝ կանեի՞ք արդյոք), կապված վկայի նախաքննական ցուցմունքների հետ²⁰:

ՀՀ Սահմանադրական դատարանի դիմելու վերաբերյալ միջնորդությունները.

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան, դատարանները՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով, իրավունք ունեն դիմելու ՀՀ Սահմանադրական դատարան: Այսպիսով, եթե հիմքեր կան պնդելու, որ մեր պաշտպանյալի նկատմամբ կիրառված օրենքը հակասում է Սահմանադրությանը, մենք, ըստ էության, ունենք երկու ելք՝ սպառելով պաշտպանության բոլոր միջոցները (ինչը գործնականում նշանակում է գործը մինչև վճռաբեկ դատարան հասցնելը և մեր պաշտպանյալի դատապարտումը), դիմել ՄԳ՝ վիճարկելով մեր պաշտպանյալի նկատմամբ կիրառված օրենքի սահմանադրականությունը, կամ գործելով պրոակտիվ, փորձել հասնել նրա, որպեսզի գործը քննող դատարանը՝ նախքան այդ նորմի կիրառումը, ինքը դիմի ՄԳ՝ նորմի սահմանադրականության հարցը որոշելու դիմումով:

Խնդիր. Գտեք քրեական օրենսգրքում որևէ հոդված, որը Ձեր կարծիքով, հակասում է Սահմանադրությանը, հիմք ընդունեք, որ Ձեր պաշտպանյալը մեղադրվում է այս հոդվածով նախատեսված հանցագործության կատարման մեջ և կազմեք Սահմանադրական դատարանի դիմելու վերաբերյալ միջնորդություն, հասցեագրված Ձեր պաշտպանյալի վերաբերյալ քրեական գործը քննող դատարանին:

Մաս 3. Դատաքննություն

Հայտարարություն (որը, սովորաբար, չի կիրառվում).

²⁰ Հաշվի առնելով, որ՝ վկայի մահվան դեպքում դատարանը, ամենայն հավանականությամբ, դատաքննության ընթացքում հրապարակելու է նրա նախաքննական ցուցմունքները, իսկ այնուհետև այդ ցուցմունքները կարող են հայտնվել մեղադրական դատավճռի հիմքում:

Ինչպես հայտնի է, դատաքննությունը սկսվում է մեղադրողի կողմից մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակմամբ, որից հետո նախագահողը պետք է ամբաստանյալին պարզաբանի նրան ներկայացված մեղադրանքի էությունը, արարքի իրավաբանական որակումը, նրան ներկայացված քաղաքացիական հայցի հիմքերը և չափը, որից հետո հարցնում է, թե արդյո՞ք ամբաստանյալն իրեն մեղավոր է ճանաչում, եթե այո՝ կոնկրետ ինչու՞մ: Եթե մեղադրանքի նկարագրական մասը որոշակի չէ, դրանում կիրառված արտահայտությունների պարզաբանումը քրեական օրենսգրքում բացակայում է, ապա այս փուլում կարևոր է պահանջել, որպեսզի նախագահողն ամենայն մանրամասնությամբ պարզաբանի այդ մեղադրանքի էությունը: Մի խուսափեք համառելուց, սա այն պահն է, որը նման դեպքերում չի կարելի բաց թողնել, այլ փուլերում դուք այլևս չեք կարողանա պահանջել, որպեսզի մեղադրանքը պարզաբանվի:

Մենք հաճախ ենք ինքներս մեզ հարց տալիս՝ ինչու՞ դատաքննության ընթացքում մեղադրողի կողմից այս կամ այն վկային հրավիրելը, նրանց տրվող հարցերը այս կամ այն ապացույցը հետազոտելու միջնորդությունը ընկալվում և ընդունվում են դատարանի կողմից, իսկ մերը՝ ոչ: Հավանաբար, շատերը հակված են մտածելու, որ պատճառը միայն դատարանի ավանդական կողմնակալության մեջ է:

Ինչ խոսք, այդ գործունը մեծ դեր ունի դատաքննության ընթացքում, սակայն նման անհավասար մոտեցումն ունի նաև իր օբյեկտիվ պատճառները: Մեղադրանքի կողմը կազմել և դատարան է ներկայացրել մեղադրական եզրակացությունը, որում մանրամասնորեն շարադրված է մեղադրանքի կողմի դիրքորոշումը՝ (1) նկարագրված են մեր պաշտպանյալին վերագրվող գործողությունները, (2) ներկայացված են ապացույցները, որոնցով այդ գործողությունները պետք է հաստատվեն և (3) տրված է այդ գործողությունների քրեաիրավական որակումը:

Այսպիսով, մեղադրանքի կողմի դիրքորոշումը պարզ է ի սկզբանե, այդ պատճառով մեղադրողի կողմից կատարվող ցանկացած հայտարարության, միջնորդության, վկային տրվող հարցի իմաստն ու նպատակը պարզ են և հստակ երևում է, թե դրանցից որն է վերաբերում գործին, իսկ որը՝ ոչ:

Ի տարբերություն դրա, պաշտպանական կողմի դիրքորոշումը (բացի՝ «ինձ մեղավոր եմ ճանաչում», կամ՝ «մեղավոր չեմ ճանաչում») այդպես էլ մնում է անորոշ, ընդհուպ մինչև դատական վիճաբանությունները (հաճախ նաև՝ դատական վիճաբանություններից հետո): Հասկանալի է, որ նման պարագաներում նախագահողին մնում է միայն կռահել պաշտպանի գործողությունների, վկային տրվող հարցերի և արվող միջնորդությունների իմաստը, ինչը շատ հաճախ բերում է թյուրիմացությունների անգամ անկողմնակալ դատավորի և պաշտպանի միջև:

Իսկ ո՞րն է ելքը: Հեղինակի կարծիքով, ելքերից մեկը կայանում է նրանում, որ պաշտպանը, օգտվելով այս փուլում մեղավորության կամ անմեղության մասին հայտարարություններ անելու՝ ամբաստանյալի իրավունքից, պատրաստի գրավոր հայտարարություն, որում համառոտ նշվի պաշտպանական կողմի դիրքորոշումը առաջադրված մեղադրանքի և այդ մեղադրանքի հիմքում ընկած ապացույցների վերաբերյալ: Դա հնարավորություն կտա նախագահողին և դատավարության մասնակիցներին հետազայում, ապացույցներ հետազոտելու ժամանակ, ավելի լավ հասկանալ պաշտպանական կողմից

այս կամ այն գործողության իմաստը և համադրել հետազոտված ապացույցները ոչ միայն մեղադրանքի, այլ նաև՝ պաշտպանական կողմի դիրքորոշման հետ:

Ապացույցների հետազոտման ընթացքում պաշտպանի գործողությունները (ապացույցներից յուրաքանչյուրի վերաբերյալ մեկնաբանություններ).

Դատաքննության ընթացքում յուրաքանչյուր ապացույց հետազոտելիս պետք է նախ՝ ինքնեդ լավ պատկերացնեք դրա վերաբերյալ Ձեր դիրքորոշումը, երկրորդ՝ հնարավորինս համոզիչ կերպով ներկայացնեք այն դատարանին: Այսպես, եթե հետազոտվում է մեղադրանքի հիմքում ընկած ապացույց և Դուք գտնում եք, որ հիմքեր կան վիճարկելու դրա թույլատրելիությունը, ապա ապացույցը հետազոտելուց առաջ արեք այդ հայտարարությունը, նշելով, որ անթույլատրելի նյութը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105 հոդվածի 1-ին մասից ելնելով, ապացույց չի համարվում, հետևապես՝ առհասարակ հետազոտման ենթակա չէ: Եթե ապացույցը, այնուամենայնիվ, հետազոտվում է, հանդես եկեք հայտարարությամբ դրա բովանդակության այն մասի վերաբերյալ, որը հիմք է տալիս Ձեզ վիճարկելու դրա անթույլատրելիությունը: Հղում կատարեք մեկ այլ ապացույցի վրա, եթե հետազոտված ապացույցի անթույլատրելիությունը բխում է մեկ այլ ապացույցից, օրինակ. նախազահողը փորձում է հրապարակել Ձեր պաշտպանյալի նախաքննական ցուցմունքը, որում վերջինս «խոստովանել է» հանցագործությունն իր կողմից կատարված լինելը: Մինչդեռ Դուք ունեք ապացույց՝ քրեակատարողական հիմնարկի պետի գրությունը, որ պաշտպանը, որը ստորագրել է այդ «խոստովանական» ցուցմունքի տակ, այդ օրը քննչական մեկուսարան չի մտել, հետևապես, արձանագրության տակ դրված նրա ստորագրությունը կեղծ է, իսկ ցուցմունքը վերցված է եղել պաշտպանության իրավունքի էական խախտմամբ: Այս դեպքում առարկեք մեղադրյալի ցուցմունքը դատաքննության ընթացքում հետազոտելու դեմ, պահանջեք սկզբում հրապարակել ՔԿՀ-ի գրությունը և ճանաչել ցուցմունքի՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը: Առարկեք նախազահողի գործողությունների դեմ, եթե ցուցմունքը, այնուամենայնիվ, հետազոտվել է, միջնորդեք անմիջապես ճանաչել դրա՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը: Ամենայն հավանականությամբ, այս միջնորդության լուծումը կհետաձգվի՝ չընկճվեք: Ամեն կերպ նախազահողի և դատավարության մասնակիցների հիշողության մեջ «դաջեք» այս ապացույցի ձեռքբերման հետ կապված խախտումը և դեռ երկու անգամ՝ դատաքննությունը լրացնելու միջնորդությունների և դատական վիճաբանությունների փուլում, Դուք կկրկնեք Ձեր այդ միջնորդությունը:

Եթե ապացույցը պաշտպանական նշանակություն ունի՝ թույլ մի տվեք, որ դատարանը սահմանափակվի դրա հրապարակմամբ: Անպայման հայտարարությամբ նշեք, թե այդ ապացույցի ո՞ր մասը և ի՞նչ տեսանկյունից է հաստատում Ձեր պաշտպանական դիրքորոշումը:

Ասվածը վերաբերում է նաև փորձաքննությունների եզրակացությունները հրապարակելուն: Այլ բան է, եթե փորձագետը հրավիրված է դատարան՝ այս դեպքում մանրամասնորեն նախապատրաստվեք նրա հարցաքննությանը, նախապատրաստումը սկսելով համապատասխան գրականությունը

ուսումնասիրելուց և մասնագետների հետ խորհրդակցելուց: Հարցաքննությունը իրականացրեք վկաների հարցաքննության մեթոդներով, որոնց մասին կխոսվի ստորև:

Վկաների հարցաքննության մասին.

Քրեական դատավարությունում ոչ մի գործողության մասին այդքան չի գրվել ու խոսվել, որքան վկաների հարցաքննության մասին: Ընդ որում, բոլոր հեղինակները, չնայած մոտեցումների տարբերության, մի հարցում համակարծիք են՝ **փաստաբանը չպետք է վկային տա այնպիսի հարց, որի պատասխանը հնարավոր չէ կանխատեսել:**

Ընդունենք այս ունիվերսալ խորհուրդը որպես հիմք և փորձենք տալ ևս մի քանի խորհուրդ այն փաստաբանին, ով վաղը մասնակցելու է դատական նիստի, որի ընթացքում նախատեսված է մեղադրանքի վկաների հարցաքննությունը:

Նախ նկատենք, որ վկաների հարցաքննությանը վերաբերող գրականության ճնշող մեծամասնությունը գրված է այն մասնագետների կողմից, ովքեր հանդես են գալիս երդվյալների դատարանում: Չնայած շատ ընդհանրությունների, կարծում ենք, որ երդվյալների դատարանում և այն դատարանում, որում աշխատում ենք մենք, վկաների հարցաքննության մեթոդները և մոտեցումները որոշակիորեն տարբերվելու են: Երդվյալների հետ աշխատող փաստաբանը մեծ նշանակություն է տալու հարցաքննությանը թողնված տպավորությանը, մինչդեռ մենք պետք է հաշվի առնենք, որ՝ անկախ պահի տակ առաջացած տպավորությունից, դատավորը, որը հեռանալու է դատական ակտ կայացնելու, վերլուծելով վկայի ցուցմունքը, վերանալու է վկայի ցուցմունքի ազդեցության տակ իր մոտ առաջացած տպավորություններից և առաջնորդվելու է միմիայն այդ ցուցմունքի չոր բովանդակությամբ:

Եվ այսպես, նախապատրաստե՞լ արդյոք վկային տրվելիք հարցերը, թե՛ կողմնորոշվել ըստ իրավիճակի, նախապատրաստե՞լ արդյոք հարցերը գրավոր, ի՞նչ հաջորդականությամբ:

Տեսության մեջ տարածված է այն կարծիքը, որ վկայի հարցաքննությանը պետք է նախապատրաստվել, կազմելով նրան տրվելիք հարցերը՝ յուրաքանչյուր փաստի համար՝ մեկ հարց: Այս կանոնին հետևող փաստաբանները պատրաստում են կոշտ սխեմա, որով պետք է տարվի վկայի հարցաքննությունը, կանխատեսելով, թե որ հարցին ինչ է պատասխանելու վկան և, ըստ այդմ, ունենում են արդեն նախապատրաստված մյուս հարցը, և այդպես շարունակ: Սակայն ի՞նչ անել, եթե վկան չի ցանկանում «տեղավորվել» մեր պատրաստած սխեմայի մեջ, եթե առաջին իսկ հարցից հետո սկսում է հեռանալ մեր սպասվող պատասխանից: Չե՞ որ մենք մեր փորձից գիտենք, որ կան շատախոս վկաներ, կան վկաներ, որոնք շատախոսության միջոցով ուզում են շեղել մեզ որոշակի փաստի վերաբերյալ հարցերից, կան վկաներ, որոնք պարզապես չեն ընկալում մեր հարցերը և այլն: Մենք (ի տարբերություն մի շարք երկրներում գործող փաստաբանների), չենք կարող պահանջել, որպեսզի վկան մեր հարցին պատասխանի միայն «այո» կամ «ոչ», ինչը փաստաբանին հնարավորություն է տալիս հարցաքննությունը տանել իր կողմից նախանշված հունով:

Ինչ անել նման դեպքում: Չե՞ որ վկայի առաջին իսկ շեղումը մեր գծագրած հարցաշարից խառնում է մեր «խաղաքարտերը», անհիմաստ դարձնելով նախապատրաստված հարցաշարը:

Խորհուրդը տվյալ դեպքում միակն է. հարցաքննությանը (հատկապես՝ խաչաձև) նախապատրաստվելիս երբեք մի կազմեք վկային տրվելիք հարցերը: **Նախապատրաստեք այն պատասխանները, որոնք անհրաժեշտ է ստանալ վկայից** և ամեն ինչ կկանգնի իր տեղը: Իսկ թե ինչպիսի՞ հարցերի միջոցով այդ պատասխանները կստանաք՝ պետք է յուրաքանչյուր դեպքում կողմնորոշվեք տեղում:

Փաստաբանների, հավակնորդների և ուսանողների հետ փաստաբանական հմտությունների վերաբերյալ դասընթացների բազմամյա փորձը ցույց է տալիս, որ դատախաղերի ժամանակ վկաներին հարցաքննող կողմերը վարողի հարցին պատասխանում են, որ լիարժեք պատրաստ են վկայի հարցաքննությանը: Սակայն, երբ հարցնում ես նրանց, թե իսկ ի՞նչ պատասխաններ են ուզում «կորզել» վկայից այդ հարցաքննության արդյունքում, ոչ ոք չի կարողանում պատասխանել: Տրամաբանական հարց է առաջանում՝ ինչպե՞ս կարող է փաստաբանը զգալ իրեն պատրաստ վկայի հարցաքննությանը, եթե նա պատկերացում անգամ չունի, թե ի՞նչ պատասխաններ է ուզում ստանալ այդ վկայից: **Փոխարենը նա (չիմանալով, թե ինչ պատասխաններ է ուզում ստանալ) հայտարարում է, որ լավ գիտի, թե ինչ հարցեր տա այդ վկային:** Հասկանալի է, որ նման հարցաքննությունը կարող է հաջողությամբ ավարտվել միայն, եթե ամբաստանյալը ծնվել է բախտավոր աստղի տակ:

Այսպիսով՝ ամփոփենք. վկաների հարցաքննությանը նախապատրաստվելիս պետք չէ կազմել վկաներին տրվելիք հարցերը, այլ՝ պետք է պատրաստել այն պատասխանները, որոնք կցանկանայինք լսել այս վկաներից:

Իսկ ի՞նչ պատասխաններ է ցանկալի լսել վկաներից:

Տեսության մեջ տարբերակվում են վկաների ուղիղ և խաչաձև հարցաքննությունները: Երբ մեր փաստաբանները լսում են «խաչաձև հարցաքննություն» արտահայտությունը, նրանցից շատերը, չխորանալով տերմինի իմաստի մեջ, անկեղծորեն հայտարարում են, որ մեր քրեական դատավարությունը այդպիսի հարցաքննություն չի նախատեսում:

Իրականում ամեն ինչ շատ ավելի պարզ է՝ ուղիղ հարցաքննությունը նշանակում է, որ վկային հարցաքննում է նրան հրավիրած կողմը, օրինակ՝ մեղադրանքի վկային հարցաքննում է մեղադրողը, պաշտպանության կողմից հրավիրված վկային՝ պաշտպանը կամ ամբաստանյալը: Խաչաձև հարցաքննությունը, ինչպես, հավանաբար, արդեն ընթերցողը կռահեց, այն հարցաքննությունն է, երբ մեղադրողը հարցաքննում է պաշտպանի կողմից հրավիրված վկային, կամ պաշտպանը՝ մեղադրանքի կողմից դատակոչված վկային:

Այս տերմինները պատահական չեն մտցվել շրջանառության, մեջ՝ ուղիղ և խաչաձև հարցաքննությունների ինչպես նպատակները, այնպես էլ՝ տեխնիկան, էապես տարբերվում են:

Եթե պաշտպանն իրականացնում է ուղիղ հարցաքննություն, ապա նրա նպատակն է (որպես կանխավարկած ընդունենք, որ պաշտպանը գիտի, որ այս վկային հայտնի են ամբաստանյալի

դիրքորոշումը հաստատող փաստեր և նա պատրաստ է այդ փաստերը հայտնել դատարանին)՝ իր վկայի լեզվով պատմել դատարանին այն, ինչ անհրաժեշտ է իր պաշտպանյալին: Այսինքն, հարցերը տրվելու են այն հաշվարկով, որ վկային զցել անհրաժեշտ հունի մեջ, օգնել նրան, առանց անտեղի շեղումների, պատմել այն, ինչ անհրաժեշտ է պաշտպանին: Հարցերը թույլատրելիության սահմաններում ուղղորդող են, ամեն փաստի վերաբերյալ մեկ հարց սկզբունքով: Եթե պաշտպանը զգում է (կամ ավելի լավ է՝ հաստատ գիտի), որ ինչ-որ փաստերի մասին խոսելիս վկան կարող է հուզվել և այդ վիճակում ավելի համոզիչ կերպով ներկայացնել դատարանին իրողությունը, ապա փորձառու փաստաբանը կարող է իրեն թույլ տալ դիմել այդպիսի ռիսկի: Հաջողության դեպքում այդպիսի ցուցմունքը ավելի արժեքավոր կլինի՝ մի կողմից ցույց կտա, որ վկան սովորեցված չէ, մյուս կողմից՝ կարող է որոշակի հոգեբանական ազդեցություն գործել անգամ ամենասառը դատավորի վրա: Սակայն այս հնարքը կիրառեք շատ մեծ զգուշությամբ:

Այլ նպատակներ ենք հետապնդում խաչաձև հարցաքննության, այսինքն՝ մեղադրական ցուցմունք տվող վկայի հարցաքննության ժամանակ: Այս դեպքում, կախված իրավիճակից, մեր հարցադրումների նպատակը կարող է լինել՝ վկաների ցուցմունքների արժանահավատությունը կասկածի տակ դնելը, նրա կողմից իր իսկ նախկին ցուցմունքը հերքելուն դրդելը, ստիպելը, որպեսզի վկան ինչ-որ պահի ցույց տա, որ կասկածում է իր տեսածի կամ լսածի վրա: Միամտություն կլինեն ակնկալել, որ պաշտպանի կողմից վկայի խաչաձև հարցաքննության արդյունքում վկան կարող է 180 աստիճանով փոխել քիչ առաջ մեղադրողի հարցերին ի պատասխան տրված ցուցմունքները և սկսել ցուցմունքներ տալ հօգուտ ամբաստանյալի: Ստիպեք վկային հակասելու ինքն իրեն, օրինակ՝ գտեք նրա նախաքննական և դատարանում տրված ցուցմունքների միջև էական հակասություն, միջնորդեք հրապարակել նախաքննական ցուցմունքը և խնդրեք վկային պարզաբանել այդ հակասությունները: Համոզված եղեք, որ ցանկացած պատասխանի դեպքում վկայի դատարանում տրված ցուցմունքը փոքր-ինչ կասկածելի կդառնա: Մեկ այլ դեպքում պաշտպանը հայտնաբերեց, որ վկայի նախաքննական ցուցմունքներից երկուսը տառացիորեն, ընդհուպ մինչև տառասխալները և կետադրական նշանները, համընկնում են: Պաշտպանն այդ մասին հայտարարություն արեց և միջնորդեց հրապարակել դրանք, այնուհետև խնդրեց վկային պարզաբանել այդ համընկնումը, որից հետո վկան, հասկանալի պատճառներով, խճճվեց և գնալով սկսեց տալ ավելի և ավելի անտրամաբանական պարզաբանումներ, վերջնականապես խճճվելով և խճճելով ինչպես մեղադրողին, այնպես էլ դատարանին: Արդյունքում, այս վկայի ցուցմունքը, որն ամենաէականն էր, դատարանի կողմից չհամարվեց արժանահավատ: Մյուս դեպքում համադրեք վկայի ցուցմունքները գործով ձեռք բերված այլ ապացույցների, օրինակ՝ փորձագետների եզրակացությունների հետ: Գործերից մեկով վկան ցուցմունք էր տալիս, որ տեսել է մեղադրյալի կողմից տուժողին սպանելը: Պաշտպանը հարցերի միջոցով հնարավորություն տվեց, որպեսզի այս վկան մանրամասնորեն նկարագրի, թե ինչպես տուժողը, հրազենային վնասվածքը ստանալուց հետո, փորձում էր պայքարել ամբաստանյալի հետ, ինչպես էր բռնել ինքնաձիգի փողը և փորձում էր այն խլել, որից հետո ուժասպառ ընկավ: Վկայի հարցաքննությունն ավարտվելուց հետո, երբ եկավ գրավոր ապացույցների հետազոտման փուլը, պաշտպանը դատարանի ուշադրությունը

հրավիրեց փորձագետի եզրակացության այն հատվածի վրա, որտեղ նշված էր, որ հրագենային վնասվածքը ստանալուց հետո տուժողը զրկված էր ինքնուրույն շարժումներ կատարելու որևէ հնարավորությունից:

Այսպիսով, եթե վերը շարադրվածը ընթերցողի համար համոզիչ էր, դուրս բերենք խաչածև հարցաքննության գլխավոր սկզբունքները.

- նախապատրաստեք ոչ թե հարցերը, այլ՝ պատասխանները, որոնք ակնկալում եք ստանալ վկայից,
- մի սպասեք հրաշքի՝ մեղադրանքի վկան, անգամ ամենալավ հարցաքննության արդյունքում, 180 աստիճանով չի փոխելու այն ցուցմունքը, որը քիչ առաջ տալիս էր՝ մեղադրողի հարցերին պատասխանելիս,
- օգտագործեք ձեր հարցադրումները՝ մեղադրանքի վկայի ցուցմունքը «փչացնելու» համար,
- երբեք մի տվեք հարցը, եթե չեք պատկերացնում, թե ինչպիսինը կլինի դրա պատասխանը:

***Խնդիր.** Ամբաստանյալը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-213 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությանը (վաշխառություն) օժանդակելու մեջ: Նրա դեմ ցուցմունք է տվել տուժողը, ով հայտնել է, որ ամբաստանյալի միջոցով տոկոսով՝ ամսական 5% տոկոսադրույքով 3.000.000 դրամ է փոխառությանը վերցել Կ.Ս.-ից, որից հետո ամբաստանյալի միջոցով երկու տարի շարունակ ամսական 150.000 դրամ է փոխանցել Կ.Ս.-ին, իսկ այնուհետև, երբ այլևս չի կարողացել վճարել տոկոսները, Կ.Ս.-ը իրենից պահանջել է անհապաղ վերադարձնել փոխառությանը տրված ամբողջ գումարը:*

Կազմել այն պատասխանները, որոնք տուժողի հարցաքննության ընթացքում կցանկանայիք ստանալ նրանից: Այնուհետև կազմակերպել դատախազ, որի ընթացքում իրականացնել «տուժողի» խաչածև հարցաքննություն:

Մեր պաշտպանյալների հարցաքննության վերաբերյալ.

Մի խուսափեք դատաքննության ընթացքում ամբաստանյալի հարցաքննությունից: Եթե նախաքննության ընթացքում մեղադրյալի կողմից ցուցմունքներ տալը լուրջ ռիսկեր է իր մեջ պարունակում, ապա դատաքննության ընթացքում, երբ քրեական գործի բոլոր նյութերը հայտնի են և պաշտպանությունը մանրակրկիտ ձևով նախապատրաստված է, վրիպում չի կարող տեղի ունենալ, իսկ եթե տեղի ունենա՝ ապա միայն պաշտպանի անբարեխղճության արդյունքում: Վերջին հաշվով, եթե մեղադրյալը չպետք է ցուցմունք տա ինքն իր օգտին, ապա էլ ո՞վ պետք է դա անի: Եթե պաշտպանը գտնում է, որ դատաքննության ընթացքում իր պաշտպանյալի ցուցմունք տալը վտանգավոր է՝ ուրեմն ինքը (պաշտպանը) թերացել է: Ցանկացած մեղադրյալի կարելի է նախապատրաստել ցանկացած հարցաքննության, առավել ևս, որ մեղադրյալի ցուցմունքը դա այն միակ ապացույցն է, որը պաշտպանը կարող է նախապատրաստել այն ձևով, ինչ ձևով ուզի:

Խնդիր. Վերևում նկարագրված՝ վաշխատությանը օժանդակելու վերաբերյալ գործով նախապատրաստել ամբաստանյալի ցուցմունքը: Իրականացնել ամբաստանյալի ուղիղ հարցաքննությունը:

Նախաքննության ընթացքում վկաների կողմից տրված ցուցմունքները դատաքննության ընթացքում հրապարակելու հետ կապված խնդիրների վերաբերյալ.

Շատերիս է հայտնի հետևյալ իրավիճակը. դատաքննության ընթացքում դատավորը մի քանի անգամ ծանուցում է կարևոր վկաներից մեկին, որը նախաքննության ընթացքում բախտորոշ ցուցմունք է տվել ամբաստանյալի դեմ, սակայն վկան չի ներկայանում դատարան: Դրանից հետո դատարանը կայացնում է բերման որոշում և ոստիկանությունից ստանում տեղեկանք, որ նշված հասցեում վկան չի հայտնաբերվել, իսկ վերջինիս հարազատները հայտարարել են, որ նա բացակայում է քաղաքից (հանրապետությունից): Որից հետո դատարանը, համարելով, որ վկային դատարան հրավիրելու բոլոր միջոցները սպառված են, որոշում է կայացնում նրա ցուցմունքները հրապարակելու մասին: Ընդ որում, որպես կանոն, այդ վկաների նախաքննական ցուցմունքները լինում են ամբաստանյալին ի վնաս, իսկ որոշ դեպքերում ամբաստանյալի և այդ վկայի միջև նախաքննության ընթացքում անգամ առերեսում կատարված չի լինում: Ի՞նչպես վարվել նման դեպքում, չե՞ որ այդ ցուցմունքը հրապարակվելու դեպքում մեղադրողը այն կարող է օգտագործել իր ճառում, իսկ դատարանը՝ դատավճռում, մինչդեռ Դուք հնարավորություն չեք ունեցել հարցաքննելու այդ վկային:

Նման դեպքերում մենք կարող ենք հիմնվել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի վրա, համաձայն որի՝ քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք, որպես նվազագույն իրավունք, ի թիվս այլի իրավունք ունի հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին: Ճիշտ է, Եվրոպական դատարանի վճիռներից բխում է, որ նշված նորմում խոսքը չի վերաբերվում բացարձակապես բոլոր վկաներին, բայցևայնպես, եթե մեղադրանքը մեծապես հիմնված է տվյալ վկայի ցուցմունքի վրա, ապա մեղադրյալը պետք է իրավունք ունենա հարցաքննելու նրան:

Այստեղ պետք է հաշվի առնել, որ մեղադրանքի կողմը կարող է ներկայացնել հետևյալ փաստարկը. նախաքննության ընթացքում մեղադրյալը առերեսված է եղել տվյալ վկայի հետ և հնարավորություն է ունեցել հարցեր տալու նրան: Այս փաստարկի դեմ առարկությունը կարող է կայանալ նրանում, որ նախաքննության ընթացքում մեղադրյալի ու նրա պաշտպանի կողմից մեղադրանքի վկայի հարցաքննությունը չի կարող համարվել արդյունավետ, քանի որ այդ փուլում պաշտպանական կողմին դեռևս տրամադրված չեն լինում քրեական գործի ողջ նյութերը (դրանք տրամադրվում են նախաքննության ավարտի մասին հայտարարելուց հետո):

Խնդիր. Մեղադրանքի հիմքում դրված կարևոր ապացույցներից մեկը վկա Ս.Ռ.-ի ցուցմունքն է, որում վերջինս մատնացույց է արել ամբաստանյալին, որպես սպանության կատարողի: Ամբաստանյալը մշտապես ժխտել է իր մասնակցությունը սպանությանը, նշելով, որ վկա Ս.Ռ.-ն թշնամական հարաբերությունների մեջ է գտնվում իր հետ, սպանված է առերեսում կատարել իր ու այդ վկայի միջև,

սակայն նախաքննական մարմինը այդպես էլ առերեսում չի իրականացրել: Տվյալ վկան դատարանի որոշմամբ ընդգրկված է դատական նիստին կանչման ենթակա անձանց ցանկում, սակայն, նախքան առաջին դատական նիստը սկսվելը, մահացել է: Դատաքննության ընթացքում մեղադրողը, հիմնվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 342-րդ հոդվածի վրա, միջնորդել է հրապարակել այս վկայի նախաքննական ցուցմունքները: Ի՞նչ առարկություններ կարելի է ներկայացնել այդ միջնորդության դեմ:

Դատաքննությունը լրացնելու վերաբերյալ միջնորդությունների մասին.

Դատաքննությունը լրացնելու միջնորդություններ ներկայացնելու առաջարկ դատարանը կողմերին անում է այն ժամանակ, երբ հետազոտված է համարում նախապես որոշված ապացույցները (ամբաստանյալների, տուժողների, դատակոչված վկաների ցուցմունքները, իրեղեն ապացույցները, այլ փաստաթղթերը, փորձագետների եզրակացությունները և այլ): Այս փուլում կողմերին հնարավորություն է տրվում ներկայացնելու նոր ապացույցներ կամ այդպիսի ապացույցներ պահանջելու և հետազոտելու միջնորդություն անել: Չի բացառված նաև մեղադրանքի ապացույցների թույլատրելիությունը վիճարկելու հետ կապված միջնորդությունների հարուցումը:

Մաս 4. Դատական վիճարանություններ

Ինչպես ասվում է, կատարյալ պաշտպանական ճառը լինում է այն դեպքում, երբ պաշտպանը կարող է դատարանին հայտարարել, որ ոչինչ չունի ավելացնելու դատաքննության արդյունքներին: Իհարկե, գործնականում այդպիսի «կատարյալ» ճառն անհնարին է, քանի որ դատաքննության արդյունքները երբեք միանշանակ չեն լինում ու կողմերը, յուրաքանչյուրն իր տեսակետից, իրենց ճառերում ամփոփելու են այդ արդյունքները:

Եվ այսպիսով, ճառը ոչ այլ բան է, քան դատաքննության արդյունքների ամփոփում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 354 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, **իրենց ճառերում կողմերն իրավունք չունեն հիմնվել այնպիսի ապացույցների վրա, որոնք չեն հետազոտվել դատաքննության ժամանակ:**

Մի քանի գործնական խորհուրդ. Միշտ նախապատրաստեք ճառի հիմնական դրույթները գրավոր: Չի բացառված, որ ընթացքում Դ-ուք փոքր-ինչ շեղվեք գրավոր տեքստից, սակայն հիմնական փաստերը, ապացույցները և վերլուծությունները պետք է պատրաստված լինեն նախապես և ճառն ավարտվելուց հետո ներկայացվեն դատարանին գրավոր տեսքով: Երբեք մի ճառեք անմիջապես մեղադրողից հետո. մեղադրողի (իսկ դատավարությանը տուժողի մասնակցության դեպքում՝ նրա կամ նրա ներկայացուցչի) ճառը լսելուց հետո պահանջեք Չեզ տրամադրել այդ ճառի պատճենը, իսկ եթե ճառը դատարանին գրավոր չի ներկայացվել, ապա՝ այդ նիստի ձայնագրությունը: Մանրամասն ուսումնասիրեք Չեզ դատավարական հակառակորդի ճառում բերված բոլոր փաստարկները, քանի որ Չեզ պաշտպանական

ճառը, որպես կանոն, կառուցված է լինելու մեղադրողի ճառի դրույթները կամ դրանց մի մասը հերքելու վրա:

Պաշտպանական ճառերը, կապված պաշտպանական ռազմավարությունից, կարող են լինել տարբեր ուղղվածության: Եթե պաշտպանական կողմը ժխտում է հանցանքը մեղադրյալի կողմից կատարելը, ապա հասկանալի է, որ պաշտպանական ճառը ուղղված է լինելու մեղադրանքի ապացույցները հերքելուն: Եթե պաշտպանական կողմը, չժխտելով մեղադրական եզրակացության մեջ նկարագրվող գործողությունները մեղադրյալի կողմից կատարելը, վիճարկում է այդ գործողությունների քրեա-իրավական որակումը, ապա պաշտպանական ճառում բերվելու են նյութական իրավունքի համապատասխան նորմերի վերլուծություններ, հավանաբար նաև՝ ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան նախադեպերի վկայակոչումներով: Եթե ամբաստանյալը իրեն մեղավոր է ճանաչել և հայցում է մեղմ պատիժ, ապա պաշտպանական ճառի ամենահավանական (բայց ոչ միակ) տարբերակն է՝ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների վկայակոչումը, այնպիսի դատավճիռների վկայակոչումը, որոնցում՝ համանման իրավիճակներում դատարանների կողմից առավել մեղմ պատիժներ են սահմանվել: Սակայն հաճախ պաշտպանը պարտավոր է լինում մեկ ճառում կիրառել մի քանի տարբեր մոտեցումներ, օրինակ՝ հերքելով ինչպես իր պաշտպանյալին վերագրվող գործողությունները, այնպես էլ՝ այդ գործողությունների քրեա-իրավական որակումը:

Ռեպլիկի մասին.

Ճառին հաջորդում են կողմերի ռեպլիկները: Որպես կանոն, ռեպլիկում կողմերը բերում են իրենց ամենակարևոր մեկ կամ երկու փաստարկները: Եթե մեղադրողը օգտվել է ռեպլիկի իր իրավունքից, ապա Դուք ևս ներկայացրեք Ձերը, հնարավորինս հակիրճ և դիպուկ ձևով հերքելով դատավարական հակառակորդի փաստարկը: Եթե մեղադրողը չի օգտվել ռեպլիկի իր իրավունքից, կարելի է նույնպես լուռ մնալ, կամ, ինչպես մի փաստաբան վարվեց՝ ռեպլիկի կարգով հայտարարել, որ մեղադրողը չօգտվեց ռեպլիկից, քանի որ պաշտպանական ճառը հերքող որևէ փաստարկ չգտավ: Ճիշտ է, նման դեպքում դատավարության մասնակիցների և դատարանի մոտ կարող է այլ տպավորություն ստեղծվել՝ որ պաշտպանական ճառն այնքան «մեղադրական» էր, որ մեղադրողը պարզապես դրան ավելացնելու որևէ բան չգտավ: Ամեն դեպքում՝ եթե մեղադրողը օգտվել է ռեպլիկի իր իրավունքից, ապա Դուք ևս ներկայացրեք Ձերը:

Խնդիր. Դատաքննության ընթացքում հիմնավորվել է, որ ամբաստանյալը, մուտք գործելով տուժողի տուն, գաղտնի հասիշտակել է վերջինիս պատկանող ադամանդե զարդերի մի մասը, մյուս մասը բողբոջելով տեղում: Ամբաստանյալն իրեն մեղավոր չի ճանաչում և ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում, ցուցմունք է տվել, որ գործազուրկ է, բացառապես իր խնամքին են գտնվում իր երեք երեխաները (ուս մայրը բաժանվել է իրենից ու նոր ամուսնու հետ միասին արտագաղթել Հայաստանից) և ծեր մայրը: Մայրը ծանր հիվանդացել է և նրան շտապ վիրահատություն է անհրաժեշտ եղել, սակայն տանը գումար չի եղել, ինքը (ամբաստանյալը) փորձել է

տարբեր տեղերից (ազգականներից, հարևաններից, ընկերներից, բարեգործական կազմակերպություններից) գումար վերցնել, սակայն ոչ ոք չի տվել: Պետպատվերով այդ վիրահատությունը նույնպես չի իրականացվել: Փորձել է վարկ ստանալ, գրավադրելով իր բնակարանը, սակայն բանկը հրաժարվել է գումար տալ ու բնակարանը գրավ վերցնել, քանի որ անհրաժեշտ է եղել սեփականատերերից մեկի՝ ամբաստանյալի նախկին կնոջ համաձայնությունը, ինչը նույնպես հնարավոր չի եղել ստանալ: Ամբաստանյալի նշած փաստերից յուրաքանչյուրը հաստատվել է դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներով ու չի վիճարկվում տուժողի և մեղադրողի կողմից:

Նախապատրաստել պաշտպանական ճառը, իսկ եթե հնարավոր է՝ բաժանվել երեք խմբի և նախապատրաստել մեղադրողի, տուժողի ու պաշտպանի ճառերը:

Վերջին խոսքի մասին.

Մեղադրյալները հաճախ են հարցնում, թե ի՞նչ պետք է ասվի վերջին խոսքում, չե՞ որ պաշտպանը իր ճառում արդեն ամեն ինչ ասել է: Հարցադրումը միանգամայն ճիշտ է թվում՝ եթե ինչ-որ բան լինելու ասելու, պաշտպանը դա պետք է որ ասած լինել իր ճառում:

Սակայն մեր պաշտպանյալների վերջին խոսքն անհրաժեշտ է, և նրանց նախապատրաստելիս սխալ չէր լինի ամբաստանյալին ներկայացնել հետևյալ իրավիճակը՝ «Ենթադրենք, դատավորը, նախքան դատավճիռը կայացնելը, այցելել է քեզ քո խցում: Մնալով դատավորի հետ առանձին, ի՞նչ կասեիր նրան, ի՞նչ կերպ կփորձեիր ապացուցել նրան քո անմեղությունը կամ խնդրել մեղմ վարվել քեզ հետ: Այդ նույնը ձգտիր ասել վերջին խոսքում»: Իհարկե, վերջին խոսքը ամբաստանյալը պետք է նախապես, մի քանի անգամ, կրկնի իր պաշտպանի հետ առանձնատեսակցության ժամանակ: Մեկընդմիջտ պետք է հիշել, որ դատական քննության ժամանակ պաշտպանի կամ պաշտպանյալի կողմից ոչ մի իմպրովիզացիա ընդունելի չէ:

Խոնդիր. նախորդ մասում նկարագրված խնդրի հիման վրա նախապատրաստել ամբաստանյալի վերջին խոսքը:

6. Վարույթը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում.

Մաս 1. Վերաքննիչ բողոք կազմելու հետ կապված առանձնահատկությունները Վարույթը վերաքննիչ դատարանում

Վերաքննիչ բողոքների մասին.

Ինչ է պետք նախ և առաջ հաշվի առնել առաջին ատյանի դատարանի դատական ակտերը վերաքննիչ դատարան բողոքարկելիս: Իհարկե, նախ և առաջ՝ բողոքարկման ժամկետները, որոնք սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասով:

Երկրորդ՝ բողոքարկման սահմանները: Ինչպես հայտնի է, դատավճիռը, որը կայացվել է արագացված կարգով դատական քննության արդյունքում, չի կարող բողոքարկվել գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված հետևությունների՝ գործի ապացույցներին չհամապատասխանելու հիմքով (տես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375⁴-րդ հոդվածը):

Երրորդ՝ պետք է միշտ հաշվի առնել, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է **վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում**: Այս տեսակետից, ինչպես նաև հաշվի առնելով նաև օրենքի մյուս պահանջը՝ որ **վերաքննության կարգով բողոքարկման ենթակա գործն ըստ էության լուծող դատական ակտերը անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում**, որևէ հիմք կամ հիմնավորում վերաքննիչ բողոքում չնշելը այդուհետ անհնարին կդարձնի հետագայում դրա վերաբերյալ որևէ ատյանում որևէ քննարկումները: Այդ իսկ պատճառով, եթե կասկածում եք՝ նշել թե չե որևէ հիմք կամ հիմնավորում, խորհուրդ կտալինք նշել բոլոր հնարավոր հիմքերն ու հիմնավորումները: Հակառակ դեպքում Ձեր պաշտպանյալը հետագայում, վերաքննիչ բողոքը մերժվելու դեպքում, կարող է մեղադրել Ձեզ այն բանում, որ ինքը ուներ այլ հիմքեր ու հիմնավորումներ, որոնք վերաքննիչ բողոքում չեն նշվել և Ձեր կողմից վերաքննիչ բողոքում դրանք չնշելու պատճառով իր գործը ձախողվել է:

Չորրորդ՝ անպայման հաշվի առեք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասը, որում նշված է, թե ինչ պետք է բովանդակի վերաքննիչ բողոքը:

Հինգերորդ՝ արդյո՞ք ենթակա է բողոքարկման այն դատական ակտը, որը Դ-ուք պատրաստվում եք բողոքարկել (քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ հոդված) և արդյո՞ք Ձեր վստահորդը իրավունք ունի բողոքարկելու այդ դատական ակտը (քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդված):

Վերաքննիչ բողոքը կազմելու տեխնիկայի մասին:

Թեև օրենքը չի պարունակում վերաքննիչ բողոքի կառուցվածքի մասին պարտադիր պահանջներ, ստորև կներկայացնենք որոշ խորհուրդներ, որոնց հետևելը կհեշտացնի բողոքի կազմումը և բողոքի հասցեատիրոջ կողմից դրա ընկալումը:

Նախ, ցանկալի է, որպեսզի վերաքննիչ բողոքում արտահայտված կերպով երևան դրա ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերը:

Ներածական մասում նշեք, թե որ դատարանին է հասցեագրված բողոքը, ում կողմից, ինչ դատական ակտ է բողոքարկվում, որ դատարանի կողմից, որ գործով և երբ է այն կայացվել, ամբողջությամբ է արդյոք այն բողոքարկվում թե ինչ-որ մասով:

Նկարագրական մասը պետք է **զերծ լինի որևէ գնահատականներից** և առավել ևս զգացմունքներից (զգացմունքները առհասարակ պետք է բացակայեն իրավաբանական փաստաթղթերում):

Նկարագրական մասում պետք է (1) բերվեն բոլոր այն տվյալները, որոնք կարևոր են բողոքի քննության համար և (2) չբերվի որևէ տվյալ, որը նշանակություն չունի բողոքի քննության համար (ասենք, որ երկրորդ պահանջը կատարելը ավելի դժվար է լինում, քան առաջինը):

Ցանկալի է նկարագրական մասը բաժանել հետևյալ ենթաբաժինների՝ «Գատավարական նախապատմությունը», «Գործի հանգամանքները», «Գործի համար նշանակություն ունեցող փաստերը՝ դրանք հիմնավորող ապացույցներով», «Մեղադրյալի դիրքորոշումը», «Վարույթն ատյանի դատարանում և դատավճռի պատճառաբանությունները»: Սակայն, ելնելով կոնկրետ բողոքի նպատակներից և ուղղվածությունից, այս բաժիններից մեկը կամ մի քանիսը կարող են բացակայել, օրինակ՝ կարող է որևէ այլ բաժին ավելանալ, օրինակ՝ «Մինչդատական վարույթը», եթե դա էական նշանակություն ունի բողոքի համար:

Բողոքի պատճառաբանական մասում (որը կարող է վերնագրվել, օրինակ՝ «Վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները») պետք է **վերլուծվեն նկարագրական մասում բերված ապացույցները, դրանց հիման վրա դուրս բերվի փաստը և նշվի այդ փաստի նկատմամբ կիրառման ենթակա օրենքը**: Որից հետո ցույց տրվի, թե այդ շղթայի ո՞ր օղակում է առաջին ատյանի դատարանը թույլ տվել իր խախտումը և ինչպե՞ս է այդ խախտումը ազդել (կամ՝ ինչպես կարող էր ազդել) գործի ելքի վրա:

Ուշադրություն. Եթե բողոքը բերվում է քրեադատավարական օրենքի էական խախտման հիմքով, ապա չբավարարվեք վերաքննիչ բողոքում քրեադատավարական խախտումները ցույց տալով: Պետք է նաև ապացուցել, որ այդ խախտումը հանգեցրել է, կամ՝ կարող էր հանգեցնել գործի ոչ ճիշտ լուծման, հակառակ դեպքում վերաքննիչ բողոքը իրավացիորեն կմերժվի:

Ուշադրություն. Եթե չեք բացառում տվյալ գործով հետագայում Սահմանադրական դատարան կամ Եվրոպական դատարան դիմելը, անպայման վերաքննիչ, իսկ այնուհետև նաև՝ վճռաբեկ բողոքներում մատնանշեք այն հիմքերը, որոնցով հետագայում գործը ներկայացվելու է այդ ատյաններին (տես՝ սույն ձեռնարկի հետագա բաժիններում «ընդունելիության» չափանիշների):

Բողոքի եզրափակիչ մասում շատ կարևոր է ճիշտ նշել պահանջը: Որպեսզի այդ հարցում չսխալվել և չներկայացնել այնպիսի պահանջ, որն՝ անգամ Վերաքննիչ դատարանի ցանկության դեպքում, ենթակա չէ բավարարման, ձգտեք, որ պահանջը համապատասխանի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածով սահմանված՝ վերաքննիչ դատարանի լիազորություններին: Եթե բողոքարկվում է կալանավորման հետ կապված առաջին ատյանի դատարանի որոշումը, ապա՝ նույն օրենսգրքի 288 հոդվածի 5-րդ մաս:

Վերաքննիչ բողոքը կարող է չունենալ ծավալուն նկարագրական մաս, եթե բողոք բերողը չի վիճարկում դատարանի կողմից հաստատված համարված հանգամանքները, այլ՝ հիմնվելով դատարանի կողմից ճանաչված փաստերի վրա, վիճարկել է դրանց նկատմամբ կիրառման ենթակա նյութական նորմը, կամ օրինակ, նշանակված պատիժը: Որպես կանոն, ավելի ծավալուն են լինում այն վերաքննիչ բողոքները, որոնցում կողմը վիճարկում է դատարանի կողմից հաստատված համարված փաստական հանգամանքները: Նման դեպքում հնարավոր չէ խուսափել ապացույցները մանրամասնորեն ներկայացնելուց, դրանց ձեռքբերման եղանակները քննարկելուց, վերլուծելուց և այլն:

Վերաքննիչ դատարանում գործի²¹ քննության առանձնահատկությունները.

Գործն ըստ էության լուծող դատական ակտերը²² վերաքննիչ դատարանում վերանայվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, որոնցից մեկը նախագահող է, իսկ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը՝ դատավորի կողմից միանձնյա: Գործի քննությունն իրականացվում է վերաքննության կամ՝ վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կարգով: Երկրորդը կիրառվում է, եթե վերաքննիչ դատարանն անհրաժեշտ չի համարում դատաքննության ընթացքում անմիջականորեն հետազոտել առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցները կամ նոր ապացույցներ ձեռք բերել ու հետազոտել: Պետք է հաշվի առնել, որ առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցները կհետազոտվեն միայն կողմի միջնորդությամբ (օրենսգրքի 391-րդ հոդվածի 4-րդ մաս):

Վերաքննիչ դատարանի լիազորությունները.

Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը (տես՝ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածը)՝

- 1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն առաջին ատյանի դատարանի կողմից կայացված՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վերաքննիչ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը.
- 2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով կայացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, կամ գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ.
- 3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և այդ մասով հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը.
- 4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.
- 5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում քաղաքացիական հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով

²¹ Քրեական դատավարության օրենսգրքի՝ վերաքննիչ վարույթին վերաբերող բաժնի որոշ հոդվածներում նշված է «գործի քննություն», որոշ հոդվածներում՝ «բողոքի քննություն»:

²² «Գործն ըստ էության լուծող դատական ակտեր» սահմանումը տրված է քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10¹-րդ կետում:

օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Բողոքարկված դատական ակտերի բեկանման կամ փոփոխման հիմքերը նշված են քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածում: Բողոքարկված դատական ակտը բեկանվում կկամ փոփոխվում է, եթե թույլ է տրվել դատական սխալ, այն է՝

1) գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցների (դրույթը մանրամասնեցված է օրենսգրքի 396-րդ հոդվածում).

2) ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը (մանրամասնեցված է օրենսգրքի 397-րդ հոդվածում).

3) առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում (մանրամասնեցված է օրենսգրքի 398-րդ հոդվածում).

4) դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին (մանրամասնեցված է օրենսգրքի 396-րդ հոդվածում):

Բացի այդ, բողոքարկված դատական ակտը բեկանվում կամ փոփոխվում է, եթե հաստատվել է նոր երևան եկած կամ նոր հանգամանք, որն ազդել է դատական ակտի օրինականության կամ հիմնավորվածության վրա (մանրամասնեցված է օրենսգրքի 12¹ բաժնում):

Խնդիր. ներկայացվում է կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատարանի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասը: Առաջարկվում է այս որոշման դեմ կազմել վերաքննիչ բողոք.

«... Դատարանի իրավական վերլուծությունները.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ/0022/06/08 քրեական գործով 2008 թվականի հոկտեմբերի 31-ի որոշման 26-րդ կետում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «կալանքի ժամկետի

երկարացման վերաբերյալ օրենսդրական և նախադեպային կանոնակարգման համադրման և մեկնաբանման հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) շարունակվում են առկա լինել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերն ու պայմանները կամ ի հայտ են եկել առանձին կալանքի տակ պահելու նոր հիմքեր.

բ) գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն՝ ապահովելու գործի քննության ընթացքը»:

Դատարանը, քննելով ՀԿԳ ավագ քննիչի միջնորդությունը և հետազոտելով ներկայացված նյութերը, գտնում է, որ այն ենթակա է բավարարման, և թիվ 61201313 քրեական գործով մեղադրյալ XX-ի կալանավորման ժամկետը պետք է երկարացնել երկու ամիս ժամկետով, քանի որ Դատարան ներկայացված նյութերում՝ մասնավորապես XX-ի 2013 թվականի մայիսի 21-ի ցուցմունքում և YY-ի ու մեղադրյալ XX-ի 2013 թվականի հունիսի 3-ի առերես հարցաքննության արձանագրությունում, առկա է մեղադրյալ XX-ի կողմից նրան վերագրվող արարքը կատարելու հիմնավոր կասկած, իսկ նրան վերագրվող արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը բավարար հիմք են տալիս գալու հետևության, որ ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալ XX-ի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու միջոցով վարույթն իրականացնող մարմնի աշխատանքները խոչընդոտելու հավանականությունը բարձր է, իսկ գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն, ինչի մասին են վկայում քննիչի կողմից ներկայացված փաստաթղթերը: Ինչ վերաբերվում է գրավ կիրառելու մասին պաշտպանների միջնորդությանը, ապա Դատարանը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԳ/0022/06/08 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ անձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության հիմնավորումը կարող է դրվել գրավի կիրառումը մերժելու պատճառաբանության հիմքում՝ պայմանով, որ այդ պատճառաբանությունը հիմնված լինի գործով առկա փաստական տվյալների վրա: Դատարանը, հաշվի առնելով մեղադրյալ XX-ին կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը հիմնավորող վերոգրյալ հանգամանքները, գտնում է, որ նրա պատշաճ վարքագիծը հնարավոր չէ ապահովել կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ գրավի կիրառմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ, 135-137-րդ, 285-րդ, 286-րդ և 379-րդ հոդվածներով՝ Դատարանը

Որոշեց

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Մ. Բաբայանի միջնորդությունը բավարարել. թիվ 61201313 քրեական գործով մեղադրյալ XX-ի (ծնված 1965 թվականի հունիսի 28-ին, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բնակվում է Երևան քաղաքի zzzzz փողոցի jji տանը) կալանավորման ժամկետը երկարացնելու երկու ամիս ժամկետով՝ մինչև 2013 թվականի հոկտեմբերի 3-ը:

Պաշտպանների միջնորդությունը՝ թիվ 61201313 քրեական գործով մեղադրյալ XX-ի նկատմամբ որպես կալանավորման այրընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու վերաբերյալ, մերժել:
Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում:»:

Մաս 2. Վճռաբեկ բողոք կազմելու հետ կապված առանձնահատկությունները, Վարույթը վճռաբեկ դատարանում

Վճռաբեկ բողոքների մասին.

Բոլոր այն խորհուրդները, որոնք բերվեցին վերևում, կապված վերաքննիչ բողոքների ձևի, բովանդակության, դրանց կազմման տեխնիկայի հետ, հավասարապես կիրառելի են նաև վճռաբեկ բողոքների համար: Վճռաբեկ բողոքների դեպքում ավելանում է նաև մի բաժին, որը կապված է բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414²-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանգամանքներից որևէ մեկի կամ մի քանիսի վերաբերյալ հիմնավորումների հետ: Ընդունելիության այդ հիմքերն (բացի նոր երևան եկած և նոր հանգամանքներից) բավականին անորոշ են, դրանց վերաբերյալ որևէ պրակտիկ խորհուրդ տալն ի սկզբանե անհնարին է:

Նաև պետք է հաշվի առնել, որ՝ ի տարբերություն վերաքննիչ բողոքի, վճռաբեկ բողոքին պետք է կցված լինեն բողոքի պատճենը գործը քննած դատարան և դատավարության մասնակիցներին (բացառությամբ քննիչի և հետաքննության մարմնի) ուղարկված լինելը հաստատող փաստաթղթեր (որպես կանոն, դա փոստային ծառայության կողմից տրվող անդորրագրերն են):

Վճռաբեկ դատարանի լիազորությունները.

Վճռաբեկ դատարանի լիազորությունները նույնական են վերաքննիչ դատարանի լիազորություններին (վերջինս տես վերևում), բացի այդ՝ վճռաբեկ դատարանն ունի մեկ հավելյալ լիազորություն՝ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում վճռաբեկ դատարանը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել վերաքննիչ դատարանի դատական ակտը (խոսքը գործն ըստ էության լուծող դատական ակտերի մասին է)՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այդ դեպքում վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված:

Նոր և նոր երևան եկած հանգամանքների հիմքով բողոքների մասին²³.

Ինչպես և մյուս հիմքերով վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ բերելու դեպքում, այս դեպքում ևս կարևոր է հաշվի առնել. ի՞նչ ժամկետում կարող է դատական ակտը բողոքարկվել, ո՞վ կարող է բերել բողոքը, ո՞ր դատարան, ի՞նչ հիմքերով և ի՞նչ հիմնավորումներով:

²³ Վերաբերում է ինչպես Վճռաբեկ, այնպես էլ Վերաքննիչ դատարան ներկայացվող բողոքներին:

Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են, եթե՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ.

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

3) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված այլ նոր հանգամանքների դեպքում:

Ուշադրություն. վերը նշված առաջին և երկրորդ կետերով նախատեսված նոր հանգամանքները հաստատված են համարվում համապատասխանաբար Սահմանադրական դատարանի և ՀՀ մասնակցությամբ միջազգային դատարանի որոշմամբ դրանց ուժի մեջ մտնելու պահից և այդ հիմքով բողոք բերելու համար նախատեսված եռամսյա ժամկետը սկսում է ընթանալ այն պահից, երբ միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը այդ դատարանի կանոնակարգերով սահմանված կարգով հանձնվում է այդ դատարան ղինած անձին, իսկ մնացած դեպքերում՝ երբ անձն իմացել է կամ կարող էր իմանալ նոր հանգամանքի մասին (քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի 2-4-րդ մասեր):

Նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են, եթե՝

1) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված է վկայի, տուժողի ցուցմունքների, թարգմանչի կատարած թարգմանության ակնհայտ սխալ, կամ փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելը, ինչպես նաև իրեղեն ապացույցների, քննչական ու դատավարական գործողությունների արձանագրությունների և այլ փաստաթղթերի կեղծված լինելը, որոնք հանգեցրել են չիմնավորված կամ անօրինական դատավճիռ կայացնելուն.

2) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված են դատավորների հանցավոր գործողությունները, որոնք նրանք թույլ են տվել տվյալ գործը քննելիս.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված են գործի քննությունը կատարող անձանց այնպիսի հանցավոր գործողություններ, որոնք հանգեցրել են դատարանի չիմնավորված և անօրինական դատավճիռ կամ գործը կարճելու վերաբերյալ որոշում կայացնելուն.

4) ի հայտ են եկել դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչև այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալի անմեղությունը կամ նրա կատարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ինչպես նաև ապացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ գործով վարույթը կարճվել է:

«Նոր երևան եկած հանգամանք» արտահայտությունը, ինչպես և վերը թվարկված հիմքերը հուշում են, որ այդ հանգամանքը պետք է արդեն իսկ առկա լիներ գործի քննության ընթացքում, սակայն երևան գար արդեն հետագայում՝ դատավճիռ կամ այլ վերջնական որոշում կայացվելուց հետո:

Պետք է նկատենք, որ նոր երևան եկած հանգամանքների վերաբերյալ վարույթը կարգավորող օրենքներում առկա է որոշակի հակասություն, որը ցանկալի է հաշվի առնել: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁵-րդ հոդվածից հետևում է, որ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթը հարուցվում է դատախազի կողմից, որին և պետք է ներկայացվեն նոր երևան եկած հանգամանքների վերաբերյալ հայտարարություններն ու հաղորդումները: Ինչպես կարելի է կռահել՝ այս կարգավորումը մնացել է նախկինից և էականորեն հակասում է 12¹-րդ գլխի իմաստին և այդ գլխի մի շարք հոդվածների բովանդակությանը: Գործնականում սույն ձեռնարկի հեղինակին հայտնի չէ դեպք, երբ նոր երևան եկած հանգամանքով վճռաբեկ բողոքը վերադարձված լինել այն պատճառաբանությամբ, որ բողոք բերողը պետք է այդ հարցով դիմած լիներ դատախազին:

Պետք է հաշվի առնել, որ նոր երևան եկած հանգամանքների հիմքով բողոք բերելու ժամկետը 4 ամիս է՝ սկսած այն պահից, երբ բողոք բերողն իմացել է կամ կարող էր իմանալ այդ հանգամանքն ի հայտ գալու մասին: Նոր հանգամանքների հիմքով՝ բողոք բերելու ժամկետը 3 ամիս է:

Նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայելու բողոքներին օրենքով առաջադրվող պահանջները (այդ թվում՝ թե ինչ նյութեր պետք է կցվեն բողոքին) բերված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 266⁷-րդ հոդվածում: Պետք է հաշվի առնել, որ՝ բացի նույն օրենսգրքի 407-րդ հոդվածի 2¹-րդ մասով սահմանված փաստաթղթերի, տվյալ դեպքում բողոքին պետք է պարտադիր կցված լինեն նոր կամ նոր երևան եկած հանգամանքը հաստատող նյութերը: Եթե նույնիսկ այդ նոր հանգամանքը ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումն է, որը պաշտոնապես հրապարակված է, այնուամենայնիվ, Ձեր վճռաբեկ բողոքը կվերադարձվի, եթե Դուք այն չկցեք բողոքին:

Հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁸-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, նոր կամ նոր երևան եկած հանգամանքով բերված Ձեր բողոքի (ինչպես վերաքննիչ, այնպես էլ վճռաբեկ) եզրափակիչ մասում ցանկալի է նախ նշել նոր հանգամանքներով xxx դրական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին խնդրանք: Նոր կամ նոր հանգամանքներով վարույթ հարուցելը մերժվում է, եթե բողոքը ներկայացված է ժամկետի խախտմամբ, առերևույթ բացակայում է նոր կամ նոր երևան եկած հանգամանքը, նոր հանգամանքը հաստատող ապացույց չի ներկայացվել և դատարանին հայտնի չէ նման հանգամանք կամ բողոքը ներկայացվել (ստորագրվել) է ոչ պատշաճ անձի կողմից կամ եթե այն ընդհանրապես ստորագրված չէ:

Եթե նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով վարույթը հարուցվել է, ապա բողոքի վերաբերյալ որոշումը կայացվում է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով: Այսինքն՝ Ձեր բողոքի եզրափակիչ մասի երկրորդ պահանջը պետք է ներկայացված լինի ընդհանուր կարգով (տես՝ վերևում), հաշվի առնելով այն դատարանի լիազորությունները, որին ներկայացված է

բողոքը: Օրինակ՝ բեկանել ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կողմից xxx թվականին yyy գործով կայացված որոշում՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի zzz դատավճռին:
Նոր հանգամանքներով (Եվրոպական դատարանի վճռի դեպքում) դատական ակտերի վերանայումը մտնում է Եվրոպական Դատարանի վճիռների կատարման հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների մեջ, ելնելով այն սկզբունքից, որ՝ Եվրոպական Դատարանի կողմից մարդու իրավունքների խախտում ճանաչվելու դեպքում այդ խախտման մեջ մեղավոր պետությունը պարտավոր է ապահովել, որքանով որ դա հնարավոր է, մինչև խախտումը եղած վիճակի վերականգնումը (*restitutio in integrum*):

Խնդիր. ներկայացվում է կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասը: Առաջարկվում է այս որոշման դեմ կազմել վճռաբեկ բողոք.

«17. Մեղադրյալ XX-ին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը քննության առնելու մասին նյութերից երևում է, որ նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով և 38-314-րդ հոդվածի 1-ին մասով և որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ քննիչի միջնորդությունը բավարարվել է՝ մեղադրյալի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 /երկու/ ամիս ժամանակով՝ մինչև 2013 թվականի հոկտեմբերի 3-ը:

Պաշտպանի միջնորդությունը՝ կալանավորումը գրավով փոխարինելու մասին, մերժվել է:

Առաջին ատյանի դատարանը քննիչի միջնորդությունը բավարարել է, բերելով հետևյալ պատճառաբանությունը՝ « (...) XX-ի 2013 թվականի մայիսի 21-ի ցուցմունքում և YY-ի ու մեղադրյալ XX-ի 2013 թվականի հունիսի 3-ի առերես հարցաքննության արձանագրությունում, առկա է մեղադրյալ XX-ի կողմից նրան վերագրվող արարքը կատարելու հիմնավոր կասկած, իսկ նրան վերագրվող արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը բավարար հինք են տալիս գալու հետևության, որ ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալ XX-ի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու միջոցով վարույթն իրականացնող մարմնի աշխատանքները խոչընդոտելու հավանականությունը բարձր է, իսկ գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն, ինչի մասին են վկայում քննիչի կողմից ներկայացված փաստաթղթերը:

Ինչ վերաբերվում է գրավ կիրառելու մասին պաշտպանների միջնորդությանը, ապա Դատարանը գտնում է, որ այն ենթական է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԳ/0022/06/08 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ անձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության հիմնավորումը կարող է դրվել գրավի կիրառումը մերժելու պատճառաբանության հիմքում՝ պայմանով,

որ այդ պատճառաբանությունը հիմնված լինի գործով առկա փաստական տվյալների վրա: Դատարանը, հաշվի առնելով մեղադրյալ XX-ին կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը հիմնավորող վերոգրյալ հանգամանքները, գտնում է, որ նրա պատշաճ վարքագիծը հնարավոր չէ ապահովել կալանավորման այլընտրանքային խստիանման միջոցի՝ գրավի կիրառմամբ:»:

18. Ինչ վերաբերում է բողոքի հիմնավորումներին՝ այն մասին, որ Առաջին ատյանի դատարանի որոշումն անհիմն է, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նման պատճառաբանությունները հիմնագործի են: Այսպես. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի իրավադրույթների համաձայն՝ մինչև դատաքննությունն անձին ազատությունից զրկումը չպետք է գերազանցի ողջամիտ ժամկետները, իսկ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի՝ «Քրեական գործով մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը, հաշվի առնելով գործի առանձնակի բարդությունը, դատարանի կողմից կարող է երկարացվել մինչև վեց ամիս...»:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի նյութերով առկա է հանցանքը կատարած լինելու հիմնավոր կասկածը՝ մեղադրյալի առնչությունը վերագրվող ենթադրյալ հանցագործությանը: Առաջին ատյանի դատարանը բավարար հիմնավորմամբ մատնանշել է այն փաստական հանգամանքները, որոնք հիմք են տվել հիմնավորված համարելու մեղադրյալին առաջադրված մեղադրանքում հիմնավորված կասկածը: Մեղսագրվող արարքին առնչություն ունենալը՝ հիմնավոր կասկածը, Առաջին ատյանի դատարանը հիմնավորված է համարել XX-ի 2013 թվականի մայիսի 21-ի և YY-ի ու XX-ի 2013 թվականի հունիսի 3-ի առերես հարցաքննությունների արձանագրություններով:

Այս առումով ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ-1/0062/06/12 գործով որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

« (...) մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, թեև չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ դրանք էական նշանակություն ունեն խստիանման միջոցի տեսակն ընտրելիս, ինչպես նաև գրավի թույլատրելիության հարցը լուծելիս: Մեղսագրվող հանցանքի ծանրությունը և, հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր և գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նույնանման իրավական դիրքորոշում բազմիցս իր նախադեպային նշանակության վճիռներում հայտնել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ի թիվս այլոց տես Mamedova v. Russia, 2006 թվականի հունիսի 1-ի վճիռը, գանգատ թիվ 7064/05, կետ 74, Panchenko v. Russia 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 45100/98, կետ 102, Ilijkov v. Bulgaria, 2001 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 33977/96, կետ 81):

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչև մեկ տարի ժամկետով ազատագրվում նախատեսող և ավելի բարձր հանրային վտանգավորությամբ օժտված, այդ թվում՝ առանձնապես ծանր հանցագործությունների համար մեղադրվող անձանց ազատությունից զրկելու իրավական հիմքերի առկայությունը փաստելու համար չեն կարող սահմանվել նույնանման չափորոշիչներ: (...):»:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ XX-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով և 38-314-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունը դասվում է ծանր հանցանքների շարքին: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ մեղադրյալ XX-ին վերագրվող հանցավոր արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը սույն քրեական գործի շրջանակներում ունեն էական նշանակություն նրա հետագա վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է նաև, որ քննիչի միջնորդությունը բավարարելիս Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել մեղադրյալին մեղսագրված արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, մեղադրյալին կալանքի տակ պահելու հիմքերն ու պայմանները չեն վերացել, և, մեղադրյալի ազատության մեջ մնալու դեպքում, վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու միջոցով վարույթն իրականացնող մարմնի աշխատանքները խոչընդոտելու հավանականությունը բարձր է, և որ գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն:

Ինչպես երևում է ներկայացված նյութերից, գործով նշանակվել է տնտեսագիտական փորձաքննություն, կայացված որոշումներով պահանջվել են հեռախոսային վերծանումներ, որոնցով հնարավոր կլինի պարզել գործով անցնող մեղադրյալների հնարավոր այլ հանցակիցներին և առընչակիցներին, դեպքի հետ կապված հնարավոր այլ հանցավոր գործարքների կատարման հանգամանքները, սակայն դրանց պատասխանները դեռևս նախաքննական մարմինը չի ստացել:

Այս կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 2008 թվականի հոկտեմբերի 31 ԱՎԳ/0022/06/08 գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«(...) Մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) շարունակվում են առկա լինել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերն ու պայմանները կամ ի հայտ են եկել անձին կալանքի տակ պահելու նոր հիմքեր:

բ) գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն ապահովելու գործի քննության ընթացքը»:

Ներկայացված նյութերից երևում է, որ վերը նշված երկու պայմաններն էլ սույն գործով առկա են, ուստի Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացնելով, կայացրել է հիմնավորված և պատճառաբանված որոշում, որով ապահովվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ քրեական գործով վարույթի ընթացքում մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը կանխելը՝ գործով ճշմարտությունը բացահայտելու ընթացքին միջամտելու վտանգը: Նման պայմաններում սահմանված մյուս խափանման միջոցներով հնարավոր չէ ապահովել օրենսդրության

նշված պահանջը, չեն խախտվել ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթները:

20. Ինչ վերաբերում վերաքննիչ բողոքի՝ XX-ի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու խնդրանքին, սպա Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը՝ մեղադրյալին կալանավորելու մասին»: Նույն օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայտնի չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասը նույնպես չի արգելում որոշ պայմանների առկայության դեպքում մեղադրյալին գրավով կալանքից ազատելը ճանաչել անթույլատրելի, մասնավորապես, երբ առկա է անձի կողմից թաքնվելու կամ գործով ճշմարտությունը բացահայտելու ընթացքին միջամտելու վտանգ, և այդ առումով Եվրոպական կոնվենցիային չի հակասում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի այն դրույթը, որ դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը առանձին դեպքերում ճանաչել անթույլատրելի: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն օգտագործել է «մասնավորապես» բառը, որն արտահայտում է կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումների հատուկ ամրագրման և ոչ թե կալանքով գրավից ազատելու իրավական հիմքերի սպառնիչ թվարկման նշանակություն:

Այս հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իր 2010թ. մարտի 26-ի ԵԿԴ/0633/06/09 Ադասի Ալբերտի Հովսեփյանի վերաբերյալ որոշմամբ իրավական դիրքորոշումն է արտահայտել այն մասին, որ Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի վերաբերյալ արված իրավական մեկնաբանություններում չի սահմանվում, որ դատարանը պարտավոր է յուրաքանչյուր կալանավորվածի տրամադրել որոշակի երաշխիքներով ազատ արձակվելու հնարավորություն. դատարանը միայն պարտավոր է քննարկել և լուծել այն հարցը, թե արդյոք հնարավոր է անձին ազատ արձակել այդ թվում՝ որոշակի այլընտրանքային երաշխիք ստանալով: Ուստի Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա անձին երաշխիքով ազատ արձակելն առանձին դեպքերում կարող է ճանաչվել անթույլատրելի, երբ կոնկրետ փաստերով հիմնավորվում է, որ այլընտրանքային երաշխիքն ի գործու չէ կանխել անձի ոչ իրավաչափ վարքագիծը նրան ազատ արձակելու դեպքում (տես, օրինակ՝ Ալեքսանդր Մակարովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռի (Aleksandr Makarov v. Russia, 2009թ. մարտի 12, գանգատ թիվ 15247/07) 138-139 կետերը Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի գործով վճռի (Mamedova v. Russia, 20062. հունիսի 1, գանգատ թիվ 7064/05) 75-77

կետերը, Սուալաոջան ընդդեմ Էստոնիայի գործով վճռի (Sulaoja v. Estonia, 2005թ. փետրվարի 15, գանգատ թիվ 55939/00) 64 կետ):

Տվյալ դեպքում գրավը չի կարող երաշխիք հանդիսանալ մեղադրյալ XX-ին ազատ արձակելու համար: Վերաքննիչ դատարանը XX-ի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը գրավով փոխարինելն այս փուլում համարում է անթույլատրելի նրան կալանքի տակ պահելու անհրաժեշտության` վերոշարադրյալ հիմնավորմամբ:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Երևան Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի` մեղադրյալ XX-ին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու և կալանավորումը գրավով փոխարինելու պաշտպանի միջնորդությունը մերժելու մասին 2013թ. հուլիսի 29-ի որոշումն օրինական է ու հիմնավորված, այն բխում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի, ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթների և հոդվածների պահանջներից: Ուստի, պաշտպանի վերաքննիչ բողոքը պետք է մերժել, իսկ Առաջին ատյանի դատարանին 2013 թվականի հուլիսի 29-ի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոկոնվենցիայի 5-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-394-րդ, 402-րդ, 412-րդ հոդվածներով` Վերաքննիչ քրեական դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի` XX-ին «կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը քննելու վերաբերյալ» 2013թ. հուլիսի 29-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Մեղադրյալ` XX-ի շահերի պաշտպանի վերաքննիչ բողոքը մերժել:

3. Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան այն ստանալուց հետո` 15-օրյա ժամկետում:»:

7. Քրեական դատավարության ընթացքում խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանության մյուս մեխանիզմները.

Մաս 1. Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների մասին

I. Մարդու խախտված իրավունքները վերականգնելիս սահմանադրական դատավարության արդյունավետությունը:

Որքանով է ՀՀ սահմանադրական դատարանը արդյունավետ, որպես մեր վստահորդների խախտված իրավունքների պաշտպանության միջոց, պե՞տք է արդյոք յուրաքանչյուր գործին ծանոթանալիս վերլուծել նաև Սահմանադրական դատարանի դիմելու հնարավորությունը և հիմքերը, որքանով հաճախ են առկա լինում այդ ատյանին դիմելու հիմքերը: Արդյո՞ք չենք թերագնահատում այդ ատյանի արդյունավետությունը: Չե՞ որ հասարակության վերաբերմունքը իրավունքի պաշտպանության ներպետական կամ միջազգային այս կամ այն մեխանիզմի հանդեպ զգալի չափով ձևավորվում է նաև փաստաբանների խորհրդատվությունների ազդեցության տակ:

Հեղինակների համոզմամբ, ցանկացած գործ (լինի այն քրեական, քաղաքացիական թե վարչական) վերլուծելիս, պարտադիր պետք է վերլուծվի այդ գործի նկատմամբ կիրառված կամ կիրառման ենթակա օրենքների սահմանադրականության հարցը: Առաջին հայացքից կարող է թվալ, որ հազվադեպ են պատահում օրենքներ, որոնք հակասեն Սահմանադրությանը: Սակայն դա՝ առաջին հայացքից, իսկ իրականում, հատկապես հաշվի առնելով ներկայիս օրենսդրության ձևավորման նկատմամբ օրենսդրի և օրենսդրական մախաճեռնությամբ օժտված սուբյեկտների տարերային մոտեցումները ու [երբեմն] ոչ բավարար կոմպետենտությունը, կարելի է արձանագրել, որ նման օրենքների տեսակարար կշիռը բավականին մեծ է:

Պատասխանելով այն հարցին, թե որքանով է արդյունավետ այդ ատյանի դիմում ներկայացնելը՝ որպես անձի խախտված իրավունքների պաշտպանության միջոց, պետք է արձանագրենք, որ երբեմն հանդիպում ենք դեպքերի, երբ դա ոչ միայն արդյունավետ, այլ նույնիսկ՝ միակ միջոցն է լինում: Որպես օրինակ կարելի է բերել ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի (Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը) հատկանիշներով հարուցված քրեական գործերը, որոնցով որպես մեղադրյալներ էին ներգրավված չորս փաստաբաններ: Նշված փաստաբաններին մեղսագրվող գործողություններն ուղղակի համապատասխանում էին նշված հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիային, ու նրանք չէին էլ ժխտում, որ՝ հանդես գալով որպես պաշտպան, կատարել են մեղսագրվող գործողությունները: Մեղադրանքից պաշտպանվելու միակ հնարավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության վիճարկումն էր, որը և հաջողությամբ իրականացվեց: ՀՀ սահմանադրական դատարանի 14.01.2010 թվականի ՍԳ-Ռ-851 որոշմամբ նշված նորմը՝ այնքանով, որքանով կիրառելի չէ նաև դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, ճանաչվեց ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր²⁴:

Սույն գլխի նպատակներից է՝ օգնել ընթերցողներին, ովքեր դեռևս չունեն Սահմանադրական դատարանի դիմելու բավարար փորձ՝ ճիշտ գնահատել այդ դատարանի դիմում ներկայացնելու հնարավորությունն ու հեռանկարները, պահպանել օրենքով սահմանված ընդունելիության չափանիշները, ճիշտ կազմել դիմումները, իսկ ՍԳ-ում հաջողության հասնելուց հետո՝ հասնել վստահորդի գործի վերանայմանը և

²⁴ Տվյալ դեպքում՝ փաստաբանների միջնորդությամբ Սահմանադրական դատարան էր դիմել Մարդու իրավունքների պաշտպանը: Փաստաբաններն անձամբ չէին կարող դիմել, քանի որ դեռևս չէին սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները (իրենց վերաբերյալ քրեական գործը գտնվում էր առաջին ատյանի դատարանի վարույթում):

նրա խախտված իրավունքի վերականգնմանը: Այստեղ խոսք է գնալու միայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դիմումների մասին:

II. Դիմումների ընդունելիության չափանիշները:

Սահմանադրական դատարան դիմելու՝ մեր վստահորդների իրավունքը բխում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետից, ըստ որի՝ Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող է դիմել՝

«(...)

6) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը.»::

Սահմանադրական այս նորմն, ըստ էության, թելադրում է Սահմանադրական դատարան տրվող դիմումի ընդունելիության չափանիշները:

Անհատական դիմումների ընդունելիության լրացուցիչ չափանիշներ են սահմանված նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով, որում՝ որպես գործի քննությունը մերժելու հիմք, նշված են այն դեպքերը, երբ անհատական դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի որոշումը կամ՝ երբ դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում իրականացվում է գործի դատաքննություն:

Բացի այդ, նույն օրենքի 69-րդ հոդվածի (որը վերաբերում է անհատական դիմումների քննությանը) 4-րդ մասում՝ որպես անհատական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր չափանիշ, սահմանվում է, որ դիմումը պետք է պարունակի օրենքի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ:

Նույն հոդվածի 5-րդ մասով սահմանվում է ընդունելիության ևս մեկ չափանիշ՝

«Սույն հոդվածում նշված գործերով դիմումները կարող են սահմանադրական դատարան ներկայացվել ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից իր հանդեպ կիրառված դատական ակտի վիճարկման հնարավորությունները սպառելու պահից **ոչ ուշ, քան վեց ամիս հետո.:**»:

Ընդունելիության վերը նշված չափանիշներից որևէ մեկին չբավարարող դիմումի դեպքում գործի քննությունը մերժվում է: Բացի վերը նշված դեպքերի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան, անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական **դիմումն ակնհայտ անհիմն է:**

Այսպիսով, ամփոփենք վերը նշված նորմերով ամրագրված՝ անհատական դիմումների ընդունելիության չափանիշները՝

1. Անհատական դիմումով կարող է վիճարկվել **միայն օրենքի** (ոչ դատական ակտի և ոչ էլ որևէ այլ իրավական ակտի) սահմանադրականությունը.

2. Դիմումը պետք է լինի կոնկրետ գործով, այսինքն՝ անձը չի կարող վիճարկել որևէ օրենքի սահմանադրականությունը, եթե այդ օրենքը չի կիրառվել **կոնկրետ գործով**.
3. Վիճարկվող օրենքը պետք է **կիրառված լինի իր (դիմողի) նկատմամբ**.
4. Պետք է առկա լինի դատարանի **վերջնական ակտ**.
5. Պետք է **սպառված լինեն** դատական պաշտպանության բոլոր միջոցները.
6. Դիմումը պետք է ներկայացվի դիմողի կողմից իր հանդեպ կիրառված դատական ակտի վիճարկման հնարավորությունները սպառելու պահից **ոչ ուշ, քան վեց ամիս հետո**.
7. Դիմումը պետք է պարունակի օրենքի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ.
8. Դիմումը պետք է **չլինի ակնհայտ անհիմն**.
9. Դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ **չպետք է** առկա լինի սահմանադրական դատարանի որոշում.
10. Դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում **չպետք է** իրականացվի գործի դատաքննություն:

Նախավերջին չափանիշի հետ կապված անհրաժեշտ է անել մի վերապահում՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 14-րդ մասին համապատասխան՝ նույն հոդվածի 1-ին մասում նշված որևէ գործով ընդունված ըստ էության որոշումից առնվազն **7 տարի հետո** ներկայացված դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը կարող է վերանայել իր որոշումը, եթե՝

«1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը.

2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել սահմանադրական դատարանի այլ որոշում, և եթե տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն:»:

(նշվածը չի վերաբերվում այն օրենքներին (դրանց առանձին դրույթներին), որոնք Սահմանադրական դատարանի որոշմամբ ճանաչվել են Սահմանադրությանը հակասող և անվավեր)

Ինչպես հայտնի է, օրենքների սահմանադրականության վերաբերյալ գործերի քանակը կտրուկ աճել է 2006 թվականից, երբ Սահմանադրական դատարանը սկսեց քննել նաև անհատական դիմումներ: Հետևապես, կարելի էր սպասել, որ սկսած 2013 թվականից կնկատվի այնպիսի դիմումների հոսք, որոնցով կրկին կվիճարկվեին օրենքներ, որոնք նախկինում Սահմանադրական դատարանի կողմից ճանաչված են եղել Սահմանադրությանը համապատասխանող:

Ընթերցողը, հավանաբար, ուշադրություն դարձրեց, որ վերևում մեր կողմից վկայակոչվել է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածը, որը վերաբերվում է Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ և 8-րդ կետերում նշված մարմինների և անձանց դիմումներին (իրավական ակտերի սահմանադրականության վերացական վերահսկողությանը):

Պատճառն այն է, որ նույն օրենքի 69-րդ հոդվածի (որը վերաբերվում է անհատական դիմումներին) 11-րդ մասով սահմանված է, որ այդ հոդվածում նշված գործերին առնչվող բոլոր այլ հանգամանքների

քննության և այդ գործերով որոշումներ ընդունելու ժամանակ կիրառվում են 68-րդ հոդվածի 6-17-րդ մասերի կանոնները:

Նշենք, որ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համապատասխան, դիմող կարող է լինել **յուրաքանչյուր ոք**: Եթե համադրել այս դրույթը Սահմանադրության 42.1 հոդվածի բովանդակության հետ, ապա պարզ է դառնում, որ Սահմանադրական դատարան կարող են դիմել ոչ միայն ֆիզիկական անձինք: Այդ հանգամանքն իր արտացոլումն է գտել նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածում, որտեղ ուղղակի նշված է իրավաբանական անձանց՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը:

Այսպիսով, գործը սահմանադրական դատարան ներկայացնելու համար նախապատրաստելիս, դեռևս ամենավաղ փուլերից ցանկալի է հատուկ ուշադրություն դարձնել ընդունելիության չափանիշների ապահովմանը, իսկ դիմումում հնարավորինս մանրամասնորեն հիմնավորել այդ չափանիշները պահպանված լինելու հանգամանքները: 2006 թվականից մինչև օրս քննության ընդունված անհատական դիմումները կազմում են ներկայացված անհատական դիմումների ընդհանուր քանակի չնչին մասը միայն (օրինակ՝ կարելի է հիշատակել, որ 2013 թվականի սկզբից մինչև փետրվարի 5-ը ներկայացված թվով 9 անհատական դիմումներից ոչ մեկը չի ընդունվել քննության):

Կարևոր է հաշվի առնել, որ Սահմանադրական դատարանը կարող է ոչ միայն որոշել գոյություն ունեցող որևէ օրենքի սահմանադրության հարց, այլ նաև որոշել, որ օրենքի մեջ որևէ դրույթի **բացակայությունը** հակասում է սահմանադրությանը (տես, օրինակ՝ 09.04.2007 թվականի ՍԳ-Ո-690 որոշման 3-րդ կետի «բ» ենթակետ): Այս առումով, սակայն Սահմանադրական դատարանն ունի մի շարք վերապահումներ.

«... անհրաժեշտ է նշել, որ օրենսդրական բացը՝ որպես իրավունքի բացի տարատեսակ, իրավական կարգավորման ոլորտում գտնվող փաստական հանգամանքների նկատմամբ կոնկրետ նորմատիվ պատվիրանի բացակայությունն է: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՍԳ-Ո-864 որոշման մեջ, անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը **խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք**: Չարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը

2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴ-Ո-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ **առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ** կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

Փաստորեն, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, երբ կոնկրետ գործով միաժամանակ առկա են օրենսդրական բացի՝ սահմանադրական դատարանի կողմից մատնանշված վերոնշյալ չափանիշները, այն է՝ կոնկրետ սահմանադրական իրավունքի խախտում կամ այդ խախտման պոտենցիալ հնարավորություն և օրենսդրության մեջ այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքների բացակայություն կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված հակասական իրավակիրառական պրակտիկա:»:

Եթե պահպանված են ընդունելիության՝ վերը նշված չափանիշները, ապա անհատական դիմումի հիման վրա գործն ընդունվում է քննության Սահմանադրական դատարանի երեք²⁵ անդամի կազմով ընդունված որոշմամբ: Եթե չափանիշներից մեկը կամ մի քանիսը պահպանված չեն՝ գործի քննության ընդունումը մերժվում է, որի մասին կայացված որոշումը բողոքարկման ենթակա չէ:

Պետք է նշել, որ անընդունելիության հիմքերը կարող են ի հայտ գալ կամ հիմնավորվել գործի քննության ընթացքում: Նման դեպքում Սահմանադրական դատարանը գործի քննության ցանկացած փուլում իր որոշմամբ կարճում է գործի վարույթը: Գործի վարույթը կարճվում է նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

Գործի վարույթը **կարող է** կարճվել նաև, եթե գործը քննության ընդունվելուց հետո դիմողը գրավոր ցանկություն է հայտնել հետ վերցնելու իր դիմումը: Սակայն՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, այդ փուլում դիմումը հետ վերցնելու՝ դիմողի կամաարտահայտությունը պարտադիր չէ Սահմանադրական դատարանի համար՝ վերջինս կարող է մերժել դիմողին, եթե գտնի, որ դիմումի առարկայի վերաբերյալ գործի քննությունը բխում է հանրության կամ պետության շահերից, բացառությամբ նույն օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ դիմումից հրաժարվելը հանգեցնում է գործի քննության կարճման:

III. Դիմումի ձևին և բովանդակությանը օրենքով առաջադրված պահանջները:

²⁵ Բացառությամբ եթե վիճարկվում է օրենք, որի վերաբերյալ արդեն իսկ կայացված է եղել որոշում, որից անցել է ավելի քան 7 տարի, որի դեպքում որոշումը ընդունվում է Սահմանադրական դատարանը՝ դատարանի անդամների 7 ձայնով:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով սահմանվում է դիմումի ձևը: Մեկնաբանության փոխարեն բերենք այդ հոդվածն ամբողջությամբ.

«1. **Դիմումը սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ իրավասու անձի (անձանց) կողմից ստորագրված:**

2. **Դիմումում պետք է նշվեն՝**

1) սահմանադրական դատարանի անվանումը.

2) դիմողի անունը (անվանումը), հասցեն (իրավաբանական հասցեն).

3) դիմողի ներկայացուցչի մասին անհրաժեշտ տվյալներ, եթե կան այդպիսիք.

4) Սահմանադրության այն հոդվածը, որը սահմանադրական դատարան դիմելու իրավունք է տալիս.

5) սահմանադրական դատարան ներկայացվող խնդրանքը և դիմողի փաստարկները՝ Սահմանադրության համապատասխան նորմերին կատարված հղումներով.

6) դիմումին կցվող նյութերի ցանկը, եթե կան այդպիսիք:

3. Սույն օրենքի 69-րդ հոդվածում նշված գործերով դիմողը պարտավոր է սահմանադրական դատարան ներկայացնել նաև սույն օրենքով սահմանված չափով պետական տուրք վճարելու վերաբերյալ անդորրագիրը կամ միջնորդություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու մասին: Պետական տուրքը ֆիզիկական անձանց սահմանադրական դատարան դիմելու համար սահմանվում է բազային պետական տուրքի հնգապատիկի չափով, իսկ իրավաբանական անձանց համար՝ քսանապատիկի չափով:

Դիմողի միջնորդության հիման վրա նրան պետական տուրքի վճարումից ազատելու հարցը սահմանադրական դատարանը լուծում է անհատական դիմումը քննության ընդունելու հարցը լուծելու հետ միաժամանակ՝ "Պետական տուրքի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Նույն օրենքի 28-րդ հոդվածով սահմանվում է, թե ինչ նյութեր պետք է կցվեն դիմումին.

«1. Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումին կցվում են՝

1) լիազորագիրը կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող այլ փաստաթուղթ.

2) օտար լեզվով շարադրված բոլոր փաստաթղթերի՝ օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանությունը.

3) վիճարկվող ակտի պաշտոնական տեքստը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված հարցերով դիմելու դեպքերում.

4) դիմողի հայեցողությամբ՝ այլ նյութեր:

2. Դիմումն ընդունվելուց հետո դիմող կողմը նոր նյութեր կարող է ներկայացնել միայն սահմանադրական դատարանի որոշմամբ²⁶»:

Եթե դիմումն ըստ ձևի չի համապատասխանում «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 27-րդ և 28-րդ հոդվածների պահանջներին, ապա դիմողը եռօրյա ժամկետում սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվում է այդ մասին և երկօրյա ժամկետում հիշյալ պահանջներին համապատասխանեցվելու դեպքում դիմումին ընթացք է տրվում: Նշված ժամկետում դիմումը օրենքի 27-րդ և 28-րդ հոդվածների պահանջներին չհամապատասխանեցնելու դեպքում այն վերադարձվում է դիմողին (չշփոթել քննությունը մերժելու հետ):

Դիմումը Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից վերադարձվում է նաև այն դեպքերում, եթե դրանում բարձրացված հարցն ակնհայտորեն ենթակա չէ Սահմանադրական դատարանին, կամ այն ներկայացրել է Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք չունեցող անձը (անձինք):

Դիմումը վերադարձնելը կարող է եռօրյա ժամկետում բողոքարկվել Սահմանադրական դատարանի նախագահին, որն այդ հարցով ոչ ուշ, քան բողոքը ներկայացնելուց մեկ օր հետո ընդունում է վերջնական որոշում:

Բացի այդ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը հատուկ պահանջներ է ներկայացնում նաև անհատական դիմումի **բովանդակությանը**: Այսպես, նշված օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, անհատական դիմումը պետք է (1) հղումներ պարունակի օրենքի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և (2) Սահմանադրության այն դրույթներին, որոնց, դիմողի գնահատմամբ, հակասում են տվյալ օրենքի դրույթները, ինչպես նաև պետք է պարունակի (3) Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ:

Թեև այս պահանջը վերաբերվում է դիմումի բովանդակությանը, այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանն օրենքի այս պահանջը դիտարկում է որպես դիմումի ընդունելիության չափանիշ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ գործը քննության ընդունելուց հետո Սահմանադրական դատարանը՝ դիմողի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, մինչև գործի դատաքննության ավարտը կարող է կասեցնել այն իրավական ակտի գործողությունը, որի սահմանադրականությունը վիճարկվում է, եթե կասեցման մասին որոշում չընդունելը կարող է հանգեցնել անդառնալի կամ ծանր հետևանքների դիմող կողմի կամ հանրության համար: Նման միջնորդությունը կարող էք կցել դիմումին, կամ դրա բովանդակությունը ներառել դիմումի մեջ: Վերջին դեպքում այն ցանկալի է գրել հիմնական խնդրանքից հետո:

²⁶ Այստեղ շատ կարևոր է ուշադրություն դարձնել հոդվածի 2-րդ մասին, որն անուշադրության մատնելու դեպքում կարող ենք գործը տանուլ տալ՝ զուտ տեխնիկական պատճառներով:

Կարևոր է հստակ իմանալ, թե ինչ խնդրանք(ներ) կարող է պարունակել անհատական դիմումը: Այս հարցում կողմնորոշվելու համար կարող ենք անդրադառնալ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 8-րդ մասին, որից հետևում է, որ անհատական դիմումների վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.

1) վիճարկվող օրենքը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.

1.1) վիճարկվող օրենքը կամ դրա վիճարկվող դրույթը՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.

2) վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին:

Համապատասխանաբար, դիմումի մեջ մեր վստահորդի խնդրանքը շարադրելիս, մենք պետք է ձգտենք դուրս չգալ այն սահմանումներից, որոնք տրված են օրենքում՝ չպետք է խնդրենք ընդունել այնպիսի մի որոշում, որը դուրս կլինի Սահմանադրական դատարանի լիազորությունների սահմաններից: Ավելի հստակ լինելու համար ասենք, որ մենք չպետք է Սահմանադրական դատարանից խնդրենք մի բան, որը նա օրենքով լիազորված չէ կատարել: Այսինքն՝ մեր խնդրանքի սահմանները պետք է համապատասխանեն Սահմանադրական դատարանի լիազորությունների սահմաններին:

Ճիշտ է, Սահմանադրական դատարանը որոշակի ճկունություն է ցուցաբերում՝ իր լիազորությունները կիրառելիս, ինչը երբեմն նաև հնարավորություն է տալիս մեզ ներկայացնելու խնդրանքներ, որոնք առաջին հայացքից որոշ չափով դուրս են վերը նշված նորմի շրջանակներից²⁷: Սակայն յուրաքանչյուր դեպքում, երբ ցանկանում ենք ներկայացնել այնպիսի խնդրանք, որն տառացիորեն չի համընկնում 68-րդ հոդվածի 8-րդ մասի 1.1 և 2 կետերի բովանդակությանը, անպայման պետք է նախապես հավաստիանալ, թե արդյո՞ք Սահմանադրական դատարանը ունի այդպիսի եզրափակիչ մաս պարունակող որոշումներ:

IV. Ինչի վրա ուշադրություն դարձնել՝ Սահմանադրական դատարանի դիմելու հիմքերը վերլուծելիս, Գիմում գրելու հետ կապված որոշ խորհուրդներ

Ինչպես արդեն ասվեց, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասում՝ որպես անհատական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր չափանիշ, սահմանվում է, որ դիմումը պետք է պարունակի օրենքի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այդ դրույթը կենտրոնական տեղ է զբաղեցնում դիմումի կազմման վրա աշխատող ցանկացած անձի համար՝ ոչ միայն այն պատճառով, որ նման հիմնավորումների բացակայությունը Սահմանադրական

²⁷ Այդ թվացյալ անհամապատասխանությունը վերանում է, եթե ուսումնասիրում ենք Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումները:

դատարանի կողմից դիտվում է որպես գործի քննությունը մերժելու հիմք, այլ նաև այն պատճառով, որ եթե հիմնավորումը ինքն իրենով առկա է, սակայն համոզիչ չէ, ապա դիմումը թեև հավանականություն ունի քննության ընդունվելու, սակայն քիչ հավանական է, որ մենք վերջնականապես կհասնենք այն նպատակին, որի համար դիմել ենք Սահմանադրական դատարան:

Ի՞նչ պետք է հաշվի առնենք՝ հիմնավորումների վրա աշխատելիս: Հեղինակի կարծիքով, նախ և առաջ պետք է ուշադրություն դարձնել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներին, որոնցից հետևում է, որ իրավական ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելիս Սահմանադրական դատարանը հաշվի է առնում՝

- 1) իրավական ակտի պահանջվող տեսակը.
- 2) իրավական ակտն ընդունելու և գործողության մեջ դնելու Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածությունը.
- 3) մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը.
- 4) Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման ապահովվածությունը.
- 5) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները.
- 6) Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը:

Անհատական դիմումների գերակշռող մեծամասնությունը հիմնված է այն պնդման վրա, որ վիճարկվող օրենքը խախտում է դիմողի՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները ու ազատություններ (վերը նշված 3-րդ կետ):

Նման հիմքով Սահմանադրական դատարան ներկայացվելիք դիմումը կազմելիս հեղինակն առաջարկում է հետևյալ մոտեցումը: Նախ՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները ամրագրված են Սահմանադրության 2-րդ գլխում և նախքան մյուս հիմնավորումներին անցնելը, անհրաժեշտ է համոզվել, որ վիճարկվող օրենքը (որն, անշուշտ, կիրառվել է դիմողի նկատմամբ) միջամտում է այդ գլխում նշված որևէ իրավունքի կամ ազատության իրականացմանը: Եթե նման համոզումներն առկա է, ապա ցանկալի է հիմնավորել այդ հանգամանքը: Համոզվելով, որ միջամտությունն առկա է, պետք է կարողանալ ապացուցել, որ միջամտության աստիճանը այնպիսինն է, որ կարող է խոսք գնալ նշված իրավունքի **սահմանափակման** մասին (օրինակ՝ եթե դատավարական օրենքը թույլ չի տալիս առանց նիստը նախագահող դատավորի թույլտվության լքել դատական նիստի դահլիճը, ապա սա կարող է անձի ազատության իրավունքին միջամտություն համարվել, սակայն այդ միջամտության աստիճանը բավարար չի լինի ասելու, որ առկա է Սահմանադրության 16-րդ հոդվածով ամրագրված ազատությունների սահմանափակում):

Համոզվելով, որ վիճարկվող օրենքով սահմանափակվում է որևէ իրավունք կամ ազատություն, վերլուծում ենք, թե Սահմանադրությամբ տվյալ իրավունքը կամ ազատությունը արդյո՞ք կարող է առհասարակ սահմանափակվել, թե դա այսպես կոչվող «բացարձակ» իրավունք կամ ազատություն է, որը որևէ պարագաներում ենթակա չէ սահմանափակման: Օրինակ՝ Սահմանադրության 17-րդ հոդվածում ամրագրված ազատությունը բացարձակ է, այսինքն՝ որևէ հիմնավորմամբ և որևէ իրավական ակտով չի կարող սահմանափակվել:

Այսպիսով, եթե հիմնավորվում է, որ առկա է օրենքի կողմից Սահմանադրական որևիցե բացարձակ իրավունքի կամ ազատության սահմանափակում, ապա սա ինքն իրենով արդեն իսկ բավարար հիմնավորում է Սահմանադրական դատարան դիմելու համար: Սակայն ո՞նց որոշել՝ տվյալ իրավունքը կամ ազատությունը բացարձակ է, թե՞ այն կարող է սահմանափակման ենթարկվել: Այդ հարցին պատասխանելու համար պետք է նայել, թե նույն հոդվածում արդյո՞ք չի նախատեսված սահմանափակման հնարավորությունը: Օրինակ, Սահմանադրության 16-րդ հոդվածը, ամրագրելով յուրաքանչյուրի ազատության և անձեռնմխելիության իրավունքը, դրա հետ միաժամանակ նշում է այդ ազատությունները սահմանափակելու դեպքերը և կարգը: Նույնը՝ Սահմանադրության 23-րդ, 24-րդ և մի շարք այլ հոդվածներ, որոնցում սահմանափակման հնարավորությունը ամրագրված է հենց իրավունքը կամ ազատությունը սահմանող հոդվածի մեջ: Սակայն, եթե իրավունք կամ ազատություն սահմանող որևէ հոդվածի մեջ չի գրված դրա սահմանափակման հնարավորության մասին, դա դեռ չի վկայում այն մասին, որ տվյալ իրավունքը (ազատությունը) բացարձակ են: Սահմանադրության 43-րդ և 44-րդ հոդվածները նախատեսում են մի շարք հոդվածներով ամրագրված իրավունքների ու ազատությունների սահմանափակման հնարավորություն, ինչը նույնպես անհրաժեշտ է հաշվի առնել: Ուշադրություն դարձնենք, որ սահմանափակում նախատեսող յուրաքանչյուր նորմ նախ և առաջ սահմանում է, որ այդ սահմանափակումը պետք է նախատեսված լինի օրենքով, բացի այդ՝ մատնանշում է հանրային կարևորություն ներկայացնող որոշակի արժեքներ (հանրային շահեր), որոնց պաշտպանության համար պետք է նախատեսված լինի սահմանափակումը:

Համոզվելով, որ վիճարկվող օրենքը սահմանափակել է Սահմանադրությամբ ամրագրված որևէ այնպիսի իրավունք (ազատություն), որի սահմանափակման հնարավորությունը ամրագրված է Սահմանադրությամբ, պետք է անդրադառնանք տվյալ օրենքի **որակին**: Ինչպես նշել է Սահմանադրական դատարանը 13.05.2008 թվականի ՄԳ-Ո-753 որոշման մեջ՝

«Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:»:

Այսպիսով, եթե նույնիսկ Սահմանադրությունը թույլ է տալիս տվյալ իրավունքի (ազատության) սահմանափակում և սահմանափակումը նախատեսված է վիճարկվող օրենքով, ապա այդ օրենքը կճանաչվի Սահմանադրությանը հակասող և անվավեր, եթե մենք կարողանանք հիմնավորել, որ այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին: Տվյալ դեպքում օրենքը կճանաչվի Սահմանադրության 1-ին հոդվածին հակասող, միաժամանակ Սահմանադրական դատարանը կհամարի, որ իրավունքի կամ ազատության սահմանափակումը (որը, ինչպես ասվեց, կարող է լինել միայն օրենքի հիման վրա) տեղի չի ունեցել օրենքի հիման վրա, քանի որ սահմանափակող նորմը թեև կոչվել է «օրենք», սակայն այդպիսինը չի հանդիսացել:

Եթե, այնուամենայնիվ, օրենքը, որով սահմանափակվել է իրավունքը (ազատությունը), իրավական է, ապա պետք է քննարկվի մյուս հարցը՝ արդյո՞ք օրենքով նախատեսված սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ: Օրենքը, որով սահմանափակվել է Սահմանադրական որևէ իրավունք կամ ազատություն, պետք է հետապնդի այն նպատակներից որևէ մեկը, որոնք ամրագրված են Սահմանադրության մեջ: Օրինակ, Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված նպատակներից են՝ ժողովրդական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանումը, հանցագործությունների կանխումը, հանրության առողջության և բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանությունը: Եթե դիմումում բավարար համոզիչ կերպով հիմնավորվի, որ իրավունքը (ազատությունը) սահմանափակող օրենքը չի հետապնդում նշված նպատակներից մեկն ու մեկը, ապա՝ ամենայն հավանականությամբ, այն կճանաչվի Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Վերջապես, եթե միջամտող (սահմանափակող) օրենքը համապատասխանում է նաև այս չափանիշին, ապա քննարկման է ենթակա համաչափության հարցը՝ արդյո՞ք օրենքով նախատեսված սահմանափակումը համաչափ է հետապնդվող նպատակին: Մասնավորապես, արդյո՞ք հնարավոր չէ նույն նպատակին հասնել ավելի քիչ սահմանափակման միջոցով: Եթե կարող ենք ապացուցել, որ օրենքը ոչ համաչափ միջամտություն է նախատեսում, ապա սա ևս մեկ հիմք է՝ օրենքը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու համար:

Այսպիսով, ամփոփելով վերը ներկայացվածը, ամրագրենք այն «թեստը», որի միջով պետք է անցկացնենք օրենքը՝ դրա հակասահմանադրականությունը որոշելու համար.

- 1) սահմանափակում է արդյոք վիճարկվող օրենքը Սահմանադրությամբ ամրագրված որևէ իրավունք կամ ազատություն, եթե այո՝ արդյո՞ք Սահմանադրությունը թույլ է տալիս տվյալ իրավունքի (ազատության) սահմանափակում, թե դա բացարձակ իրավունք (ազատություն) է.
- 2) իրավակա՞ն է արդյոք քննարկվող օրենքը.
- 3) արդյո՞ք օրենքով նախատեսված սահմանափակումը իրավաչափ նպատակ է հետապնդում.
- 4) համաչափ է արդյոք օրենքով սահմանված սահմանափակումը հետապնդվող նպատակին:

V. Սահմանադրական դատարանում դատաքննության որոշ առանձնահատկությունների մասին

Սահմանադրական դատարանում դատաքննությունը կարող է ընթանալ ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ընթացակարգով: Ըստ մեր դիտարկումների, անհատական դիմումների հիման վրա գործի քննությունը մեծամասամբ տարվում է գրավոր ընթացակարգով: Այնուամենայնիվ, կողմերը հրավիրվում են դատական նիստին և օգտվում են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածով նախատեսված իրավունքներից:

Օրենքի 44-րդ հոդվածին համապատասխան, սահմանադրական դատավարության կողմերն են դիմողը և պատասխանողը: Եթե դիմողը սահմանադրական դատարան ներկայացված դիմումում չի նշել պատասխանող կողմին կամ նշել է ոչ պատշաճ կողմի, ապա Սահմանադրական դատարանը՝ գործը քննության ընդունելու մասին որոշմամբ դատավարությանը որպես կողմ ներգրավում է պատասխանողին կամ պատշաճ պատասխանողին: Օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, անհատական դիմումների վերաբերյալ գործերով որպես պատասխանող է ներգրավվում Ազգային ժողովը, իսկ հանրաքվեով ընդունված օրենքների դրույթների վիճարկման վերաբերյալ գործերով կարող է ներգրավվել նաև Կառավարությունը՝ որպես հարակից պատասխանող, եթե նա է ներկայացրել տվյալ օրենքը հանրաքվեի դնելու առաջարկը:

Կողմերն իրավունք ունեն՝ ծանոթանալու գործի նյութերին, անելու քաղվածքներ, ներկայացնելու գործի լուծման համար նշանակություն ունեցող նյութեր, գործի առնչությամբ ներկայացնելու իրենց դիրքորոշումը, հարցեր տալու մյուս կողմին, նրա ներկայացուցչին, փորձագետին, վկային, միջնորդություններ հարուցելու, առաջարկություններ անելու, ինչպես նաև՝ ունենալու ներկայացուցիչ (ներկայացուցիչներ): Որպես դիմողի²⁸ ներկայացուցիչ կարող են հանդես գալ նրա լիազորված անձինք՝ պաշտոնատար անձը (եթե խոսքը գնում է իրավաբանական անձի մասին) կամ այն փաստաբանը կամ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող կամ սահմանադրական իրավունքի ոլորտում գիտական աստիճան ունեցող անձը, որի լիազորությունները հաստատված են օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, յուրաքանչյուր կողմ սահմանադրական դատարանում կարող է ունենալ ոչ ավելի, քան երեք ներկայացուցիչ:

Ապացույցների սահմանումն ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի (տես՝ հոդված 41, 1-ին մաս) գրեթե չի տարբերվում քրեական, վարչական և քաղաքացիական դատավարական օրենսգրքերում առկա սահմանումներից: Որոշակի տարբերություն կա այն բանում, որ վերը նշված նորմով ապացույց են համարվում ոչ թե վկաների բացատրությունները, փորձագետների եզրակացությունները, փաստաթղթերը և գործի մյուս նյութերը, այլ՝ այդ նյութերի միջոցով ստացված

²⁸ Այդ դեպքում ևս քննարկվում է միայն անհատական դիմումների հիման վրա գործերի քննության ընթացակարգը:

տեղեկությունները: Մյուս տարբերությունը կայանում է նրանում, որ օգտագործվում է ոչ թե «ցուցմունք», այլ «բացատրություն» բառը (կողմի²⁹ և վկայի բացատրություններ):

Դրա հետ մեկտեղ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածը սահմանում է, որ փաստերի վերաբերյալ կողմերի բացատրություններում ներկայացվող տեղեկությունները ապացուցողական նշանակություն չունեն: Իսկ 52-րդ հոդվածը սահմանում է, որ՝ եթե կողմին հայտնի է տվյալ գործով պարզելու ենթակա փաստ, ապա նա կարող է իր նախաձեռնությամբ հանդես գալ որպես վկա: Ի դեպ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ նույն հոդվածը նախատեսում է դեպքեր, երբ Սահմանադրական դատարանի որոշմամբ կողմի վրա կարող է պարտականություն դրվել՝ հանդես գալու որպես վկա: Դա այն դեպքերն են, երբ, չնայած ապացույցներ ձեռք բերելու համար ձեռնարկված միջոցներին, ձեռք բերված ապացույցները բավարար չեն գործով որոշում կայացնելու համար, և կողմին կարող է հայտնի լինել տվյալ գործով պարզելու ենթակա որևէ փաստ:

VI. Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վստահորդների իրավունքների վերականգնման մեխանիզմների մասին:

Խոսելով Սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա վստահորդների խախտված իրավունքների վերականգնման մասին, հարկ է անդրադառնալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի կարգավորումներին:

Նշված հոդվածին համապատասխան՝ նոր հանգամանք է Սահմանադրական դատարանի որոշումը, որով տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր, կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Ո՞ր դատարան դիմել՝ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու համար.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը:

Ի՞նչ ժամկետում կարելի է դիմել՝ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման համար.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու համար բողոքը կարող է ներկայացվել 3 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանք ի հայտ գալու մասին:

²⁹ Ի տարբերություն քաղաքացիական կամ վարչական դատավարական օրենսդրության, որտեղ կողմերի բացատրությունները ապացույց չեն, սակայն ապացույց են նրանց ցուցմունքները:

Ուլքե՞ր կարող են դիմել՝ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման համար.

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասին համապատասխան, դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտել է, որ այդ դրույթը նրա (դիմողի) նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքների ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման: Այս դրույթը (նույն հոդվածի 13-րդ մասի համաձայն) տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք Սահմանադրական դատարանի տվյալ որոշումը հրապարակելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էին նույն հարցով Սահմանադրական դատարանի դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել Սահմանադրական դատարան:

Ինչպես կարելի էր տեսնել, տվյալ օրենքում չի նշված, թե հատկապես ու՞մ դիմումի հիման վրա պետք է վերանայվի դիմողի նկատմամբ կայացված դատական ակտը: Մինչդեռ իմպերատիվ ձևով ասված է, որ այդ դատական ակտը ենթակա է վերանայման: Ներկայումս դատական պրակտիկան զարգացել է այն ուղղությամբ, որ դիմողը (կամ այն անձը, ով պահպանել է նույն հարցով ՄԳ դիմելու իրավունքը) ինքը պետք է դիմի՝ իր նկատմամբ կայացված դատական ակտը նոր հանգամանքների հիմքով վերանայելու համար³⁰:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.31-րդ հոդվածին համապատասխան (որի կանոնները տարածվում են նաև վարչական դատավարության վրա), Սահմանադրական դատարանի որոշումից հետո նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք և նրանց իրավահաջորդները, ինչպես նաև այն անձինք, ովքեր օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա դրությամբ ունեցել են այդ իրավունքը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն կամ նույն օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կամ 5-րդ կետերի ուժով զրկված են եղել Սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից:

Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածից բխում է, որ Սահմանադրական դատարանի որոշման արդյունքում, բացի դիմողներից և ՄԳ դիմելու իրավունքը պահպանած անձանցից (տես՝ նախորդ պարբերությունը), բողոք բերելու իրավունք ունեն նաև նոր հանգամանքի

³⁰ Սակայն չի բացառված, որ ապագայում մոտեցումները փոփոխվեն. հիմա արդեն կան կարծիքներ, որ պետությունն ինքն է կրում իր անունից կայացված դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայելու գործընթացը նախաձեռնելու պարտականությունը, հաշվի առնելով իր (պետության) պատասխանատվությունը այդ ակտի հիմքում ընկած օրենքի հակասահմանադրականության համար, կամ այն բանի համար, որ օրենքը կիրառված է եղել դրա սահմանադրաիրավական բովանդակությանը հակասող իմաստով:

հետ առնչվող գործին մասնակցած շահագրգռված անձինք (բացառությամբ քրեական հետապնդման մարմինների), Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազն ու նրա տեղակալները:

Քրեական գործերով կայացված դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայման համար ներկայացվող բողոքների բովանդակությանը առաջադրվող պարտադիր պահանջները ներկայացված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.7-րդ հոդվածում:

Խնդիր. ընթերցողին առաջարկվում է վերլուծել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցը: Եթե ընթերցողը գա համոզման, որ կարելի է վիճարկել այդ նորմի սահմանադրականությունը, ապա առաջարկվում է կազմել համապատասխան դիմում ՀՀ Սահմանադրական դատարան: Դիմումը կազմվում է՝ ելնելով նրանից, որ վստահորդի վերաբերյալ քրեական գործն անցել է դատական բոլոր ատյաններով և նա վերջնականապես մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ:

Մաս 2. Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող դիմումների մասին

Ինչպես հայտնի է, Եվրոպական դատարան դիմումը կարող է ներկայացվել միայն այն բանից հետո, երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, և **վեց ամսվա ընթացքում՝** սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը (Եվրոպական Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետ):

Գործնականում հաճախ են պատահում իրավիճակներ, երբ Եվրոպական Դատարան դիմելու որոշումը մեր վստահորդների մոտ հասունանում է, երբ ներպետական վերջնական որոշումը կայացնելուց հետո անցել է բավականին ժամանակ: Երբեմն Եվրոպական Դատարանի գանգատ կազմելու համար մեզ դիմում են՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված 6 ամսվա ժամկետը լրանալուց մի քանի օր առաջ, համարելով, որ մի քանի օրը բավարար է փաստաբանին՝ գանգատը կազմելու համար: Ինչպե՞ս վարվել նման դեպքերում: Նման դեպքերում խորհուրդ կտայինք³¹ կազմել հաղորդագրություն, որում ամփոփ ձևով նկարագրել հետագայում Ձեր կողմից ներկայացվելիք գանգատի էությունը: Այս խորհուրդը բխում է Եվրոպական Դատարանի Կանոնակարգի 47-րդ կանոնի 5-րդ կետի, համաձայն որի՝ «Ըստ ընդհանուր կանոնի, գանգատի ներկայացման ամսաթիվ է համարվում դիմումատուի առաջին հաղորդագրության ամսաթիվը, որտեղ թեև համառոտ, շարադրված է գանգատի առարկան:

³¹ Խոսքը՝ մինչև 01.01.2014թ. ուղարկվող հաղորդագրությունների մասին է: Այդ ամսաթվից հետո նախնական հաղորդագրությունների հետ կապված կանոնը փոխվելու է:

Այնուհանդերձ, Դատարանը կարող է որոշում ընդունել՝ հանձնման ամսաթիվ համարել մեկ այլ ամսաթիվ:»:

Ստանալով այդ նամակը, Եվրոպական Դատարանի քարտուղարությունը գրանցում է այն որպես գործ և Ձեզ է առաքելու նամակ, որտեղ նշվելու է այդ գործի համարն ու անունը, տրամադրվելու է դիմումի (գանգատի) չլրացված ձևաթերթ, առաջարկվելու է պատշաճ ձևով լրացնել այն, ինչպես նաև՝ սահմանելու է ժամկետ՝ լրացված ձևաթերթն ու բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Եվրոպական Դատարանին ուղարկելու համար: Քարտուղարության նամակին կցված են լինելու նաև՝ փաստաբանին տրվելիք լիազորագրի ձևաթերթը, գծիկավոր կողով պիտակներ, որոնք յուրաքանչյուր անգամ պետք է փակցվեն Ձեր կողմից Դատարան ուղարկված փաստաթղթերի առաջին էջի վերևի աջ անկյունում: Փաթեթում լինելու է նաև Եվրոպական Դատարան դիմելու կարգը և առանձնահատկությունները բացատրող փաստաթուղթ:

Սակայն հիմնականում (երբ գանգատը գրելու բավարար ժամանակ ունենք) մենք գանգատները ներկայացնում ենք՝ առանց նախնական հաղորդագրության, անմիջապես լրացնելով ձևաթերթը:

Ուշադրություն. Եվրոպական Դատարանի Կանոնակարգում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնք ուժի մեջ կմտնեն 01.01.2014 թվականից: Ըստ այդ փոփոխությունների՝ գանգատը Դատարան ուղարկելու ժամկետ է համարվելու լրացված ձևաթերթը Դատարան ուղարկելու ամսաթիվը: Նոր կանոններով նաև որոշակի փոփոխություններ են մտցվում ձևաթերթի բովանդակության մեջ. դրանից վերացվելու են դիմողի սեռն ու զբաղմունքը լրացնելու պահանջ պարունակող կետերը, ավելանալու են իրավաբանական անձ հանդիսացող դիմողներին վերաբերող պահանջներ՝ նրանք պարտավոր են լինելու գանգատի ձևաթերթում մատնանշել իրենց լրիվ անվանումը, ստեղծման կամ գրանցման ամսաթիվը, գրանցման համարը, իրավաբանական հասցեն, ինչպես նաև՝ դիմողի ներկայացուցչի էլեկտրոնային փոստի հասցեն: Բացի այդ, նոր կանոններով պահանջվելու է, որպեսզի գործի փաստերի, խախտումների հիմնավորումների և վնասի հատուցման պահանջի համապատասխանությունն ընդունելիության չափանիշներին ձևաթղթում շարադրված լինեն այնպես, որպեսզի հնարավորություն տակ Դատարանին որոշելու գանգատի առարկան ու էությունը՝ առանց որևէ այլ փաստաթղթի օգնության դիմելու: Դրա հետ մեկտեղ, դիմողն իրավունք կունենա մանրամասնելու իր կողմից ներկայացված փաստերն ու հիմնավորումները՝ գանգատին կցված հավելվածում, որի ծավալը, սակայն, չպետք է գերազանցի 20 էջը: Գանգատին պետք է կցված լինեն գանգատում մատնանշված փաստերի, Կոնվենցիայի խախտումների և դիմողի կողմից ներպետական պաշտպանության միջոցների սպառման մասին վկայող փաստաթղթերի, ինչպես նաև՝ դատական որոշումների պատճենները: Բացի այդ, եթե գանգատը ներկայացվելու է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է կցված լինի նրան տրված լիազորագրի բնօրինակը: Եթե գանգատը չհամապատասխանի Կանոնակարգի 47-րդ կանոնին (նոր խմբագրությամբ), ապա այն քննության չի առնվելու Եվրոպական Դատարանի կողմից, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմողը պատշաճ ձևով կհիմնավորի, թե ինչու՞ իր գանգատը չի համապատասխանում ներկայացվող պահանջներին:

Եվրոպական Գատարանը գանգատները ընդունում է միայն փոստով (ոչ հեռախոսով): Եթե դիմումը ներկայացվում է էլեկտրոնային փոստի կամ ֆաքսի միջոցով, ապա դրա բնագիրը պետք է ուղարկվի նաև հասարակ փոստով: Գործը բանավոր ներկայացնելու համար անձամբ Ստրասբուրգ գնալու անհրաժեշտություն չկա: Գանգատների վերաբերյալ ամբողջ նամակագրությունը պետք է ուղարկվի հետևյալ հասցեով.

The Registrar

European Court of Human Rights

Council of Europe

F-67075 STRASBOURG CEDEX

France – Ֆրանսիա

- Ո՞վ կարող է անհատական գանգատ ներկայացնել Եվրոպական Գատարան.

Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, այդ թվում՝ ինչպես պատասխանող պետության քաղաքացիները, այնպես էլ՝ այլ պետության քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող կամ երկքաղաքացիություն ունեցող անձինք: Ընդ որում, ֆիզիկական անձինք կարող են անհատական գանգատ ներկայացնել՝ անկախ իրենց չափահաս և գործունակ լինելու հանգամանքից:

- Ու՞մ դեմ.

Եվրոպայի Խորհրդի անդամ պետության դեմ, որը վավերացրել է Եվրոպական Կոնվենցիան և կից Արձանագրությունները:

- Ե՞րբ.

երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, և վեց ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը: Վեցամսյա ժամկետը հաշվարկվում է հասարակ բողոքարկման կարգով կայացրած վերջնական դատական որոշման մասին դիմողին կամ նրա փաստաբանին տեղեկացնելու օրվանից: Հայաստանի Հանրապետության դեպքում ներպետական միջոցների սպառումը, որպես կանոն, նշանակում է բողոքարկում մինչև վճռաբեկ դատարան: Այս կանոնը կարող է չպահպանվել միայն այն դեպքում, եթե ներպետական պաշտպանության միջոցները արդյունավետ չեն, սակայն նման դեպքում դիմողն ինքը պետք է ապացուցի, որ ներպետական պաշտպանության միջոցները, որոնց ինքը չի դիմել՝ կլինեին անարդյունավետ:

- Դիմումի բովանդակությանը վերաբերող չափանիշները.

Դիմումը պետք է վերաբերի միայն այն իրավունքներին և ազատություններին, որոնք պաշտպանվում են Եվրոպական Կոնվենցիայով և դրա Արձանագրություններով: Որպեսզի գանգատը չճանաչվի անընդունելի՝ ակնհայտ անհիմն լինելու պատճառաբանությամբ (տես՝ Եվրոպական Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետը), ցանկալի է տարանջատել փաստերի շարադրանքը և խախտումների վերաբերյալ հիմնավորումները, փաստերը շարադրել անկողմնակալ, հստակ և ժամանակագրական

հերթականությամբ, ամեն փաստ հիմնավորել գանգատին կցված համապատասխան ապացույցով, գանգատի փաստարկները հնարավորինս հիմնավորել Եվրոպական Գատարանի նախադեպերով:

- Գանգատ ներկայացնելու իրավունքը չարաշահելու չափանիշը.

Ընդհանուր առմամբ արգելված են վիրավորական արտահայտությունները պատասխանող պետության, դրա պաշտոնատար անձանց կամ ներպետական դատարանների հասցեին:

- Անանունության չափանիշը.

Գանգատը չի կարող լինել անանուն, թեև դիմողը կարող է՝ բերելով համապատասխան հիմնավորումներ միջնորդել, որպեսզի իր անունը չհրապարակվի:

- Կրկնակիության չափանիշը.

Գանգատը չի կարող ընդունելի ճանաչվել, եթե նույնանման գանգատ (նույն դիմողի կողմից, նույն առարկայի վերաբերյալ) արդեն իսկ հանձնված է եղել միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ:

Եվրոպական դատարան դիմելու հետ կապված ամենակարևոր խորհուրդը, որ հեղինակը կարող է տալ ընթերցողին՝ գանգատի վրա աշխատել³² ոչ թե ներպետական ատյանները սպառելուց հետո, այլ՝ ներպետական ատյաններում գործը վարելու առաջին իսկ օրվանից: Եթե ներպետական ատյաններում աշխատելիս փաստաբանը հաշվի չի առել այդ գործը Եվրոպական դատարան գնալու հեռանկարը, ապա չափազանց մեծ է հավանականությունը, որ այդ ատյանները սպառելուց հետո գործը պարզապես «փչացած» լինի: Չափազանց մեծ է հավանականությունը, որ նման դեպքում գանգատը չհամապատասխանի ընդունելիության չափանիշներից որևիցե մեկին կամ մի քանիսին: Հեղինակի կարծիքով, հենց այդ պատճառով այս գլխում ամփոփված տեղեկությունները կարող են կարևոր լինել ոչ միայն այն փաստաբանների համար, ովքեր ձգտում են մասնագիտանալ Եվրոպական դատարան գանգատ ներկայացնելու հարցում, այլ նաև նրանց, ովքեր գործերը վարում են բացառապես ներպետական ատյաններում:

Այսպիսով, ամփոփենք Եվրոպական դատարան ներկայացվող՝ անհատական գանգատների ընդունելիության չափանիշները՝

1. Գանգատը պետք է ուղղված լինի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան վավերացրած պետության դեմ.
2. Այն իրավունքները և (կամ) ազատությունները, որոնց խախտման (խախտումների) մասին նշվում է գանգատում, պետք է սահմանված լինեն Եվրոպական կոնվենցիայով և (կամ) դրա Արձանագրություններով.
3. Գանգատում մատնանշվող խախտումը (խախտումները) պետք է վերաբերվեն այն ժամանակահատվածին, երբ պատասխանող պետությունն արդեն վավերացրած է եղել Եվրոպական կոնվենցիան (Հայաստանի Հանրապետության համար՝ 26.04.2002թ.).

³² Ոչ թե այդ փուլից սկսած գրել գանգատը, այլ՝ աշխատել ապագա գանգատի վրա:

4. Դիմողը պետք է անձամբ հանդիսանա Կոնվենցիայով սահմանված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման գոհ, բացառությամբ այն դեպքերի, երբ գոհն ինքը չի կարող անձամբ դիմել Եվրոպական դատարան.
5. Պետք է սպառված լինեն ներպետական պաշտպանության արդյունավետ միջոցները.
6. Գանգատը պետք է ներկայացվի ներպետական իրավական պաշտպանության վարույթի վերջին որոշումից հետո 6-ամսյա ընթացքում.
7. Գանգատում վիճարկվող խախտմամբ դիմողին պետք է պատճառված լինի էական վնաս.
8. Գանգատը չպետք է լինի ակնհայտ անհիմն.
9. Գանգատը չպետք է վերաբերվի այնպիսի հարցի, որը Դատարանն արդեն քննել է (սակայն կրկնակի գանգատ չի համարվի նույն առարկայի վերաբերյալ մեկ այլ անձի կողմից ներկայացված գանգատը), ինչպես նաև՝ այնպիսի հարցի, որ արդեն հանձնվել է միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի (բացառությամբ, եթե այն բովանդակում է գործին առնչվող նոր տեղեկություններ).
10. Գանգատը չպետք է հանդիսանա գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում.
11. Գանգատը չպետք է լինի անանուն:

Եթե գանգատն անընդունելի չի ճանաչվում (կամ՝ որոշում է կայացվում գանգատը մասամբ անընդունելի ճանաչելու վերաբերյալ), ապա գանգատի մասին ծանուցվում է պատասխանող պետությունը և նրան առաջարկվում է գրավոր բացատրություններ ներկայացնել գանգատի վերաբերյալ: Այդ մասին Դատարանը գրավոր տեղեկացնում է դիմողին, տրամադրելով նրան նաև իր գանգատի համառոտ շարադրանքը անգլերեն լեզվով, ինչպես նաև՝ այն հարցերը, որոնք առաջադրված են պատասխանող պետության կառավարությանը: Պայմանականորեն անվանենք սա երկրորդ փուլ:

Մեծամասամբ Դատարանի կողմից կիրառվում է գործերի քննության գրավոր ընթացակարգ, իսկ բանավոր ընթացակարգը կիրառվում է որպես բացառություն, եթե Դատարանը, գործի հանգամանքները պարզելու համար, նպատակահարմար է համարում բանավոր լսումների ընթացքում անմիջականորեն հարցադրումներ անել կողմերին: Եթե որոշում է կայացվում բանավոր լսումների մասին, որպես կանոն, կողմերը լսումների օրվա և ժամի մասին ծանուցվում են երկու ամիս առաջ: Բանավոր լսումների վերաբերյալ ծանուցման հետ մեկտեղ կողմին առաջադրվում են այն հարցերը, որոնք առաջադրվելու են բանավոր քննության ժամանակ, ինչպես նաև՝ առաջարկվում է դատարան ներկայացնել այն անձանց ցուցակը, ովքեր մասնակցելու են լսումներին, հայտնել, թե ինչ լեզվով են կողմերը մասնակցելու լսումներին, ներկայացնելու լրացուցիչ փաստաթղթեր, ինչպես նաև՝ ներկայացնել իրենց ելույթների գրավոր տարբերակը: Դիմողին նաև հնարավորություն է տրվում հայցել Դատարանի նյութական օգնությունը՝ բանավոր լսումներին մասնակցելու համար:

Գանգատում (V-րդ մաս) մենք, պահանջելով ճանաչել պատասխանող պետության կողմից Կոնվենցիայի որևէ հոդվածի խախտում, նշում ենք նաև արդարացի փոխհատուցման վերաբերյալ պահանջի չափը, չբերելով սակայն այդ գումարի չափի վերաբերյալ որևէ հիմնավորում: Գումարի չափը

վերջնականապես ճշտվում է և հիմնավորումները ներկայացվում են միայն երկրորդ փուլում: Դատարանի քարտուղարությունը Ձեզ կառաջարկի ներկայացնել այդպիսի հիմնավորումներ ու կսահմանի դրանք ներկայացնելու համար վերջնաժամկետ: Թե ինչպես պետք է այդ պահանջը ներկայացվի և հիմնավորվի՝ սահմանված է Կանոնագրքի 60-րդ կանոնի 2-րդ կետում՝ «Առաջադրվող բոլոր պահանջները ներկայացվում են առանձին կետերով մանրամասնված, հաստատող համապատասխան փաստաթղթերի կամ վճարման անդորրագրերի հետ միասին, հակառակ դեպքում Պալատը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժել պահանջների բավարարումը»: Այնուհանդերձ, քարտուղարությունը Ձեզ կառաքի նաև համապատասխան ուղեցույց, որում նկարագրված են արդարացի փոխհատուցման պահանջի հիմնավորման հետ կապված անհրաժեշտ մանրամասները:

Ինչպես արդեն ասվեց, եթե գանգատն անընդունելի չի ճանաչվել, ապա գանգատի մասին ծանուցվում է պատասխանող պետությունը, որին առաջարկվում է գրավոր բացատրություններ ներկայացնել ինչպես գանգատի ընդունելիության, այնպես էլ՝ ըստ էության: Բացատրություններ ներկայացնելու համար Կառավարությանը տրամադրվում է որոշակի ժամկետ: Կառավարությունն առաջարկվում է իր բացատրություններում անդրադառնում և գանգատին ըստ էության, և՛ դրա ընդունելիության վերաբերյալ հարցերին: Այդ ամենի մասին տեղյակ է պահվում նաև դիմողը, որին առաքվում է կառավարությանն ուղարկված հարցադրումների օրինակը:

Ստանալով Կառավարության բացատրությունները (առարկությունները), Եվրոպական Դատարանը այն ուղարկում է դիմողին, վերջինիս համար սահմանելով դրա վերաբերյալ առարկություններ ներկայացնելու **վերջնաժամկետ**: Այս փուլում ամբողջ գրագրությունն արդեն վարվում է անգլերեն կամ ֆրանսերեն (Հայաստանից ներկայացվող գանգատների վերաբերյալ սովորաբար անգլերեն): Ստանալով Եվրոպական Դատարանից Կառավարության առարկությունների օրինակը, դիմողի փաստաբանը պետք է սահմանված ժամկետում նախապատրաստի և Դատարան ուղարկի իր առարկությունները: Չճանաչաք ուղեկցական գրության վերևի աջ անկյունում փակցնել Դատարանի քարտուղարությունից ուղարկված գծիկավոր կողով պիտակներից մեկը:

Բարեկամական կարգավորման մասին. գանգատը կառավարությանն առաքելու հետ մեկտեղ Պալատի քարտուղարն առաջարկում է քննարկել բարեկամական կարգավորման գալու հարցը: Պալատը ձեռնարկում է ցանկացած քայլ, որն անհրաժեշտ է համարում նման կարգավորումը հեշտացնելու համար: Ըստ ՄԻԵԴ Կանոնակարգի 60-րդ կանոնի 2-րդ կետի, բարեկամական կարգավորման վերաբերյալ կողմերի բանակցությունները խորհրդապահական են և չեն խոչընդոտում գործի քննության ժամանակ կողմերի բերած փաստարկներին: Բարեկամական կարգավորում ապահովելու փորձի շրջանակներում կատարված ոչ մի գրավոր կամ բանավոր հաղորդում, ինչպես նաև ոչ մի առաջարկ չի կարող վկայակոչվել կամ հիմք ընդունվել: Պալատը, հավաստիանալով, որ կարգավորումը ձեռք է բերվել մարդու՝ Եվրոպական Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով ճանաչված իրավունքների նկատմամբ հարգանքի հիման վրա, տվյալ գործը հանում է ցուցակից:

Եվրոպական Դատարանի վճիռը. գործի ըստ էության քննության արդյունքում Եվրոպական Դատարանի Պալատը, Դատարանի անունից, կայացնում է **վճիռ**: Վճռի բովանդակությանն առաջադրվող պահանջները շարադրված են ՄԻԵԳ Կանոնակարգի 74-րդ կանոնում: Գործի քննությանը մասնակից յուրաքանչյուր դատավոր իրավունք ունի վճռին կցել կամ հատուկ կարծիք, որի հիմնավորումները համընկնում են կամ չեն համընկնում վճռին, կամ պարզապես վճռին համաձայն չլինելու մասին հայտարարություն:

Եթե Պալատը գտնում է, որ տեղի է ունեցել Եվրոպական Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, նա նույն վճռով որոշում է արդարացի փոխհատուցման հարցը, եթե այդ հարցը պատրաստ է լուծման համար: Եթե այդ հարցը լուծման համար պատրաստ չէ, Պալատն ամբողջությամբ կամ մասնակիորեն հետաձգում է դրա քննությունը և նշանակում լրացուցիչ վարույթ:

Վարույթը Մեծ պալատում. ՄԻԵԳ Կանոնակարգի 74-րդ կանոնին համապատասխան, Պալատներում վարույթը կարգավորող ցանկացած դրույթ *mutatis mutandis* կիրառելի է Մեծ պալատում վարույթի նկատմամբ:

Եթե պալատում քննության առնվող գործը հանգեցնում է Եվրոպական Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն առնչվող լուրջ հարցի, կամ եթե Պալատում որևէ հարցի լուծումը կարող է հակասել Եվրոպական Դատարանի՝ ավելի վաղ կայացրած վճռին, Պալատը կարող է, նախքան իր վճիռը կայացնելը, ցանկացած ժամանակ ընդդատությունը զիջել Մեծ պալատին, եթե կողմերից (որոնց նախապես ծանուցում են այդ մտադրության մասին) մեկը **մեկամսյա ժամկետում պատշաճորեն հիմնավորված** առարկություններ չի ներկայացնում: Առարկությունը, որը չի բավարարում այդ պահանջին, Պալատի կողմից համարվում է անվավեր:

Բացի այդ, Կանոնակարգի 73-րդ կանոնին համապատասխան, Պալատի վճռի կայացման օրվանից երեք ամսվա ընթացքում, գործով ցանկացած կողմ բացառիկ դեպքում կարող է Դատարանի քարտուղարություն հանձնել գործը Մեծ պալատի քննությանն ուղարկելու գրավոր խնդրանք: Խնդրանքում կողմը նշում է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանը կամ կիրառմանն առնչվող այն լուրջ հարցը, որով, նրա կարծիքով, հիմնավորվում է գործի քննությունը Մեծ պալատի կողմից: Խնդրանքը ուսումնասիրվում է Մեծ պալատի հինգ անդամների կողմից կազմված հանձնախմբի կողմից՝ բացառապես ըստ գործում առկա նյութերի: Խնդրանքը բավարարվում է միայն այն դեպքում, երբ հանձնախումբը գտնում է, որ գործն իրոք առնչվում է նման հարցի: Խնդրանքի մերժումը հիմնավորում չի պահանջում:

Եթե հանձնախումբը բավարարում է խնդրանքը, Մեծ պալատը հարցը լուծում է **վճիռ** կայացնելով:

Եվրոպական Դատարանի վճիռների կատարումը. Մեծ պալատի վճիռը վերջնական է (մեր տերմինաբանությամբ՝ ուժի մեջ է մտնում կայացման պահից): Պալատի վճիռը դառնում է վերջնական, եթե կողմերը հայտարարում են, որ չեն պահանջի գործի հանձնումը Մեծ պալատին, կամ՝ վճռի կայացումից հետո երեք ամսվա ընթացքում չի պահանջվում գործի հանձնում Մեծ պալատին, կամ՝ Մեծ պալատի հանձնախումբը մերժում է գործի հանձնման պահանջը:

Սկսած այդ պահից վճիռը (եթե ճանաչվել է Եվրոպական Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների դրույթների խախտումներ) ենթակա է կատարման: Վճռի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեն: Եթե վերջինս գտնի, որ որևէ վճռի կատարման նկատմամբ վերահսկողությանը խոչընդոտում է այդ վճռի մեկնաբանման դժվարությունը, ապա կարող է դիմել Դատարանին, որպեսզի նա որոշում կայացնի այդ մեկնաբանության հարցի վերաբերյալ:

Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ վճռի կատարումը չի սահմանափակվում դրանով սահմանված արդարացի փոխհատուցման գումարը դիմողին վճարելով (որը պետք է կատարվի երեք ամսվա ընթացքում): Վճռի պատշաճ կատարումն իր մեջ ներառում է նաև դրա թարգմանությունը անդամ-պետության պաշտոնական լեզվով, ինչպես նաև, որքանով որ դա հնարավոր է, մինչև խախտումը եղած վիճակի վերականգնումը (*restitutio in integrum*):

Խնդիր. ընթերցողին առաջարկվում է վերլուծել այսպիսի իրավիճակ. առաջին ատյանի դատարանում ընթացող դատավարության ժամանակ Ձեր պաշտպանյալին պահել են երկաթյա ճաղամանդակի մեջ: Դուք միջնորդել եք հանել նրան վանդակից և թույլ տալ զբաղեցնել Ձեր կողքին գտնվող նստատեղը, սակայն դատարանը մերժել է, պատճառաբանելով, որ Ձեր պաշտպանյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված կալանավորումը, իսկ անվտանգության պահանջներն ապահովելու համար դատարանի դահլիճում բոլոր կալանավորված ամբաստանյալները պետք է պահվեն վանդակի մեջ: Ընթերցողին առաջարկվում է վերլուծել՝ կա՞րողյոք Եվրոպական կոնվենցիայի խախտում, եթե այո, ապա՝ ո՞ր հոդվածների: Ո՞ր պահին կարելի է դիմել Եվրոպական դատարան այս գործով, ներպետական ի՞նչ պաշտպանության միջոցներ սպառելուց հետո է սկսվելու վեցամսյա ժամկետի հաշվարկը:

Խնդրային աշխատանքների ղեպքում խմբերից մեկին առաջարկվում է կազմել զանգատ, մյուս խմբին՝ Կառավարության առարկությունները զանգատի դեմ, հատկապես ուշադրություն դարձնելով ընդունելիության հարցին:

Խնդիր դատախառի համար.

Վարուժան Արամյանի Մելքոնյանը մեղադրվում է այն բանի համար, որ նա, աշխատելով «Երևան» ՍՊ ընկերությունում որպես տնօրեն, հանդիսանալով կազմակերպության ծառայող, իր կարգադրիչ լիազորություններն օգտագործելով այդ կազմակերպության շահերին հակառակ և ընկերության բաժնետերեր Յուրիկ Դարիբջանյանին և Մերուժան Հակոբյանին վնաս պատճառելու նպատակով, 24.09.2007 թվականին կազմակերպության համար ակնհայտ անշահավետ գործարքներ կատարելով, «Երևան» ՍՊ ընկերությանը պատկանող 5.800.000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունեցող «Ձիլ» մակնիշի xxxx պետհամարանիշի ավտոմեքենան շուկայականից ակնհայտ ցածր՝ հաշվեկշռային արժեքով, ընդամենը 236.000 ՀՀ դրամով վաճառել է «Մ Պլյուս» ՍՊ ընկերությանը, իսկ «Երևան» ՍՊ ընկերությանը պատկանող, 2.000.000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունեցող «Օպել Վեկտրա» մակնիշի

xxxxxx պետհամարանիշի ավտոմեքենան շուկայականից ակնհայտ ցածր հաշվեկշռային արժեքով՝ ընդամենը 64.000 ՀՀ դրամով վաճառել է Էջմիածնի Այգեշատ գյուղի բնակիչ Ռոստոմ Խառատյանին, որոնց արդյունքում «Երևան» ՍՊ ընկերությանը պատկանող՝ 7.800.000 ՀՀ դրամ շուկայական արժողությամբ թվով երկու տրանսպորտային միջոցները վաճառել է շուկայականից ակնհայտ ցածր արժեքով՝ ընդամենը 300.800 ՀՀ դրամով, որի արդյունքում «Երևան» ՍՊ ընկերության 90 տոկոս բաժնետեր Յուրիկ Ղարիբջանյանին և 10 տոկոս բաժնետեր Մերուժան Հակոբյանին պատճառել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 7.499.200 ՀՀ դրամի նյութական վնաս, առաջացրել ծանր հետևանքներ:

Վերը նշված հիմնավորմամբ Վարուժան Մելքոնյանին 16.07.2011 թվականին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 214 հոդվածի 2-րդ մասով:

Քրեական գործը հարուցվել է 10.01.2009 թվականին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդված.

Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը

1. Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից իրենց կարգադրիչ կամ այլ լիազորություններն այդ կազմակերպության շահերին հակառակ և իր կամ ուրիշ անձանց օգտին օգտագործելու կամ առավելություններ ձեռք բերելու կամ այլ անձանց վնաս պատճառելու նպատակով օգտագործելը, եթե անձանց, կազմակերպությունների կամ պետության իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս է պատճառվել՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որն առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

26.05.2011 թվականին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ որոշումը, համաձայն որի 6-րդ կետի՝ այն գործերով վարույթները, որոնցով անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով ազատազրկում, ենթակա են կարճման:

Գործով տուժող են ճանաչված Յուրիկ Ղարիբջանյանը և Մերուժան Հակոբյանը: Տուժող Մերուժան Հակոբյանը բազմիցս հայտարարել է, որ Վարուժան Մելքոնյանն իրեն որևէ վնաս չի պատճառել:

Խնդիր. բաժանվել երեք խմբի, որոնցից մեկը կներկայացնի մեղադրողին, մյուսը՝ տուժող Յուրիկ Ղարիբջանյանին, երրորդը՝ պաշտպաններին ու անբաստանյալին: Պաշտպանության կողմը պետք է գտնի այս գործով պաշտպանություն իրականացնելու երեք կամ չորս տարբեր ռազմավարություններ, քննարկի դրանցից ո՞րն է (որո՞նք է) նպատակահարմար կիրառել, մշակի այդ ռազմավարական նպատակին (նպատակներին) հասնելու համար անհրաժեշտ մարտավարական քայլերը: Անցկացնել դատախազ: